

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ՄԱՐԿԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 121-124

№ 121-124

ՅԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՅ

Գ Ր Ա Ն Ե Ր

Հ Ա Յ Կ Ա Ս Տ Ա Ն Ի  
Մ Ա Ր Կ Ա Կ Ա Ն  
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն  
1933



Գրքի դրոշմի չի պրոցես

№ 121-124

№ 121-124

ՄԱՐՏ 1961

891.99

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

2-28

Պ Ո Ե Մ Ն Ե Ր

A 5866 / 24313

391



Պատ. խմբ. Եղ. Չոփուրյան  
Տեկ. խմբ. Տ. Խաչվանցյան  
Արքագրիչ Վ. Մանուկյան  
\*

Գեոհրառի տպարան.  
Գլավիտ 352. Դատվեր 1389.  
Հրատ. 3588. Տիրաժ 10.000.  
\*

ԱՄԲՈՒՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ

I

Հեռու, մոտիկ ընկերներին, — աշխարհներին,  
արևներին, —

Հրանման հոգիներին: —

Բողոք նրանց, ում վոր հոգին վառվում է վառ, —

Բողոք նրանց հոգիներին արևավառ: —

Կյանքի, մահի այս ամենի աղջամուղջում՝

Վողջակիզվող հոգիներին — վողջուճյն, վողջուճյն: —

II

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն:

Արևը, բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում:

Դաշտի վրա փռվել էր մուժ արյունամած՝

Թուճյն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած:

Արևը, թե՛ մայր էր մտնում արևմուտքում —

Ու արյուն էր դաշտի վրա, թուճյն էր թքում:

Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա —

Ու արնավառ փայլ էր փռում դաշտի վրա:

Ու արտերը, ալեծածան, վառվել էյին

Արեգակի կարմիր փայլով իրիկնային: —

Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝

Հրակարմիր տարածվել եր նրանց առաջ: —  
 Ծով եր կարծես, վոր սկիզբ ու սահման չունի —  
 Ծով եր կարծես՝ մշուշի մեջ իրիկունի: —

## III

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝  
 Այգ հին դաշտում կռվում եյին ամբոխները  
խելագարված:

Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու  
մոտ՝

Յեկել եյին նրանք նորից՝ հուսավառված ու  
կրակոտ:

Ով քաղաքից եր հեռացել — նա թողել եր մշուշը ծեր, —  
 Մշուշը, վոր կյանքի վրա մխաշաղախ ամպ եր  
դարձել:

Ով յեկել եր գյուղից հեռու — նա թողել եր հողը  
խոնավ,

Վորի վրա կյանքը հլու վնչ մի վոսկի հասկ չծնավ:  
 Ով յեկել եր ստեպներից, նա թողել եր անծայրածիր  
 Լայնությունը հորիզոնի, վոր իր համար բանա եր  
դարձել:

Ով քաղաքից եր հեռավոր, ուր մառախուղ եր  
անորոշ՝

Նա բերել եր թռքախտավոր սիրտը, վորպես կարմիր  
դրոշ: —

Ով յեկել եր, թողած հեռուն անծայրածիր մութը  
գյուղի՝

Բերել եր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:  
 Ով յեկել եր ստեպներից, ուր ապրում եր վորպես  
գերի —

Բերել եր իր լուրթ աչքերում լայնությունը  
 ստեպների...  
 Ըմբոստացած, խելագարված, շտանելով հին կյանքը ել՝  
 Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կովի եյին  
 յելել:

## IV

Մայր եր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով  
 վառված:—  
 Ու յերգելով կովում եյին ամբոխները խելագարված:—  
 Դաշտն եր դեմը՝ փռված եր նա շառագունված ու  
 արևուն,—  
 Ու հեռում, ճամբի վրա հսկա քաղաքն եր յերևում:—  
 Ծո՛ւյլ նաղանքով, իրիկնային արևի տակ անփուլթ  
 փռված՝  
 Պսպղում եր քաղաքը հին՝ հազարերանդ մի  
 զանգըված:  
 Հեռ՛ու, հեռ՛ու, անծայր ու լայն տարածվել եր  
 քաղաքը հին—  
 Լողանում եր կարծես մարմանդ մշուշի մեջ  
 իրիկնային:  
 Հաղթ շենքերը, բարձր ցցված, կարծես կախված  
 կարմիր ողում՝  
 Հետըզհետե մթնում եյին, անգունանում ու աղոտում:  
 Հեռու հրով միայն վառված պատուհանները ապակի  
 Փայլում եյին արյունամած վերջին հրին արեգակի.  
 Արևի դեմ փայլում եյին հրաբոսոր՝  
 Բռնկվել եր նրանց սրտում տագնապը սուր...  
 Յեվ յերկընքի սիրաը մխված լքեռների պես  
 արնաքամ՝

Փայլում եյին արյունամած ծխնելույզներն  
հսկայական:  
 Ծուխ չէր յելնում նրանց փողից՝ չեյին փնջում  
յերկինքն ի վեր:  
 Չեր կարծրանում նրանց ծուխից իրիկնային  
յերկինքը ել:—  
 Լոկ մշուշը իրիկնային թանձրանում եր հետզհետե—  
 Ու մշուշում կորչում եյին ծխնելույզները յերկաթե:—

## V.

Իսկ քաղաքից դեպի հարավ՝ անատեսիլ ու հաղթական՝  
 Յերևում եր յերկաթուղու կայարանը հսկայական:  
 Լսվում եր մերթ շոգեկառքի սուլոցը սուր հեռու  
մուժում—  
 Մորթում եյին կարծես այնտեղ խելազարված մի  
անասուն...—  
 Ծչում եր սուր, հուսակտուր, ու հուսահատ ձայնը  
նրա,  
 Վորպես անդարձ մահի մի լուր տարածվում եր  
դաշտի վրա:—  
 Յրված եր նա, կայարանը, հսկա ու հաղթ, նրանց  
առաջ:—  
 Ու հանգույցից կայարանի, դաշտովը մեկ  
լայնատարած՝  
 Դեպի հյուսիս, դեպի հարավ, ու արևմուտք, ու  
արևելք—  
 Ուղիները յերկաթագիծ ձգվել եյին ամենուրեք:—  
 Յերակների պես յերկաթե քաղաքամոտ կայարանից  
 Հեռո՛ւ, հեռո՛ւ ձգվել եյին ուղիները յերկաթագիծ:

Յերակների պես յերկաթե՝ ամուր գրկած կուրծքը  
հողի՝

Սեղմըլելով հետզհետե՝ փախչում եյին գաղտագողի...

Ու ցցված եր ուղիների խաչակնքման սեղմ  
հանգուցում—

Կայարանը, վորպես մի հարց, վորպես հսկա մի  
քարացում:

Ուղիների ճամբամիջում հանգուց եր նա կարծես  
կապված—

Ու անդիջում կուլում եյին ամբոխները խելագարված  
կարծես նետված մի հաղթ ձեռքով՝ աշխարհային

կամքին հլու՝  
Գնճւմ եյին կովճով, յերգճով կայարանը գրավելու:—

## VI

Կուլում եյին: Սուրում եր մի իրիկնային մարմանդ  
քամի:

Դեմը քաղաքն եր տարածվել՝ հազարամյա մի  
թշնամի:

Սֆինքսի պես հսկայական, շեկ ծծերը դրած հողին՝  
նա կտրել եր արեակամ ամբոխների կարմիր ուղին:—

Ու կայարանը՝ հաղթանդամ, իրիկնային կարմիր  
մութում,

Հաղթ նստել եր նրա առաջ, վորպես նրան հսկող մի  
շուն:

Հաղթ նստել եր նրա առաջ ու տիրուհու կամքին  
գերի՝

Յերթն եր հսկում գետնատարած, յերկաթագիծ  
ուղիների:

Ու դժերի մոտ յերկաթե, դեպի հյուսիս, դեպի առաջ՝

Զգվել էյին ալիքածև խրամատներ գետնատարած:  
 Թշնամին եր պահվել նրանց ալիքածև գետնափորում  
 Ու մատներով արյունոտած դեմը փռված գաշտն եր  
 փորում:  
 Մտել եր ջերմ կուրծքը հողին, հողի սրտում զարան  
 մտած՝  
 Կրակում եր զաղտագողի, նենգ ձեռքերով արյունոտած:  
 Կովում էյին՝ մոտենալով, մոտենալով հետզհետե:  
 Պայթում էյին զըրնդալով հրանոթները յերկաթե:—  
 Յերգ եր կարծես կռիվը այդ, վոր զնգում եր  
 մայրամուտում:  
 Նայես՝ թռավ մի հրանոթ ու թունդ պայթեց  
 խրամատում...

## VII

Կովում էյին, ու կովելով անցնում էյին նրանք  
 առաջ:  
 Ու գաշտերում իրիկնային մահն եր քրքջում  
 համատարած:  
 Յերգում եր նա՝ յերգը խառնած հրանոթի  
 զընգունին,—  
 Անցնում էյին նրանք առաջ ու կրակված կովում  
 էյին:  
 Յերգ եր սիրաը ամեն մեկի, յերգ եր հայացքը կրակոտ.  
 Վառվում եր սիրաը ամենքի, վորպես կարմիր մի  
 առավոտ:  
 Յերգ եր կարծես արևը հին՝ իրիկնային լույսով  
 վառված—  
 Յե՛կ յերգելով կովում էյին ամբոխները խելագարված...

## VIII

Յեկ յերգում եր մեկը՝ հզոր, հուժկու ձայնով  
անեղագոչ,  
 Գո՛վքն եր յերգում կուլի յերած, արիացած իր  
ընկերոջ:—  
 Վորպես բազե՝ յերգը նրա սլանում եր հեռե՛ւ,  
հեռե՛ւ—  
 Յեկ յերգելով կուլում եր նա՝ լուսաժայիտ ու  
ահարկու:  
 Յերգում եր նա: Մայր եր մտնում արևը հին՝  
կարմիր քուրա:  
 Յեկ դաշտերում իրիկնային—զանգ եր կարծես ձայնը  
նրա:  
 Զանգ եր կարծես, զանգում եր զիլ, վոր վողջ  
աշխարհը իմանա—  
 Բորբ կարտտով անծայրածիր, կրակելով յերգում  
եր նա:—

## IX

«...Ստեպներից, անտառներից, քաղաքներից հեռու ու  
մոտ—  
 Մենք մեր սիրտն ենք բերել նորից՝ հուսավառված  
ու կրակոտ:  
 Այստեղ հիմա կռիվ ե, մահ, ու աղյամուղջ ե  
անորոշ,—  
 Մենք մեր սիրտն ենք պարզել հիմա—մահի  
հանդեպ՝ կարմիր դրոշ:  
 Արյունաքամ մայր ե մտնում հազարամյա արևը հին.  
 Արյունավառ ժպտում ե մեզ այս աշխարհը իրիկնային».

Ու խնդասիրտ կուվում ենք մենք, յերգ ենք ասում  
 կուվում հիմի-  
 կուրծք ե տվել աշխարհը վողջ՝ հազարամյա մի  
 թշնամի...  
 Բայց անվհատ կուվում ենք մենք, ու մահը՝ սեզ,  
 ժպտում ե մեզ —  
 Շատերս, ախ, պիտի դոհենք սրտերը մեր կարոտակեղի—  
 Անողք ե յերթը այս սեզ, ինչպես կարմիր կարոտը  
 մեր —  
 Կրակեցեք, կրակեցեք, խելագարված իմ ընկերներ...»

## X

...Մայր եր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով  
 վառված:  
 Ու անվհատ կուվում եյին ամբոխները խելագարված:  
 Աչքերի մեջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում — կարմիր  
 կրակ՝  
 Վերջին թափով մի ամրակուռ՝ անզայթ կուվում եյին  
 նրանք:  
 Խենթ յերգելով, կրակելով նրանք անցնում եյին  
 առաջ —  
 Ու թշնամին փախուստ տվեց՝ ահաբեկված ու  
 վտարած:—  
 Մութ եր արգեն, մայր եր մտել արեզակի շողը  
 վերջին,  
 Յերբ գրոհով մի անվեհեր կայարանը գրավեցին...

## XI

Մութ ե հիմա, Գիշերը, խոր, իջել ե վար:  
 Մութ ե հիմա, թանձր խավար:

Յերկաթուղու կայարանում, ուր վոչ մի լույս չկա  
վառված,

Խոնվել են հազարանուն ամբոխները խելագարված: —  
Գիշերի մեջ չեն յերևում հաղթ կամարները

յերկաթե՝  
Լույս չեն վառել կայարանում, վոր թշնամին  
չնկատել:

Սպասում են՝ աչքերն հառած խավարամած  
հեռուներին՝

Մութը իջավ համատարած, մինչ կայարանը  
վերցրին: —

Սպասում են, վոր մինչև լույս գոնե մի քիչ  
հանգստանան

Ու առավոտ դուրս գան նորից ու քաղաքի վրա  
գնան:

Աչքերն հառած թանձր մութին, սրտատրոփ,  
անապաքեն՝

Սպասում են առավոտին, վոր կռիվը շարունակեն:

Մի քիչ առաջ, արյունաքամ, յերբ դեռ դաշտում  
կռվում ելին —

Մոտ եր թվում քաղաքն այնքան յերկաթուղու  
կայարանին...

Յեկան իրենք, կռվով, յերգով գրավեցին կայանը  
մեծ —

Իսկ թշնամին փախուստ տվեց ու քաղաքում  
պատսպարվեց:

Սպասում են իրենք հիմա, վոր մինչև լույս  
հանգստանան —

Ու առավոտ դուրս գան նորից և քաղաքի վրա գնան:

## XII

Ու մթի մեջ հազարամյա, գիշերի մեջ խորը, անհուն՝  
 Խոնավել են նրանք ահա յերկաթուղու կայարանում:  
 Դաշտն ե գեմը, խավարակուռ ձգված ե նա:  
 Զկա մի ձայն, չկա քամի, մութ ե հիմա:  
 Դաշտն ե գեմը՝ անձիբ, անծայր մի զանգված  
խավարամութ,
 Ուր նստել ե անաչք, անլույս, խորհրդավոր կասկածը  
մութ:
 Շնթուկել ե, վորպես մի շուն, ու խավարն ե հսկում  
հիմի, —
 Շնթուկել ե թանձր մուժում, վորպես անասն մի  
թշնամի:
 Մութ նստել ե կասկածը հին ու աչքերով  
խավարամած
 Նայում ե նա կայարանին, վոր կանգնած ե իրա  
դիմաց:
 Շարժվում ե մութը կարծես ու խավարով իբ  
աչքերի —
 Նայում ե նա լուրթ աչքերին խելագարված  
ամբոխների: —
 Ու տազնապով անլռելի, հայացքներով անթարթ  
լարված՝
 Նայում են մութ հեռուներին ամբոխները  
խելագարված:
 Լուրթ աչքերով խորը, ակուր — մութն են դիտում  
նրանք անհուն —
 Ու դժժում ե աղմուկը խուլ գիշերային կայարանում...

## XIII

Հոծ բանակով, հսկայական կայարանի գեմ խոնաված՝  
 Լուրթ աչքերով արևակամ — դաշտն են դիտում

խավարամած:

Մնւթ և գեմը, ու խավարում, վոր բացվել և,  
 վորպես անդունդ՝

Յերևում և հեռո՛ւ-հեռո՛ւն կարմիր լույսով վառվող  
 մի գունդ:

Աչքերի գեմ մթակալված, հայացքների գեմ ակընդետ—  
 Հեռու մթում լույսն այդ վառված գունդ և թվում,  
 կարմիր մի կետ:

Գիշերի մեջ—կարմիր, կարմիր, տազնապալից  
 վառվում և նա՛

Գիշերի մեջ վառվել են, վոր գորքը պատրաստ,  
 արթուն մնա

Անծայրածիր մթում հեռվի կարծես կարմիր գլուխ և  
 շան—

վառել են այն, վորպես կռվի ու տազնապի  
 աղբանշան:

—Քաղաքն և այն հազարամյա, ուր տազնապ ու  
 տենդ կա հիմի:

Պահվել և նա, վորպես վախից խելագարված մի  
 թշնամի:

Ու կրակը այդ կարմրակեղ — ահանշան ու վիթխարի—  
 Մի արնագուլյն կետ և կարծես ուղեղի մեջ խելագարի:  
 Բորնկվել և հույսով հեաին, հոգևարքի տենդով  
 վառված—

Ու նայում են կարմիր կետին ամբոխները  
 խելագարված...

## XIV

Գիշերի դեմ խավարամած, աչքերն հառած կարմիր  
կետին՝

Ամբոխները խելագարված սպասում են առավոտին:  
Ու վառվում ե խավարակուռ հոգիներում նրանց  
անգայթ

Կետը այդ մուգ, վորպես հեռու, հրաբոսոր մի  
ճառագայթ:

Սուր մխվել է նրանց սրտում, վորպես մի թեժ,  
կարմիր բևեռ—

Թույն է լցնում ու բորբոքում ու յերազներ  
աշխարհավեր...

Աղմըկում է նրանց սրտում, մորմոքը հին,  
հազարամյա—

Տենդ է սփռում ու խլրտում նրանց անգայթ սրտում  
հիմա:

Լուրթ աչքերում փայլում է վառ արյունամած մի  
ցանկություն—

Ու աչքերը միլիոնավոր թռչն են թքում, արյուն  
ու թույն:

Բարձրանում է նրանց սրտից տարիների մաղձը աղի—  
Ու վառվում է լուրթ աչքերում՝ արյունալից ու  
կատաղի:

Ու աչքերը արյունամած անթարթ հառած կարմիր  
կետին՝

Ամբոխները խելագարված սպասում են առավոտին:

## XV

...Գիշերի դեմ գիշեր և մութ խավարամած նրանց  
 հողին,  
 Վոր կարոտով մի կրակոտ սպասում և առավոտին:  
 Պավար և մեծ սիրաը նոցա, բայց խավարում  
 անծայրածիր—  
 Յերկինքներ կան կապուտաչյա, հորիզոններ՝  
 անծայր, անմիր:  
 Ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել և գիշերը  
 մութ—  
 Հազար բողբոջ կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ:  
 Նրանց ձգված մկաններում հեմ և նստել խոնավ  
 հողի,—  
 Յեթև ուզեն՝ արևներին նոր տեմպ կըտան ու նոր  
 ուղի...  
 Յեթև ուզեն՝ արեգակներ կշարտեն յերկինքն ի վեր:  
 Յեթև ուզեն՝ վար կըբերեն յերկինքներից  
 արեգակներ...  
 Յեթև ուզեն՝ կամքով արի ու՛ աշխարհի հրով  
 վառված—  
 Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

## XVI

Ու՛ հոսում և գիշերը մութ, մոտենում և առավոտին  
 Հոսում և սպող ու անոգուտ սպասումի ժամը հեաին:  
 Դաշտից անա սուրում և դով, մարմանդ քամին  
 առավոտի—  
 Ու վառվում և վերջին լույսով կրակը այն կարմիր  
 կետի:

Նստրանում և խավարն անա, գունառովում և հեադհետ—  
 Ճեղքում և մութն արևելքում հսկայական, հրե մի թև:  
 ՅՆ. ՅՍ.ԲԵՆՅ. ՊՈՆՍՆԵՐ

Ու սուրում ե հեռուներէց առաւոտովա կիսամթում—  
Մարմանդ, մարմանդ, բուրումնալից, գարնանային  
մի թարմություն:

Շարժւում ե խավարը թեն ու հեռուում խավարամած  
Յերևում ե քաղաքն արդեն՝ մութ, անորոշ մի  
զանգը ված:

Հաղթ շենքերի պատերը հաղթ վորոշում են  
հեադ հետե,

Յերևում են ահա հպարտ ծխներույցները յերկաթե...  
Ու բոլը սրտում ամբոխների թնուդ ե առնում

կարտը վառ,  
Յերկինքներում լուրթ աչքերի վառվում ե տենդը  
հոգևար...

Բորը աչքերով նայում են մեծ, խավարակուռ  
զանգը վածին—

Ու վառվում ե սիրտը նրանց, վորպէս հրդեհ  
արեւնածին...

—Պիտի յերթան առնջ հիմա, պիտի առնեն քաղաքը  
մեծ,

Պիտի թափեն նրա վրա հաղարամյա մաղձը իրենց:  
Քանդեն պիտի ու ալերեն, տեղը վորչի պիտի փոեն—

Հաղարամյա քաղաքը այդ քանդեն պիտի ու  
ալերեն—

Այրեն պիտի, խելագարված պիտի պարեն հրդեհներում,  
Ու կարմրավառ կրակ ու կայծ պիտի փոեն յերկրի

հեռուն—  
Ու մնացած մոխիրը ձիգ պիտի այրեն նրանք նորից,

Վոր կյանքը հին, վորպէս փյունիկ, չբարձրանա  
մոխիրներէց...

Քամո՞ւն տալով մոխիրը այն, վոր տանի ու հետ  
 չբերի—  
 Դեպի հեռո՞ւն պիտի յերթան դեռ չծնված արևների...

## XVII

... Լուսաբացին, յերբ կարմրածուփ հորիզոնում  
 հրաշուշան  
 կարմիր վառվեց արևը բորբ, վորպես կավի  
 ազդանշան,  
 Յերբ բռնկվեց արևեկքում արևը՝ նյր լույսով  
 վառված—

Դճւրս նետվեցին կայարանից ամբոխները  
 խելագարված...

Դեմը դաշան եր անծայրածիր, ուր մշուշ եր  
 արևադուհն,

Ու մշուշում շողիացող, առավոտի մարմանդ միգում,  
 կրկեսի պես մի վիթխարի, խայտաբղետ, խայտանկար—  
 Յեղերքի մոտ ճանապարհի յերևում եր քաղաքը քար...  
 Աչքերն հառած հեռո՞ւ-հեռուն կարմիր վառվող  
 արեգակին՝

Արևավառ հեռուններում նրանք կովում եյին կրկին.  
 Հո՞ծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝  
 Դեպի Արև՛ն եյին գնում ամբոխները խելագարված...

. . . . .  
 . . . . .

ԴԵՊԻ ԱՄԱԳԱՆ

Լցված ե անհուն իմ հոգին հիմա  
Շփոթ յերգերով ու աղմուկներով.  
Լցված ե սիրտը իմ՝ ելեքտրական  
Բորբ հոսանքներով:

Ռադիո-կայան ե իմ հոգին հիմա  
Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդեպ.  
Ու բարձր ե, բարձր ե կայանն իմ հոգու՝  
Մասխսի նման բարձր ե ու հաստատ—  
Հզոր, ահարկու:

Որերում այս վառ, հողմավար, շփոթ—  
Հեռու ու մոտիկ միլիոն սրտերի  
Յերգն ե վիճակվել ինձ յերգել այսոր.  
Իմ բազմամիլիոն, բյուր ընկերների  
Խինդը այսորվա ու թռիչքը մեծ—  
Գալիք որերին նեանլն ե յերգիս  
Վիճակվել այսոր:

Ահն թե ինչու յե յերգս հաղթական,  
Ահն թե ինչու յե իմ ձայնն այսոր  
Հավերժի նման համառ ու հաստատ:

Ահն թե ինչու

Ղեթխարահակա, վորպես Եյֆելյան

Աշտարակը մեծ,  
 Անցած ու գալիք դարերի շեմքին  
 Հզոր, բարձրաբերձ՝  
 Կանգնել եմ ամբողջ հասակովս մեկ  
 Յեվ յերգում եմ յես:  
 Յեվ հոգիս հիմա՝ ապրիտ-կայան՝  
 Իր հրակարմիր յերգն ե ուղարկում  
 Հեռ՛ւ ու հեռ՛ւ,—  
 Բողոք սրտերին, վոր ապրում են, կան  
 Բողոք կողմերում:

Յերգում ե հոգիս, հրեղեն հնչում:  
 Գիտեմ՝ այսօրվա իմ յերգի առաջ—  
 Իմ հոգու կարմիր կայծերի հանդեպ—  
 Ռադիո-կայան ե ամեն մի հոգի,  
 Ո՛ւր ել նա լինի.—  
 Ամեն մի հոգի, վոր ապրում ե, կա  
 Յեվ կրում ե իր թևերի վրա  
 Ն՛սւյն խորհուրդը մեծ, խորհուրդը հսկա  
 Որերի այս վառ,—  
 Այս վառ որերի խորհուրդը սլայծառ:  
 Ամեն մի հոգի,  
 Վոր իր յերկաթե թևերով այսօր  
 Զնգում ե, շաչում—  
 Յեվ փնտռում ե ն՛որ հանգիստ ու որոր  
 Միլիոն թևերի ըմբոստ շառաչում...

Գիտե՞ք, վոր հիմա  
 Այստեղ—Նայիրի իմ յերկրում ավեր  
 Ու հեռու-հեռուն—  
 Կարմիր Մոսկովում,

Տիրեթում զեղին,  
Սան-Ֆրանցիսկոյում, Լոնդոնում հսկա  
Ու Սինգապուրում—  
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում  
Աշխարհը մի նոր յերգող և հղի:

Հէյ, հեռու—մտաիկ  
Հանքահորերում,  
Գործարաններում,  
Լայն ստեպներում ու անտառներում—  
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում,  
Յերկաթի, բրոնզի, հողի ու հանքի  
Յերգող որորված իմ բյուր յեղբայրներ,—  
Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրե,  
Ուժը մեր բոսոր  
Ու վառ բախտը մեր  
Տիեզերական:

Ո՞վ ունի այսօր...

Մենք ենք, վոր նոր ենք, հաղանք ենք ու բյուր:

Յերկաթե հսկա մի դիսկի նման  
Բյուր յեղբայրների կամքը մեր արի,  
Տիեզերական—  
Նեաեւ ենք արդեն թափող վիթխարի  
Դեպի հողմերը դալիք որերի,  
Դեպի—Ապագան...

ԲՐՈՆՁԷ ԹԵՎԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԳԱԼԻՔԻ

Շահում ե աշխարհը, զնգում ե հիմա,  
Շահում ու զնգում են աշխարհի վրա  
Բրոնզե թևերը կարմիր Գալիքի:

Վորպես յերկաթե մի մըրկահավ՝  
Թռչում ե կարմիր մեր կամքը հիմա  
Աշխարհի հեռուն—

Ու շահում ե հաղթ, յերկաթ թևերով  
Հեռու ու մոտիկ ուղամագաշտերում:

Փողփողում ե վառ արևի առաջ  
Մեր կամքը հիմա, վորպես վիթխարի  
Մի կարմիր գրոշ,

Վորի արնագույն, կարմրավառ փայլից  
Հնավանդ, զազիր քաղաքները քար,  
Ցուլերի նման վիթխարահսկա,

Վախից խելագար,

Կանգնում են յեաին վոտքերի վրա,  
Փորում են հողը վոտքերի տակի

Ու սարսափահար

Իրենց վայրենի վանն են մռնչում  
Աշխարհովը մեկ—

Վանիը վայրենի, վոր հնչում ե մեր



Ու հասնում ե այդ ճիչը հուսահատ  
 Լոնդոնից—Փարիզ—Ցեյլոն—Հնդուչին...

Զգվել են ցանցեր  
 Յերկաթե անտես ցանցեր ու ցանցեր  
 Աշխարհում անծիր,—  
 Մրտից սիրտ հիմա, քաղաքից քաղաք—  
 Վառ, կարմիր ցանցեր...

Մեր կամքն ե այդպես հզոր շղթայել  
 Աշխարհը համակ,—  
 Մեր կամքը՝ թռչող, վորպես փոթորիկ,  
 Ու տոկուն, համառ, վորպես ժամանակ,—

Յեւ եմ—յեղբայրս—ընկերս—ս, վնչ.  
 Կամքը իմ, կամքը քո—ու ելի՛, ելի՛  
 Կամքեր նույնազոր—հազար ու հազար:  
 Ու ելի, ելի,  
 Ու ելի՛, ելի՛,—

Զգում ես՝ հոգիս, հոգիդ ու՛նրա—  
 Հեռու, անծանոթ ընկերոջ հոգին—  
 Նույն արեգնական խորհրդով ե լի:  
 Ու ելի, ելի,  
 Ու ելի՛, ելի՛,—

Ամեն տեղ հիմա, բոլոր կողմերում՝  
 Մոսկովից—Փարիզ, Լոնդոնից—Հոտ...

Մինչև—Հնդուչին...

Թնդանոթների բառաչը վերջին:  
 Տանկերը արնոտ ուղամաղաշտերում՝  
 Կետերի նման՝ յերկաթազրահ...

Գնդացիքների ծարավը ազան,  
 Գործարանների շշակները լուռ...  
 Որերը՝ յերկաթ ու պղինձ հազած  
 Մավառնակների նման ուժրածիզ—  
 Որերը, վոր թեժ ուռձրեր են նետում  
 Յեղ թռչում են—  
 Ո՞ւր...

Անծիր դաշտերում — բանակներ կարմիր:  
 Քաղաքներ մեռնող ու գյուղեր անմարդ:  
 Որերի միդում — տազնապ ու դրդիտ:  
 Վոսկի ու բոռենցք, արյուն ու յերկաթ:  
 Ու տազնապը մռլթ, անկուշտ ու ազան,  
 Հրեշի նման դեղին, հազարաչ,—  
 Ու բաղամարրիկ աշխարհի վրա—  
 Քրոնդե կարմիր թևերի շառաչ:  
 Ու յերգը իմ նոր պիտի ավետի  
 Վաղը աշխարհին առաջին անգամ  
 Թոխչքի մասին անկուշտ կարոտի  
 Մեր հավերժական:

Յեղ նրանք, վոր դեռ աշխարհում չկան,  
 Վոր դեռ նոր պիտի ապրեն աշխարհում,  
 Դեռ նոր պիտի գան,—  
 Կարող են, թող մեր թոխչքն այտրվա  
 Անձկորեն չըզգան...

Նրանք, վոր պիտի ապրեն աշխարհում,  
 Կարմիր Ապագան:

Նրանք, վոր դեռ նոր, դեռ նոր պիտի գան...

ՅԵՐԳ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

I

**Յ**երկիրը մեծ էր ու լայն:—Տափաստաններ ընդարձակ,  
Անծայրածիր հովիտներ ու ստեպներ հեռանիստ,  
Հորիզոնից—հորիզոն ձյունե դաշտեր սպիտակ,  
Լայն յերկնքի տակ փռված գյուղեր անդորր ու  
հանդիստ:

Մեծ էր յերկիրն՝ հյուսիսի վերի ծովից մինչ հարավ,  
Ու արևի մի ծագից մինչ մյուս ծագն արևի:  
Նստել էր եղ ընդարձակ յերկրի մեջ ցարն անիրավ  
Ու իշխում էր սանձարձակ, վորպես դաժան թշնամի:  
Խեղճ էր ապրում ժողովուրդն հաղարբարիք յերկրի եղ՝  
Ճորտ էր, գերի, հողագուրկ՝ աշխատում էր,  
աշխատում,

Բայց մնում էր/անոթի ու ապրում էր անհեթեթ,  
Անիմաստ կյանք մի դժվար, վորպես լծկան  
անասուն:

Նստել էյին եղ անբախտ ժողովրդի շինքին  
Գոռ իշխաններ զանազան, հողատերեր ամեհի:  
Քշում էյին տեղից—տեղ դուրկ, անկրակ մուժիկին  
Ու լուծ էր մոլեժիկն ել՝ աչքը ահի ու մահի:  
Եղ ընդարձակ աշխարհում, ուր հողը շատ էր այնքան,  
Վոր յերկրի կեսը հաճախ մերկ ու խոպան էր մնում—  
Հողագուրկ էր գյուղացին ու տառապում էր կարկամ,

Ուրիշի հողն եր վարում առաջնորդից—իբրիկուն:  
 Լուռ տառապում եր եղ խեղճ ժողովուրդը հողագործի,  
 Հացի անդ քար եր ուտում ու մեռնում եր անոթի,  
 Վշտից ողի յեր խմում կարակներում բազմադմուկ  
 Ու քնում եր որն ամբողջ, վոր չարթնանա ու չուտի:  
 Ու հավատում եր մեկ ել, աղոթում եր աստծուն  
 Ժողովուրդը եղ թշվառ,— հավատում եր, վոր վերից  
 Լույս կբացվի մի որ ել—հող կտրվի գյուղացուն,  
 Յեվ ժողովուրդը ազատ ու լի՝ կապրի եղ որից:  
 Բայց վնչ աղոթքն եր փրկում ժողովուրդին եղ

թշվառ,

Վոչ ել ողին՝ դառնահամ կարակներում աղմկուն.  
 Յերկիրը ծով եր արյան ու կարիքը—անսպառ,  
 Սոփլ եր յերկրում թափառում՝ արյունը ուտելու ու

անքուն:

Հազար տարի եղ յերկրում արևն յելավ արյունոտ  
 Ու մայր մտավ արյունոտ, վորպես թրով դարկած

աչք.

Յերկիրը ծով եր արյան, յերգը յերկրում—մահվան  
 բոթ,

Ու չեր վառվում որերում լույս—փրկարեր մի հրաշք:  
 Վաղճ եր, շատ եր առաջ, վոր հայտնվեց մի

մոտիկ,

Շուրջը խմբեց բյուրավոր ընչպարներ անոթի,  
 Անտուն մարդիկ հավաքեց, գործից ընկած ու բոսիկ,  
 Ու խմբերով նրանց խեղճ ուղեց յերկիրն ազատի:  
 Ձայն տվեց. «—Ե՛յ, ընչագործի, անհող մարդիկ,  
 յեկեք դեռ,

Հավաքվեցեք բյուրավոր հոսանքն ի վար ես գետի.  
 Հազար-հազար հավաքվեք, պիտի տանեմ այսոր յես  
 Մինչև քաղաքը ցարի ձեր ես բանակն անոթի:  
 Պիտի Մոսկո՞վ տանեմ ձեզ... Ու քեֆ պիտի անեք

դուք,

Եստեղ ողի պիտ խմեք՝ ինչքան կուզեք, ինչքան կա,  
 Պիտի նստեք մեծամեծ պալատներում մեծաշուք,  
 Ու ձայնը կն զրկվածի պիտի դահլից զրնգա...»  
 Եսպես կանչեց:— Ու յեկան հազարավոր, բյուրավոր,  
 Յեկան, բոլորը յեկան, ով վոր չուներ խնտա-տուն,  
 Յեկան, բոլորը յեկան, հավաքվեցին նորից-նոր,  
 Ու բանակը ծավալվեց ովկիանի պես ծփուն:  
 Ինչպես անտառը խշշար, ինչպես ծովը շառաչեր,  
 Ինչպես մրրիկը շաչեր— բանակից եղ բազմամարդ  
 Ամբողջ յերկիրը զնգաց ու գզրգաց ձերից-ձեր՝  
 Յերգը զնգաց բանակի՝ հազարածայն ու զվարթ:  
 Ու անտառի նման սև բանակը եղ շարժվեց,  
 Հորձանք տվեց ու ծփաց հոսանքն ի վեր են գետի,  
 Ու հեղեղի պես սրբեց շեն կարվածներ մեծամեծ  
 Ու հողերի վրա տեր նստեց մուժիկն անոթի:  
 Եղ քանի որը մի քիչ գուլալ եր աչքն արևի՝  
 Կարծես դեղդիր եր քաշել արնոտ աչքին իրա են.  
 Արևալու ծփացին տախաստաններն հեռեի,—  
 Չուրկ մուժիկները յերան, վոր ստեպները վարեն:  
 Եսպես յեղավ: Յեվ հանկարծ, ինչպես հեղեղը հորդի՝  
 Ահեղ սուրաց վերից-վար արնախում գործը ցարի.  
 Յեկան, կոթվ յեղավ մեծ, կովեց բանակն անոթի,  
 Վոր հույսը գուրկ մուժիկի անվերադարձ չմարի:  
 Յերկար-յերկար կովեցին:— Ու հետ առան նորից են

Քաղաքները գրաված ու հողերը խեղճերի,  
 Իշխանների կիսավեր պալատները հոյաշեն—  
 Ու բյուր, հազար անոթի տարան հեաները գերի:  
 Ու բռնեցին սեաշյա առաջնորդին նրանց մեծ,  
 Վանդակ գրին, վորպես մուծ սարից բռնած մի  
գազան,  
 Իեմքին ներկեր քսեցին, արնոտեցին ու եղպես  
 Մոսկով տարան—ցարանխատ քաղաքը են սրբազան:  
 Ենտեղ տարան: Վողջ յերկիրն արդեն գիտեր ծերից  
ծեր

Առաջնորդի մասին եղ անատենների բանակի,  
 Դիտեր, վոր ուես աշխարհի, ժողովրդի եղ անաեր  
 Պաշտպանն և նա ու մեռնի պիտի մահով կրկնակի:  
 Դիտեր.— ու սուգ էր անում: Մինչ զողանջը զանգերի  
 Արքայանխատ Մոսկովում ահասարսուռ զրնգաց,  
 Ու ամբոխը հավաքեց, և հսկային են բերին,  
 Իահիճն յեկավ— ու քաջի գլուխն ընկավ ուրից ցած:  
 Իսկ նրանց, վոր նրա հետ գերի եյին վերցրել—  
 Հոշոտեցին զահիճներն անդղների նման դեշ,  
 Պատառ-պատառ արեցին ու վորեցին աչքերն ևլ  
 Ու փռեցին դաշտերում հազար գիսի, նեխած լեշ:  
 Եսպես արին: Ու ետպես թաղեցին բախտը խեղճի  
 Ու ծիծաղը միտրվա նրա քթից բերին յետ:  
 Նորից արևը յեկավ, ինչպես ձեռքից դահիճի՝  
 Աչքը թարախ ու արյուն ու շողերը— մեկ-մեկ նետ:  
 Բայց ժողովուրդը յերկանր իր յերգերի մեջ յերգեց  
 Քաջի մասին և խիզախ՝ ժողովրդին մխիթար,—  
 Հազար յերգեր հորինեց և հսկայի մասին մեծ,  
 Վոր ճորտացած մուծիկին ազատություն պիտի տար:

## II

Ու տարիներ սահեցին զանդադ, իրար յետեից...  
 Յեզ արևը բարձրանում ու իջնում էր արյունոտ:  
 Պատերազմներ եյին միշտ ու նախճիրներ են թևից՝  
 Սոֆյե էր իշխում սանցարձակ ու աշխատում էր տենդոտ:  
 Ենտեղ թաթարն էր զարկում: Թուրքն էր ենտեղ:  
 Ենտեղ լին

Ջորքն էր մտնում ընդարձակ, շեն կարվածներն  
 արքայի:  
 Տենդ ու յերաշտ էր յերկրում, հիվանդություն ամեն  
 տեղ,

Ու թռչում էր զեղից-գեղ սև ուրվականը մահի:  
 Ձեռքին կոտրած գերանդի՝ անցնում էր մահն  
 անկշտում,  
 Սավառնում էր ձյունաբուք մըրբիկներում սպիտակ,  
 Հունձք էր անում ժրաջան, հազարներով գլխատում  
 Ու մեռնում էր կյանքն, ինչպես ջրով լցված մի  
 փեթակ:

Ես ժամանակ էր անա լոր հյուսիսի գաշտերում  
 Յերկաթակամ ու համառ մի նոր մուժիկ յերևաց,  
 Ծուրջը մարդիկ հավաքեց ու վրեժով աններում  
 Կովի յերավ անավոր ու արշավեց սրբնթաց:  
 Նորից անտուն, անթիի հողագուռիկները յեկան,  
 Հավաքվեցին գյուղերից, քաղաքներից հեռավոր,  
 Հոժ բանակներ կազմեցին ու համախնքներ  
 գյուղական

Ու խմբերով իրենց ըյուր կովի յեկան նորից-նոր:  
 Ասին՝ յերկրի վրա թող վնչ մի իշխան չմնա,

Մահ գիշատիչ ու գաղան իշխաններին հողատեր-  
 Այլևս ոռւս աշխարհում հողատեր ե միայն նա,  
 Ով փոցիս ունի իր ձեռքին և կարող ե աշխատել:  
 Մսին՝ եսպես կլինի: Յեւ յերբ իշխան չմնա—  
 Բողորը գոհ կլինեն ու կաշխատեն ժրաջան,  
 Ու ժողովուրդը ամբողջ որ ու արև կիմանա  
 Ու քարերը անգամ մեծ խնդությունից կճչան:  
 Ու քչեցին այրուձին: Առան գյուղեր, քաղաքներ,  
 Զյունե ուղին բռնեցին արքայանիստ Մոսկովի,  
 Բայց դորքն իջավ ցարական՝ խեղճի ցավին

անտարբեր,

Ու բանակները նրանց ավեց քամուն ու հովին:  
 Յերկար-յերկար կռվեցին մարտիկները գյուղացի,  
 Բայց դորքերը ցարական վնչ մի մարտիկ չթողին:  
 Առաջնորդին բռնեցին, խակ նրա քաջ այրուձին  
 Ահից յեղավ ցիրուցան ու հանձնվեց հաղթողին:  
 Ու սրանց ել անվեհեր առաջնորդին սևաչյա  
 Վանդակ գրին ու տաբան մայրաքաղաքն արքայի-  
 Ճամփին հաղար սրիկա թքեց դեմքին ու նրա  
 Արևառ դեմքն արնոտեց, վոր վանդակից չնայի:  
 Ու բերեցին սրան ել, ինչպես են հին հակային,  
 Հազարամյա Մոսկովի հրապարակն անավոր,—  
 Նորից անեղ դղրդաց զանգերի խումբն անադին  
 Ու գահիճը յերավ վեր՝ վոտից-գլուխ հազած նոր:  
 Ու դուրս յեկավ վանդակից առաջնորդը սևաչյա,  
 Կանգնեց՝ ըմբոստ ու արի, աչքը հառեց ամբոխին,  
 Աչքերը հուր շանթեցին, ուղեց կանչի ու ճչա,  
 «Յեկե՛ք» ասի—բայց նրան կապկպեցին, չթողին:  
 Ուղեց կանչի, համոզի ժողովրդին իր են ոռւս,

Յեւրբ, ասի, բարձրացիր իշխանների դեմ դադան,  
 Ճգմիր անեղ հարվածով իշխաններին եղ գոռոզ  
 Ու պաշտպանիր, ինչպես մարդ, իրավունքդ

սրբազան:

Բայց ի՞նչ ասեր... Դահիճի հարվածներից ահավոր  
 Խեղդած մանկան նման մի— ձայնը խզվեց ու

դողաց.

Ձեռքերը հեռ կապեցին, ծռենկի բերին նորից-նոր,  
 Գլուխը վար թեքեցին ու դանակը շողշողաց...  
 Ու ժողովուրդը նորից մնաց թշվառ ու անտեր,  
 Նորից արեւը յեւրով՝ արյուն հագած ու մոխիր—  
 Ու տարիներ սահեցին անմխիթար, անտարբեր,  
 Ու չձգտեց վնչ-վոք ել կյանքի ընթացքը փոխել:  
 Նորից յերկրում ծերից-ծեր անհուսուլթյունը իջավ  
 Ու մորեխի պես նստեց հողիները վրա խեղճ:  
 Մովը նորից տարածվեց ու արշավեց սրընթաց,  
 Ու տարիներ անցան մուլթ ու աղետներ յեղան մեծ:  
 Յեւ չէր մուժիկն հավատում ել վնչ մի նոր հսկայի.  
 Մեծ էր վոսոխն ավելի, քան ուժերը մի— յերկու  
 Ըմբոստ, խիզախ քաջերի, վոր որերում ամայի  
 Յեւնում եյին ու վառում փոթորիկներ ահարկու:  
 Ու ժողովուրդը լսեց՝ Կրեց վիճակն իր դժվար,  
 Վորպես վերից սահմանած անմխիթար կյանքի բեռ:  
 Դարեր անցան ու դարեր: Միշտ նույն յերկինքը

մոայլ,

Նսւյն իշխաններն ամենի ու արքաներն անտարբեր...

## III

Եսպես յերկար տարիներ ժողովուրդը տառապեց  
 Յեվ որերը նրան նոր առավտաներ չբացին—  
 Մինչ բացվեցին ամենուր գործարաններ մեծամեծ  
 Ու խուլ, խավար գյուղերից քաղաք յեկավ

գյուղացին:

Յեկան, լցրին քաղաքներն հաղարանուն լամբերով,  
 Խուլ գյուղերից անոթի բազմուկթյուններ յեկան մեծ,  
 Հավաքվեցին յերկաթե աշխատանքի տներում  
 Ու վաճառքի հանեցին հաղթ մկանները իրենց:  
 Նրանք վոչինչ չունեցին ու ել վոչինչ չունեցան,  
 Նսւջն անոթին մնացին քաղաքների մշուշում,  
 Բայց սրտերը վառվեցին ու մկաններն ամրացան—  
 Չեյին նման ել նրանք են անխմաստ գյուղացուն:  
 Քաղաքների անողոք աշխատանքի հնոցում  
 Շչակները ճչացին աշխարհների մասին նոր,  
 Ու յերկաթե յերկնահուլ ծխներույզի փնչոցում  
 Բողմբն հանկարծ լսեցին մի աղաղակ ահավոր:  
 Մեքենաները նրանց ըմբոստ յերգեր յերգեցին  
 Յեվ աշխատանքը հոգու մի նոր թռիչք ստեղծեց.  
 Զողւտ բանվոր եր արդեն դաշտ ու սարի գյուղացին  
 Յեվ ընկերներ ուներ բյուր ու յերազներ ուներ մեծ:  
 Եսպես յեղավ: Յեվ ահա քաղաքներում ամրակուռ  
 Մի առավոտ յերգեցին ծիններույզները բոլոր—  
 Բանվորների մասին մերկ, տառապանքի մասին լուռ  
 Ու բովանդակ աշխարհի մեծ սպայքարի մասին նոր:  
 Ասին՝ համայն աշխարհում յերկու բանակ միայն կա՝

Մեկը—խարդախ տերերի, հարուստների անկշտում,  
 Վոր լիանում են առատ, վայելում են անխնա,  
 Նստում են շեն տներում և յերբեք չեն աշխատում:  
 Նրանք, վոր տաք են հագնում, ու միշտ մաքուր, ու  
 միշտ նոր,

Գլխի տեղ վիհ ունեն մի ու անկշտում մի բերան,  
 Վոր հարբում են ու փխսում, վոր կերակուր ուտեն  
 նոր,

Յեվ ափսոսում են միայն, վոր աշխարհը չկերան:  
 Նրանք, վոր տերն են հիմա քաղաքների, դյուղերի,  
 Պալատների, բերդերի, բարիքների բոլոր մեծ—  
 Նրանք, վոր հացն են ուտում կիսաքաղցած բանվորի,  
 Զնւրկ թողնելով միշտ նրան, վոր եղ բարիքն  
 ստեղծեց:

Սակայն բանակը մյուս, մյուս բանակը են մեծ—  
 Աշխատավոր բյուրերի բանակն և են անսասան,  
 Նրանց, վոր բյուր դարերի աշխատանքը ստեղծեց,  
 Վոր աշխատանքն յեղան մեծ, բայց բարիքներ չտեսան:  
 Նրանց, վոր բյուր են հիմա, անհաշիվ ու անհամար,  
 Վոր մկաններ ունեն կուռ ու յերակներ վիթխարի—  
 Ու հողիններ ունեն մեծ՝ արեւների նման վառ,  
 Յեվ ստեղծում են բոլոր հրաշալիքներն աշխարհի:  
 Նրանք, վոր հողն են փորում, ճեղքում են կուրծքը  
 հողի,

Ու վիթխարի գետերին հոսանքներ են տալիս նոր—  
 Կուրծք են տալիս ծովերի հորձանքներին կատաղի,  
 Գնացքներ են շարժում բյուր ու հանքեր են փորում  
 խոր:

Նրանք, վոր ուժն են կյանքի, կյանքի բազուկն  
 ստեղծող,

Վոր շինել են, ինչ վոր կա, ինչ վոր դեռ պետք է լինի.  
Ասին՝ ամբողջ աշխարհում ինչքան հանք կա,

ինչքան հող,

ինչքան բերք կա ու բարիք—պետք է նրանցը լինի:  
Ես պիտի վաճառեմ յերազներ մեքենաները ասին,—

Ու յերկաթի անողոք շոգաներով ահարկու

Մեքենաները մի ուր ահագորդ ճշացին,

Վոր պիտ կռվի յեղնեն մեծ եղ բանակները յերկու:

Ու տարածվեց վիթխարի քաղաքներից հեռավոր

Ըմբոստ մի ճիչ հրեղեն, մի աղաղակ հրաշեկ—

Քաղաքներից յերկաթե մի աղաղակ թռավ նոր.

—Պրոլետարներ աշխարհի, հավաքվեցեք, միացե՛ք:

Ու միացան, ամբացան նրանց շարքերը վշուր,

Ու սրտերին նրանց կուռ մեքենաները ասին,

Վոր պայքարի համար մեծ ու հաղթության համար

նոր

Պետք է բոլորը յեղնեն ու պայքարեն—միասին:

Ու պայքարի յելան մեծ նրանք մի մուծ իրիկուն,

Յերբ պատերազմ եր յերկրի սահմաններում հեռակա,

Յեկան բանվոր-գյուղացիք խենթությունով ահարկու

Ու բանակներ հանեցին արիասիրտ ու հսկա:

Քաղաքներում կարմրավառ գրոշակներ պարզեցին,

Կուրծք տվեցին զորքերին արյունարբու արքայի,—

Սակայն չոգնեց բանվորին դաշտ ու սարի գյուղացին,

Մնշարթ մնաց, ահաբեկ՝ աչքը անի ու մահի:

Ինչքան արյուն հոսեց վառ, ինչ ընկերներ

վիթխարի

Չինվորների թրերից տապալվեցին ու կորան,

Յեկ ինչ ահեղ ցատումով բազմություններ բանվորի

Արյունոտած ձեռքերով վերադարձան գործարան...

Նրանք, տխուր, քաշվեցին, բայց պայքարի համար  
 նոր  
 Զնդաններում, բանտերում նրանց հողին ամբացավ,  
 Ու տառապանքը անհուն նրանց հողին կրեց լուռ,  
 Մինչև ազեա յեղավ մեծ ու ժողովուրդն արթնացավ:

## IV

Աղետ յեղավ: Պատերազմ: Ու ժողովուրդը անտեր  
 Զավակներին իր հեռու թշնամու դեմ ուղարկեց:  
 Չեր հասկանում, թե ի՞նչու. ինքը վոչինչ չգիտեր:  
 Գնաց յերկրորդ գավակն ել— ու տունն ամբողջ  
 մնաց խեղճ:

Ու հազարներ գնացին, ու միլիոններ, ու բյուրեր,  
 Դեպի գաշտերը հեռու ուղարկվեցին շարեշար.  
 Պիտի աշնտեղ նրանց տաք գնդացիքը համբուրեր,  
 Պիտի գնդակը սուլեր ու թնդանոթը ճչար:  
 Այնտեղ խեղդող գազերի ամպերը տոթ ու զեղին  
 Պիտի հանկարծ իջնեյին բանակների վրա են,  
 Պիտի արյուն թքեյին ու արնահազ մեռնեյին—  
 Մահն եր նրանց սպասում գգվանքներով հրեղեն:  
 Յերեք տարի շարունակ սպասեցին տներում,  
 Վոր կռիվը վերջանա—չվերջացավ սակայն նա.  
 Աչքերը ջուր կտրեցին՝ հառած արնոտ են հեռուն, }  
 Մահն եր ենտեղ դեգերում ու գլխատում անխնա:  
 Եսպես յեղավ: Յեվ ահա քաղաքներում բազմամարդ,  
 Ուր յերկաթե բյուրավոր գործարաններ կային մեծ,  
 Մի առավոտ յերկնահուպ ծինելույզները յերկաթ  
 Կոչ նետեցին զինվորին՝ զինվորի դեմ չկավես:  
 Գործարանի մշուշից բանվոր մարդիկ գնացին

Ու բանակները լցրին մեծ խոտքերով իրենց նոր,  
 Ընկեր դարձան զինվորին, զինվորի աչքը բացին—  
 Ու հուզվեցին, ծփացին ահա դաշտերն ահավոր:  
 Չհամբերեց ել զինվոր-զորքը՝ յեկավ գահի դեմ,  
 Ամբողջ յերկիրը յեկավ, վորպես զինվոր մի արթուն.  
 Ժողովուրդը հասկացել ու արթնացել եր արդեն—  
 Ու զինվորը են ծերից պատերազմից յեկավ տուն:  
 —Ել չեմ կովի,—ասաց նա,—թշնամու դեմ դբսևի.  
 Մենք ինչ ունենք կիսելու, բաժանելու աշխարհում.  
 Նույն արևն ե բոլորիս արևել ու կարևի—  
 Մեր ունևորն ե միայն մեր թշնամին արնախում:  
 Կոխվ տղրուկ ու վիշապ հարուստների դեմ բոլոր,  
 Վոչ մի հարուստ չմնա թող աշխարհի յերեսին—  
 Եսպես ասին ու հսկա բանակներով ահավոր  
 Ճակատներից տուն դարձան նրանք մի որ միասին:  
 Ու տվեցին կրակի որենքները հնամյա,  
 Հարուստների ստեղծած իրավունքը արնատառ,  
 Ասին՝ ամբողջ աշխարհում մի իրավունք միայն կա՝  
 Մարդու քրտինքը զուլալ ու աշխատանքը արդար:  
 Հողերն առան, ցանեցին աշխատունակ, ժրաջան,  
 Գործարանները մի նոր հպարտությամբ յերգեցին,  
 Մինչդեռ յերկրի ծայրերից թշնամիներ բարձրացան,  
 Վոր հեռ խլեն կարգը նոր ու հաստատեն կարգը հին:  
 Բայց ել զինվոր եր հիմա բանվորն ու զուրկ  
 գյուղացին,  
 Բազմահազար հրացան ու թնդանոթ ուներ նա.  
 Հավաքվեցին բյուրավոր ու բանակներ կազմեցին,  
 Վոր մարտնչեն մինչև վերջ, մինչև վոսոխ չմնա:  
 Յեկան, հաստատ, վորպես սար ու սարի պես  
 անասան,

Կուրծք տվեցին բյուրաւոր անեղազարկ հարւածի,  
 Հազար կռիվ արեցին, բայց պարտութիւնն չտեսան,  
 Հազար կռիվ արեցին ու բռնորին հաղթեցին:  
 Ու կովում են հիմա ել, վոր յետ չտան ել յերբեք  
 Իրավունքը բանվորի, վոր անսասան է արդեն.  
 Բարձրացել են նրանց դեմ ունեւորներն անարեկ,  
 Բայց կովում են նրանք դեռ—ու կհաղթեն, կհաղթեն:  
 Չեն տա նրանք ել իրենց ձեռքից զենքերը իրենց,  
 Չեն տա թշվառ գյուղացու հողը նորից ավարի.  
 Ինքն իրեն տեր կմնա եղ ժողովուրդը եղպես—  
 Մինչև յերկիրը սառի, մինչև արևը մարի  
 Չկա կյանքում ենպես ուժ, վոր կարենա պայքարել  
 Աշխատավոր բանվորի ել կուտակված ուժի դեմ:—  
 —Փռոք բանակին նրանց կուռ, նրանց կամքին  
պողպատե,
 Ժողովրդին, վոր կյանքում իր բախտի տերն է արդեն:

## ԱՄԵՆԱՊՈՒՄ

ՍԿԻՋՐ

Յես — Հայաստանցի պոետ —  
Յերկիր, ուր մշուշ է ու մահ —  
Բողոքի, բողոքի համար  
Յերգում եմ  
Նորից  
Հիմա:

Բայց ինչո՞ւ միայն յես յերգեմ,  
Միայն յես, և վնչ թե նրանք,  
Վոր որերը այս հողմածեծ  
Գրոհել են անցյալի վրա:

Նրանք, վոր փոշոտ, արևոտ,  
Որերի խոնավ մշուշում  
Աշխատում են, յեռում, պայքարում  
Այս աշխարհի փոշում:

Վոր հոսում են քրտինքի նման  
Աշխարհի յերեսն ի վայր —  
Ու սրբում է, տանում է քամին  
Ու խառնում է նրանց — իրար:

Յեւ մի թե զուք չգիտեք,  
 Վոր ամեն մի անհայտ բանվոր,  
 Վոր ձեռքով իր յերկաթ և կոռւմ—  
 Հաղան պոնմներ ունի  
 Իր հուժկու, յերկաթ թոքերում:

Չգիտեք...

Իմացեք հիմա:

Ականջներդ— լայն— բացեք.—

— Ուրիշ հանճարներ չկան

Աշխարհում— նրանցից բացի:

Յեւ գիտեք, թե ինչեր են յերգել,

Ինչեր են ստեղծել նրանք—

Ինչպիսի պողպատե յերգեր,

Ինչպիսի յեռանդ ու կրակ...

Յերգել են—

Յեւ յերգը նրանց,

Դարերի սարսավից անահ—

Կանգնել և՛ վիթխարի, հաստատ,

Նրանց յերգը—

Ա. շ խ ա ռ հ ը —

ահա՛

Աշխարհը—

Քաղաքները բոլոր,

Ճամփաները, փողոտ խճուղին,—

Վերջին արտաքնոցը քարե—

Ու բոլոր բերքերը հողի:

— Ինչպիսի՜ բաղձալար յերգեր  
 Ու հրաշք,  
 Հեքյաթ,  
 Հիացմունք:  
 — Վողջճւն, բյուրհանձար ընկեր—  
 Հանքագործ,  
 Հանքափոր,  
 Հացթուխ...

Այն:

Ինչո՞ւ միայն յես:  
 Թող բոլորը նրանք— յերգեն:  
 Բոլորին, բոլորին, բոլորին—  
 Յերգեն:

Յե՛վ ինչո՞ւ միայն նո՞ւ յերգի—  
 Միայն նա— նայիրցի մի Պողոս.—  
 Իսկ Իվանը, Յուսուֆը, \*Չունկ-Ֆոնն,  
 Վոր իրար ճանաչում են վաղուց:  
 Յե՛վ մի՞թե դուք չգիտեք,  
 Վոր կարող ե այսոր Տիրեթից  
 Մի Խուն-Յուն ինքնիրեն թուչել—  
 Ռաշտ, Պեարոզրադ, Թիֆլիս:  
 Կամ աշնան տերևի նման  
 Կարող ե թուչել կարո՞ն—  
 Կուզեք թող լինի Հագո—  
 Թիֆլիսից՝ Մարսել, Յերևան,  
 Պեկին, Գահիրե, Չիկագո:

Ո, աշխարհը վաղճւց ե դարձել  
 Մի փոքրիկ, փոքրիկ փողոց...

Վաղճւց դեղնավուն Պեկինից  
 Մինչև Նորք իր ձեռքը պարզած՝  
 Մի Չունկ-Ֆու կարող ե ասել.—  
 —Բարի լճյս, բանվնր Պողոս...

Ել ինչ՞ու միայն նա յերգե—  
 Թող յերգեն, ինչքան մարդ վոր կա.  
 Թող աշխարհը ամբողջ յերգե,  
 Զրնգան,  
 Զնգան,  
 Զնգան...

ԳԼ. Ա.

1914 թ. հուլիս. Յերևան

Յերևան:

Աստաֆյան փողոց:

Փողոցի մեջտեղով անա,  
 Մտքերի տակ ծանր կքած,  
 Անցնում ե մի բանվոր—  
 Պողոս:

Այրում ե արևը յեփող,  
 Խանձում ե ջղերն հողնած:—  
 Գնում ե դեպի դեպո  
 Նա:

Տոթ ե:

Ամառվա կեսոր:

Արևը—կարմիր շափրան:

Արևը—դրել ե հինա:

Շտապում ե նա—դեպո:

Մտքերը հրում են՝ գնա:

Ամեն ինչ—գորշ, առորյա:

Ինչպես միշտ—գորշ, փոշոտ փողոց:

Սառը ջուր:

Խաղող:

Գինի:

Մարդիկ: Կառքեր: Մարդիկ:

Յեվ վոչ-վոք չգիտեր, վոր հիմա

Աստաֆյան փողոցի վրա—

Հրաշք պիտի լինի...

Յեվ հրաշքն... այնպես պարզ յեղավ...

Հանկարծ բանվորի ճակատից

(Տոթ եր, շոգն ասում եր՝ գնա) —

Մի կաթիլ քրտինք ընկավ

Փողոցի փոշու վրա:

Ընկավ—ու մնաց մի պահ:

Ու ցուրաց նրա մեջ հանկարծ—

Յերկնքի անասանման հեռուն

Ու արևը—հեռու մի առկայծ...

Ու հանկարծ այնտեղից, փոշուց,

Ուր քրտինքը մնաց մի պահ—

Բյուրավոր բանակներ յելան՝

Վիթխարի, համարձակ, անահ...

Յեւան բյուրավոր մարտիկներ,  
 Զինվորներ յերկաթե, բրոնզե,  
 Նրանք, վոր իր պես, իր նման  
 Աշխատում եյին դեռ անդէն:

Յեւան, հառնեցին հանկարծ  
 Փողոցի ամառվա փողում—  
 Բյուրավոր բանակներ անահ,  
 Զրահապատ բանակներ ուժի:

Շողացին սվիններ, սրեր,  
 Յերգեցին կրծքեր հզոր,  
 Դրոշներ ծփացին արնավառ—  
 Դրոշներ կարմիր, բոսոր...

Յեւ նրանց բոլորի առաջից  
 Մի դրոշ առնական ուսին՝  
 Արշավում եր Պողոսը հաստատ—  
 Յեւնում եր փողոցի փողին:

Յեւնում եր փողոցի փողին,  
 Ծփծփում եր բանակը հոծ.—  
 —Անցնում եր դարերի միջից  
 Մի հակա, բյուրանուն Պողոս...

Գնում եր Աստաֆյան փողոցով,  
 Աչքերը հառել եր հեռուն:  
 Վառվում եր արև մի բոսոր  
 Պողոսի խոնավ աչքերում...

Վոչ-վոչ, վոչ-վոչ չտեսավ:  
 Միայն մի վայրկյան եր վառ:

Հետո—անխմելի անցան:

Դորը, փոշոտ—փողոցի ճանապարհ:

(Իսկ վորպեսզի հասկանաք այս հրաշքը—

Բավական է, վոր իմանաք,

Վոր մի հին ընկերոջ մոտից եր

Վերադառնում նա:

Այդ ընկերը նրան ասել եր,

Վոր գալու յեն զեպքեր վիթխարի,

Վոր արդեն, արդեն հասել է,

Սրընթաց արդեն արշավում է

Ժամանակը մե՞ծ պայքարի...)

Յերևան:

Աստաֆյան փողոց:

Գնաթաթախ:

Աչքերին փոշի:

Խաղաղ—խաղող—քաղաք:

Ու գոռոցը—«Ա՛-ի՛, ա՛-ի՛, ա՛-ի՛»—

Իշու,

Եշան,

Եշի...

Ծույլ,

Դանդաղ,

Մի քնած եշի

Յերջանիկ յերազի նման—

Տոթ,

Սրև,

Ամառվա փոշի—

Յերևան,  
 Յերևան,  
 Յերևան...

Իսկ իրա խանութի առաջ  
 Նստած՝ խանութպան Համոն  
 Գանդատվում եր.—Ինչո՞ւ չկա  
 Մի անուշ, գարնան քամի...

Թվում եր նրան, Համոյին,  
 Աշխարհը—փոշոտ մի փողոց—  
 Ու ապրում են վողջ աշխարհում—  
 Համոն,  
 Մի Կարո,  
 Մի Պողոս:—

Յերազ եր թվում Համոյին  
 Փողոցի արևոտ հեռուն.  
 Թվում եր՝ արևի վրա  
 Նստել ե—ինքը Համոն:  
 Վտաքերը կախել ե վար  
 Ու մոռում ե գանդաղ մի յերգ...  
 Հաշվվում ե տոթ ուղեղում.  
 —Տասնըմեկ... տասյերկու... տասյերեք...

Հոսում ե արևի գինին...  
 Իսկ ետոք առևտուր չկա...  
 Շուտով իրիկուն կլինի—  
 Կգնա—  
 Նորից կգա...

Կեւնե արեւը նորից,  
 Կվառվի՛ հիմար ու շոգ—  
 Եդ շոգին հիվ կլինի  
 Գինի կամ կոնյակ ուզող...

Յերազում եր Համոն կիսաքուն,  
 Որորվում եր մեղկ հոգում  
 Աշխարհը—շոգ մի անկյուն՝  
 — Առավոտ,  
 Կեսոր,  
 Իրիկուն...

Ել վաճառ հրաշքներ տեսներ  
 Խանութպան Համոյի հոգին,  
 Ել ինչո՞ւ շարժվե՛ր տեղից...  
 Յերբ յեկան ասին «Պատերազմ»—  
 Չգողաց անգամ ծայրը... բեխի:

Զլսեց: Զզգաց: Զիմացավ:  
 Թվաց թե—հարսանիք և մի:  
 Ու սլիտի հորդե այնտեղ—  
 Անհաշիվ... կարմիր... գինի...

Յեվ յերբ իրիկուն յեղավ  
 Յեվ յելավ, վոր գնա վռագ—  
 Մինչև տուն բեց բոլորից.  
 —Պատերազմ: Պատերազմ:  
 —Պ ա—տ ե—ր ա գ մ:

ԳԼ. Բ.

Լսեցի՞ք—

Յեւան—

Բանակներ հսկա, յերկաթաղրահ,

Լսեցի՞ք—

Յեւան—

Աշխարհի բոլոր դաշտերի վրա:

Յեւան,

Գնացին—

Ուրալից՝ դեպի Կարպատները լուրթ,

Ու Կարպատներից—մինչև Երզրում,

Ու Երզրումից—Տրիպոլի, Հոմ:

Բոլոր կողմերից հավաքված յեւան.—

Թուրք,

Իտալացի,

Հնդիկ,

Վրացի,

Ռուս,

Շոտլանդացի—

Հայ,

Խոնխուզ,

Թաթար,

Կիրգիզ,

Չինացի—

Նյու-Յորքից յեկան,

Տայիտի կղզուց,

Հեռու Բաղդադից,—

Յեկան—

Ո՞ւր յեկան—  
 Բողոքը բանվոր,  
 Մուշա,  
 Գյուլաջի:—

Յեկան—  
 Ո՞ւր յեկան.—  
 Լոնդոնից—Պեկին,  
 Ղարս,  
 Սարիղամիշ.—  
 Փոշի բարձրացավ,  
 Արճիճե քամի...

Ու վոռնում եյին—  
 «Վն-վն-վն»—«վն-վն»—  
 Թնդանոթների կոկորդները չոք—  
 «Վն»  
 «Վն-վն»  
 «Վն-վն»—  
 Գիշեր,  
 Յերեկ,  
 Կեսոք:

Ու վոռնում եյին—  
 Դաշտերի, ցանքսերի,  
 Արաերի վրա:  
 Ճճի-ճճի-ճճի—  
 Ռումբ—  
 Բում-բում-բում—  
 Ել վոչինչ—կարմիր արճիճից բացի:

Ու վռոնում եյին.—

Ռհւմբն եր հողմավար, վարար անձրեում,  
Բաղաքներ քանդում, դաշտերը ձևում:  
Ու լուսարձակներ հազարաչքանի  
Լույս եյին սփռում դաշտերի միգում,  
Վոր արձիճն իր գործն անվրեպ անի:—

Իսկ քաղաքներում—

Բերլինում, Փարիզում,

Նյու-Յորքում հեռու—

Արնաքամ տենդով, ահով վարակված՝

Աշխատում եյին գործարաններում:

Գործարաններում վիթխարահսկա,

Վորոնց յերկաթե շչակները բյուր

Անասունների նման խելագար

Իրենց յերկաթե խորխն եյին փնչում

Հորիզոնն ի վեր—

Գործարաններում աշխատում եյին

Պրոլետարների բյուրավոր խմբեր:

Դեռ կռում եյին ու կոփում ումբեր,

Թեկուզ գիտեյին՝ ճւր պիտի ճամփեն.—

Դեռ կռում եյին ու կոփում ումբեր,

Վոր միլիոն, միլիոն թնդանոթների

Անկուշտ, անհագուրդ ծարավը ջամբեն:

Յեկ ովք՞ր եյին նրանք.— կիսաքաղց

Ռուս,

Հնդիկ,

Թաթար,

Գալլ,  
 Իրլանդացի.—  
 Բոլորը—բանվոր,  
 Մուշա,  
 Գյուղացի:—

Իսկ իրենց վոսկի կաբինետներում  
 նստած՝ գիտուններ, խելքեր վիթխարի  
 Կովի պես դանդաղ վորոճում եյին  
 Յերազներ մահի, արյունի, հրի:  
 Նրանք, վոսկիպատ կաբինետներում,  
 Հանճարում եյին հեղձուցիչ գաղկը,  
 Վորպեսզի Մահի վրտքերի առաջ՝  
 Մի ախնթարթում կանգնել կարենան  
 Դիակի բերդեր ու բուրդեր մսի:  
 Յեւլ այսպես—յեկան, յելան դեմ-դեմի  
 Բանակներ բազում ու բազմամիլիոն.  
 Յեկան—  
 Բաղդադից—Բերլին,  
 Պերեմիշլ,  
 Բերլինից—Կալե,  
 Դուվր,  
 Վերդեն,  
 Լիոն...

Աշխարհից-աշխարհ,  
 Ծովից-ծով յելան.—  
 Նյու-Յորքից—Պեկին,  
 Ուրալից—Միլան...

91. 9

Այսպէս եր:

Խառնըվեց իրար

Աշխարհը— յեզերքից յեզերք:

Յեւ ըտնր դաշտերի վրա

Կանգնեցին քաղաքներ մսե:

Հնամյա արևին մոտիկ,

Արևի հարազատը միակ—

Քայքայվում եր կարծես տոթից

Աշխարհը— նեխած մի դիակ:

Ու խելառ, սարսափից յերեր,

Հավերժի մուժում անուղի—

Տանում եր ժամանակը ծեր

Դիակը իր նեխած տղի...

Տանում եր— նեխած մի դիակ,

Փախցնում եր ամսթը իրա—

Ու հոսում եր արյունը տաք

Հավերժի ճամփեքի վրա:

Հեռու— Սատուրնի վրայից

Կարելի յեր տեսնել՝ զազիր՝

Արնահոս վերքերի նման—

Լույսերը Բերլինի, Փարիզի:

Իեղին, ամպերի նման,

Աշխարհի նեխած յերեսին—

Կուտակվել էյին արնահամ

Ամպերը հեղձուցիչ զազի:

Այսպէս եր:  
 Յեղ դուք չիմացածք,  
 Չտեսած ձեր մուրհ հոգում,  
 Թե վհնց—բանականեր մեռան՝  
 Հազարը մի սև իրիկուն:  
 Վոր նորից, խաչվելու համար,  
 Ինչպէս նա, վոր գնաց Հոռմ—  
 Միլիոնները անխոս գնացին  
 Վերդեն,  
 Պերեմիշլ,  
 Երզրում...

. . . . .  
 Յերևան:  
 Աստաֆյան փողոց:  
 Նստած ե խանութպան Համոն:  
 Աշուն ե:  
 Անձրև:  
 Մշուշ:  
 Թաց, խոնավ—անձրևոտ իրիկուն:

Փողոցը լիքն ե հիմա,  
 Դարձել ե լեփ-լեցուն մի բերան:  
 Թափվել են մարդիկ խմբերով  
 Անձրևոտ մայթերի վրա:

Հորանջում ե փողոցը թաց,  
 Վորոճում ե թեն, անատամ.—  
 Ծամվում են մշուշում ընկած  
 Հազար ու հազար գաղթական:

Իսկ այնտեղ—կիսամեռ ընկած—  
 ժամերի հյուրընկալ բակում  
 Կիները շների նման  
 կնում են ամեն իրիկուն:

Ցկնում են ժամերից նայող  
 Գլխառատ աստծու համար  
 Քոստա Հիսուսներ հայու,  
 Հիսուսներ՝ հիվանդ, հիմար...

Նայում ե ժամերից աստված,  
 Ուրախ ե. քիչ մնա... յերգի.  
 Հոսում ե թուրքը նրա  
 Ճերմակ, փառավոր միրքին:—  
 Շաքարե աչքերի առաջ  
 Ծնվում են հիսուսները հոծ.  
 —Գիտե վոր՝ Նյու-Յորքից կզան  
 Կբանան հազար վորբանոց:  
 Հորդում ե ժպիտը լուսե.  
 Ամոթխած պառավի նման  
 Ուզում ե, բայց... քաշվում ե ասել.  
 —Իմ վորդին անկողին չուներ,  
 Բայց նրանք— գիտե՞ք—կունենան...

Այսպես եր:  
 Խանութի առաջ  
 Նստած՝ խանութպան Համոն  
 Մտածում եր՝ ինչո՞ւ չկա  
 Մի փոքրիկ... գարնան... քամի:

Մտածում եր՝ «Բաղդադ են հասել  
Ձորքերը անսահման Ռուսի—

ել

Սրանք

Ինչո՞ւ յեն փախել

Բիթլիսից, Բաղդադից, Մուշից՝

Ինչո՞ւ յեն մնացել թափված.

Թող գնան Բիթլիս, Բասեն—

ել

Ինչո՞ւ

Երզրուհի առավ

Անհաղթ Անդրանիկ փաշեն...»

Յե՛վ ես մեծ մտքերից հողնած՝

Գնաց տուն, վոր փաստոն խաղա՝

Իսկ նրա խանութի առաջ

Մեռնում եր մի վորբ յերեխա՝

Այսպես եր՝

Խանութպան Համոն—

Հավատում եք՝ ա՛յն ել չտեսավ,

Վոր Պողոսը դարձավ զինվոր

Ու մինչև Պերեմիշլ հասավ...

Բայց յերբ առևտուր չկար,

Վորպեսզի ձանձրույթից չըքնի—

Համոն յերկա՛ր-յերկա՛ր

Յերգում եր՝

«Մեր

Հայրենիք...»

Չ. Գ.

Յերևան:

Այսինքն—Նայիրի:

Այսինքն՝ այստեղից սկսած  
Գնում ե դարերի հեռուն  
Հնամյա, հին մի յերազ,  
Յերկիր մի՛ դարերի ուրու:  
Աշխարհի ճամփեքի մեջտեղում,  
Ուր գալիս են, խառնվում իրար  
Արևմուտքն ու արևելքը հին—  
Կանգնել ե—դարերի ուրու—  
Հնամյա յերկիրը՝ Նայիրին:

Վորպես արյունոտ հարցանիշ՝  
Դարերի մեջ մեխված վաղուց՝  
Կանգնել ե յերազի նման—  
Յեվ չկա՞ Նայիրի ուրիշ...

Աշխարհի այն անեղ որերին,  
Աշխարհի ճամփեքի մեջտեղում,  
Ուր յեղել եր հին Նայիրին—  
Կանգնել եր—խանութպան Համոն:

Կանգնել եր խանութի առաջ,—  
Նայիրի պես «հզոր», «անսասան»—  
Գնացել եր արյունոտ ռազմադաշտ  
Համազասպը՝ «քաջ ջանքեզար»:

Իսկ նւ անց յերկուսի: մեջտեղում,  
Ակնոցը նայլըյան քթին՝  
Կանգնել եր վարժապետ Սողոն՝  
Նայլըի հարազատ վորդին:

Դարերի մշուշից յեկած,  
Ջեռքին՝ հնամյա մի նետ—  
Դարերի մշուշի վրա  
Գրում եր՝ «Վեց վիլայեթ...»

Վհնց իմանար Սողոն,  
Կամ «ղարիբ», «գաղթական» մշեցին՝  
Թե ինչո՞ւ Կարպատներն առան  
Ու Ռեյմսի տաճարն այրեցին:

Ե՛ն ել նա հաղիվ հասկացալ,  
Վոր յերբ ոուսը քաշվեց Վանա—  
Ուզեց, վոր յերկրի յերեսին  
«Սայու անուն չմնա...»

Վողբալով Նայիրին հարազատ,  
Աշխարհի ճամփեքի միջում—  
Վարժապետ Սողոն հուսահատ  
Հարցնում եր՝ «Ինչո՞ւ, ինչո՞ւ...»

Յեւ միայն Պողոսն եր, վոր արդեն  
Դեպոյից ընկած Պերեմիշլ՝  
Սմբանում եր վողով ու սրտով  
Ու մտքեր ընդունում ուրիշ:

Չուլվում եր բանակին են մեծ,  
Վոր հուզվում եր արդեն, խլրտում,

Վոր պիտի աշխարհը ցնցեր,  
Յերբ դառնար կրկին մի որ առն:

Բայց նրանք դեմ-դեմի կեցած  
Այն անեղ, ահավոր կռվում  
Արնաքամ դեռ կռվում եյին  
Հայրենի դաշտերից հեռու:

Իվանը, Հանսը, Ժանեն—  
Մոսկովցի, փարիզցի, բերլինցի—  
Բողոքը մի հսկա, բյուրանուն  
Բանվոր,  
Մուշա,  
Գյուղացի:

Յեւ նրանց դիյերի վրայով,  
Լոնդոնից մինչև Կապուտան—  
Անցնում եր յերկաթե քայլով  
Մի հրեշ՝ անունը Կապիտալ:

Գալիա եր Բերլինից, Փարիզից,  
Գալիս եր—հյուսիսից դեղին,  
Անցնում եր Նայրի վրայից,  
Բռնել եր Բաղդադի ուղին:

Գլխի տեղ—հսկա մի բերան,  
Գլխի տակ—անսահման մի փոքր,—  
Կանգնում եր դիյերի վրա,  
Խմում եր արյունը բոսոր:

Հագել եր—պուրպուր, վոսկի,  
Շողմում եր արևի ներքո:

Ժպիտը ճարպոտ յերեսին՝  
Սըշավում եր հաղթական յերգով:

Յեւ Նրա յերգին գերի,  
Բաղդադից մինչև Լիոն,  
Սընաքամ դարնվում եյին  
Զորքերը՝ միլիոն-միլիոն...

Սընաքամ կռիվն այս անկող  
Վերջ պիտի չունենար դուցե,  
Թե բանակը մեր յետ չնայեր,  
Զկանչեր՝ կանգնեցեք, կանգնեցեք...

Բանակը:  
Բանակում մարդիկ,  
Վոր ուրիշ պայքարի սովոր՝  
Կանչեցին ուրիշ մի մարտի  
Բանակները այն անավոր:

Կանչեցին—ու դարձան իրանց  
Ստեպները անծայր ու լին,  
Վառեցին դաշտերի վրա  
Մըրիկներ անկող, հրեղեն:

Պարզեցին դրոշներ կարմիր,  
Կանչեցին աշխուժով հրձիգ.—  
— Բանվորներ համայն յերկրի,  
Միացե՛ք, միացե՛ք, միացե՛ք...

Վառեց նրանց կանչն ամբողջ  
Աշխարհը, վորպես հրդեհ,

Ծփացին բանակները հոծ  
 Ու ծփանքը, ահեղ, հորդեց:

Մոսկովը ծփաց փողփողուն,  
 Ինչպես մի բոսոր դրոշակ—  
 Պարզեց արնավառ աշխարհին  
 Մի կարմիր խնդության նշան:

Ու յելած հողմերից այդ վառ,  
 Վորպեսզի խորտակե այդ հինը՝  
 Լեռնացավ, վորպես դեկավար,  
 Ու կանգնեց Լենինը:

Ու յելած իրենց տեղից,  
 Հրահրած արնավառ վոսկով—  
 Նորից բանակները դեղին  
 Շարժվեցին դեպի Մոսկով...

Յեվ, վորպես դաժան մի յերազ,  
 Կարմիր զորքերի հանդեպ՝  
 Փարիզի մշուշից յելած  
 Կանգնեց դնդապես Գալլիֆեն:

Յերկաթե քայլերով նորից  
 Արշավեց, վորպես չար բազե,  
 Վոր կարմիր Մոսկովում փորի  
 Մի հսկա, նոր Պեր-Լաշեզ...

Ք. Ն.

Աշխարհի ճամփեքի մեջտեղում,  
 Ուր գալիս են, խառնվում իրար

Արևմուտքն ու արևելքը հին—  
 Ուր յեղել ե հին Նայիրին—  
 Կանգնել եր վարժապետ Սողոմ:

Մի հսկա հորձանքով ահեղ  
 Զորքերը անսահման ոռոսի  
 Վարարած ջրերի նման  
 Բաշվեցին Բասենից, Մուշից:

Նորից—խուժեց թշնամին,  
 Յեկավ—մինչև Ղարս հասավ...  
 Նորից դարձավ Նայիրին  
 Բարբարոս սրերի հեսան:

Նորից քաղաքներն հնամյա  
 Դարձրին հողին հավասար—  
 Դաշտերում անթաղ մնաց  
 Ժողովուրդը՝ հաղար-հաղար:

Նորից—անվրդով նստած,  
 Վորպեսզի ձանձրույթից չքնի—  
 Համոն յերկնք-չերկնք  
 Յերգում եր «Մեր հայրենիք...»

ԶԵ վոր Յերևան քաղաքում,  
 Հնամյա Մասիսին մոտիկ,  
 Մասիսի պես հզոր, կանգուն—  
 Յելել եր «Նայիրյան վոդին»:

Յելել եր «հզոր», «անհաղթ»,  
 Պարզել եր—յերեքգույն դրոշ,

Հառնում եր—«անկաշկանդ», «ազատ»—  
Ու չկանր Նայիրի ուրիշ...

Աչքերը դարերի հեռուն,  
Ակնոցը նայիրյան քթին՝  
Կանգնել եր վարժապետ Սողոմն՝  
Նայիրի հնամյա վորդին:

Դարերի մշուշից յելած,  
Ձեռքին՝ հնամյա մի նետ—  
Դարերի մշուշի վրա  
Գրում եր՝ «Վեց վիլայեթ...»

Իսկ այնտեղ—Կարմիր Մոսկովից  
Դեպի աշխարհները բոլոր—  
Անթել հեռագիրը նորից  
Կանչում եր ձայնով ահավոր:

Կանչում եր—յերկրից-չերկիր,  
Ձայնում եր խանդով բոցավառ.  
—Յելիր, սովալլուկ մարդկության  
Անեծքով գերված աշխարհ...

Հյուսիսից մինչև արևելք,  
Մինչև Հինդ, Հարաշ, Հնդուչին—  
Կանչում եր՝ «Յեղբայրներ, յելեք—  
Սո յե մեր կոիվը վերջին»:

Յեվ ահա այդ ահեղ կանչին  
Շիրակի դաշտերից—հանկարծ—

Ձրահապատը խանդով առաջին  
Նայիրի դաշտերում զնգաց:

Ձրահապատը զնգաց զնգուն,  
Շիրակի դաշտերից կանչեց—  
Նայիրի հնամյա յերկրում  
Կարմրավառ, անեղ հնչեց...

Ու կարմիր, հրդեհի նման  
Մրրիկներ անցան սրընթաց—  
Յեվ, յելած քնից հնամյա՝  
Արևելքը, կարմիր, խնդաց:—

Դու հիմա, յերկիր Նայիրի,  
Աշխարհի ճամփեքի միջում  
Կանգնել ես՝ խնդավան ելի,  
Հառնել ես՝ յերկաթե թռչուն:

Աշխարհի ճամփեքի միջում  
Ուր գալիս են, խառնվում իրար  
Արևմուտքն ու արևելքը հին—  
Դու հառնել ես նորից բոցավառ,  
Վառվել ես՝ կրկին, կրկին...

Պարզել ես ճամփեքի միջում  
Արնավառ, կարմիր մի դրոշ,  
Ու նորից քո խոսքը հնչուն  
Ձրնգում ե խնդությամբ վորոշ:

Յեվ վնչ թե վարժապետ Սողոմ,  
Այլ Պողոսն ե հիմա, քո վորդին,

Վոր դեմքը քրտինքով վողող՝  
 Լծվել է գալիքիդ յերթին:

Լծվել է որերիդ յերթին  
 Յեկ սրտում խնդություն ու կամք՝  
 Բյուրերի հեռ մեկտեղ, միասին  
 Այս յերկրագունդը հին  
 Քաշում է դեպի Ապագան...

ՎՆՐՁՍՏԱՆ.

Հիմա—  
 Ամեն տեղ—  
 Լսում եք—  
 Զնոց...  
 Յերկաթի գրգիռ:  
 Որերը—հրեատանի:  
 Ու կյանքը, հին կյանքը հիմա—  
 Հիշում եք—  
 «Տիտանիկ...»

Հիշում եք.  
 Յեղավ տոն,  
 Լույսի ու յերկաթի մեծափառ հանդես...  
 —Որոր...  
 Շփոթում...  
 Մարսելյեզ...  
 ... Անտես:

Ու ճչաց—  
 Սուր ճչաց

Կանչեց հոգեւոր—  
 Ռադիոն...  
 Կանչեց:  
 Դեպի քաղաքները բոլոր,  
 Դեպի կայանները բոլոր,  
 Ճշաց,  
 Սո՛ւր ճշաց  
 Կանչեց...  
 Ու մեռան:  
 Գնացին:  
 Ո՞ւր...

—Որերը թռչում են, թռչում են արագ,  
 Որերը—կրակ,  
 Պուրպուր...

Ուզում ես՝ բռնեմ հոգիդ աչսորվա—  
 Ու ծանր,  
 Յերկաթե մի գիսկի նման—  
 Նետեմ—  
 Ո՞ւր նետեմ—  
 Ո՞ւր...

—Դեպի կյանքը գալիք,  
 Պուրպուր...

Շինվում ե աշխարհը հիմա,  
 Շինում են  
 Փողոց առ փողոց—  
 Մասկալցի,  
 Բանվոր մի իվան,

Մի Չինկ-Ֆու,

Մի Հանս,

Մի Պողոս:

Յես ասում եմ՝ աշխարհը կդառնա:

Մի հանձը խնդության փողոց,

Ու Չինկ-Ֆուն Պեկինում կխմե

Քո կենացը, Բարթոլո, Պողոս...

Իսկ չեթե հույսերից իմ այս վառ

Իմ սրտում պիտ մնան վերքեր—

Յես ելի՛ր քո փառքը կերգեմ,

Իմ հզոր, յերկաթե չեղբայր:

Կերգեմ քո կռիվը մեծ,

Աշխատանքդ հզոր, անծիր,—

Այս պոեմս—քո կամքը յերգեց,

Այս պոեմս—դու չերգեցիր:

Թե խաբեն ուրերն այս հրկեզ՝

Սրտով միշտ քեզ պես ու քեզ հեն—

Յես ելի՛ր քո փառքը կերգեմ—

Յես—չնչին

Վեջին

Պոեմ...

## ՄԱՃԿԱԼ ՍԱՔՈՅԻ ՊԱՏՄՈՒՅՅՈՒՆԸ

(ՊՈՆՄ.ԳԵՂՋԿԱԿՍՆ)

**Ք**եզ համար եմ պատմում, գեղջեւկ,  
Խրատական զրիցը ես:  
Ականջ արա, լսիլ լսի դու,  
Խելքի կտոր թե վոր ունես:  
Ռանչպար, ուշով լսի հիմի,  
Թե վոնց քո ես ախպեր Սաքոն  
Աղի համար գնաց կռիվ,  
Կուռը կտրած չետ եկալ տուն —  
Ու թե ընչեր արալ Սաքոն  
Ու վճնց հասալ իր ուղածին —  
Ու թե ընչի՞ մաճկալ Սաքոն  
Դեմ ե հիմի պատերազմին:

### I

Մաճկալ Սաքոն իրանց գեղում  
Իրա որում ապրում եր խեղճ:  
Գեղի ծերին ուներ մի տուն,  
Երկու թիզ հող վարելատեղ:  
Եդ վարելու տեղն ել վոր կար —  
Գեղից հեռու, քար ու քոլոտ:  
Արտը հեռու, վարը դժար —  
Աշխատում եր տարին բոլոր:

Ու աշունքին թե լավ ըլեր—  
 Մի չոր հաց եր իրան մնում,  
 Եդ չոր հացն ել թե վոր չլեր—  
 Ուրիշի յեր մշակ գնում:  
 Ինքը ջահել—յերիտասարդ,  
 Տունը պառավ հեր ու նանի,  
 Բրախնք թափում գիշեր ու գոր—  
 Պահում եր տուն ու ընտանիք:

## II

Ես որումն եր մաճկալ Սաքոն,  
 Յերը գերմանու կռիվն ընկավ:  
 Ի՞նչ իմանար մաճկալ Սաքոն—  
 Ո՞վ ե սարքում կռիվ ու դավ:  
 Ի՞նչ իմանար Սաքոն ռանչպար,  
 Թե ընչի՞ յեն կռիվ անում:  
 Շմտ եր տեսել իրա որում  
 Եդ նեմեցին կամ գերմանուն:  
 Ինքը մենակ են իմացավ,  
 Վոր գգիրը եկավ մի որ,  
 Թուղթ ե եկել քաղքից, ասավ,  
 Թե ջահելին տանեն գինվոր:

## III

Ըլի՞լ ե հեչ, վոր գենք առնի  
 Ու հարուստը գնա կռիվ:  
 Դե հայտնի յե սաղ աշխարքին,  
 Վոր խեղճին են տանում կռիվ:  
 Եսպես եկան հավաքեցին

Գեղի քյասիրք-քյուսուր խալխին.  
 Բեսի տղին ձեռ չտվին—  
 Միկուն վերի ծաղլիկ եր խի...  
 Բա գզիրանց թաղի Համբոն,  
 Բա Մելիքանց Սեթը մեկ ել...  
 Դե ով ուներ ծանոթ ու փող—  
 Սիպտակ բլեթ եր նրան եկել...

## IV

Գեղի ծերին հերը կեցած՝  
 Ճանապարհ եր դնում տղին,  
 Սրտին հազար կրակ ու ցալ,  
 Սրտին հազար աղ ու լեղի:  
 Ու Սաքոյի վզոյն ընկած  
 Մղկտում եր պառավ նանին  
 Ու անիծում վիշապ ու չար  
 Եղ նեմեցին ու գերմանին:  
 Ի՞նչ իմանար նանը պառավ,  
 Վոր մեղ չունի գերմանն եղաեղ,  
 Վոր հարուստն է խեղդում իրան  
 Ու են խալխին՝ իրա պես խեղճ:

## V

Ի՞նչ իմանար պառավ նանին,  
 Վոր թե գերման, թե հայ, թե սուս  
 Ունևորն է իր թշնամին,  
 Ու հենց իրանց ոեսը առուզ:  
 Վոր դրանք են կռիվ քցել,  
 Խալխին հանել իրարու գեմ,  
 Վոր իրարու արուն ծծեն—  
 Իրանք վրեն նստեն—ուտեն:

Վոր գերմանու խեղճն էլ հիմի  
 Եղպես գրկած իրա նանին՝  
 Լաց ե ըլում աղի-աղի,  
 Վոր գրկում են իրան բանից:

## VI

Մնաս բարով ասով Սաքոն  
 Իրա սլառայլ ծնողներին:  
 Մտիկ ավեց աչքի տակով  
 Վերջին անգամ իրանց գեղին:  
 Տեսավ՝ ենտեղ գեղամիջին  
 Միկուն նստած կապուտ մի ձի,  
 Ուրախ-ուրախ, թամքին խուրջին՝  
 Արտն ե գնում հրեն հնձի...  
 Ու յեակից տեսավ սեսին  
 Չուխեն հագին, տեսքը գոռոզ:  
 Հրաման եր տալիս աղին,  
 Հեռն էլ ցնցում փորը տուզ:

## VII

Եսպես Սաքոն տխուր մի որ  
 Կռիվ գնաց գերմանու դեմ:  
 Գեղում մնաց հերն հալիվոր,  
 Պառավ նանին մնաց անտեր:  
 Եստեղ հարուստ ուսը եկավ,  
 Բռնեց յախից Սաքոյի հոր՝  
 Դու յիլ մի խեղճ մարդ ես, ասավ,  
 Տղեդ սալգաթ, գու հալիվոր:  
 Արկեմ, ասավ, մշակներին

Արադ հնձեն, բերեն քո տուն:  
 Մշակներն ել ենպես բերին,  
 Վոր մի բուռ եր արտը բիթուն:

## VIII

Ես ժամանակ Սաքոն ֆոռնթում  
 Թոփ եր քցում խալխի վրա:  
 Մեկ ել, ըհը, դեմից մի թոփ  
 Թռավ—եկավ, դիպավ նրան:  
 Ընկավ Սաքոն արնակալած  
 Ու շուռ եկավ հողը գլխին,  
 Ու թե շունչ կար փորում հալա—  
 Են ել փչեց, կտրավ լեղին:  
 Ու չիմացավ Սաքոն ել բան,  
 Միայն վոնց վոր երազի մեջ՝  
 Տեսավ նանին՝ վրեն չոքած  
 Կծով ջուր եր տալիս իրեն...

## IX

Աչքը մեկ ել բացեց Սաքոն—  
 Պիտերում եր, լազարեթում,  
 Կուռը կտրած, անտեր ու վորք...  
 Եստեղ բերին, տվին մի թուղթ:  
 Կարդաց Սաքոն ու իմացավ՝  
 Հերն եր նամակ գրել գեղից;  
 Սիրտը կալեց արցունք ու ցավ  
 Ու յետ՝ փորում կտրավ լեղին:  
 Են եր գրում պառավ ապին,  
 Թե վոնց ուսը հունձքը կերավ

Ու հետո յեւ, նոր գարունքին  
 Նստավ իրանց հողի վրա:  
 Ու թե պառավ նանին մեռավ,  
 Ինքն եւ անտեր ու հալիվոր՝  
 Մուրացկան ե գեղում իրանց,  
 Թող վող դրկի՝ ունի թե վոր...

## X

Դիրը դրեց Սաքոն մի կողմ  
 Ու լաց ելավ եստեղ մեկ եւր  
 Ու միտք արավ մաճկալ Սաքոն,  
 Թե ընչի՞ յե կռիվ եկել:  
 Ո՞ւմ համար են հավաքում եղ  
 Գյասիրավոր, բանվոր խալխին,  
 Կռիվ քցում իրարու հետ,  
 Արուն կապում սաղ աշխարքին:  
 Ու թե ընչի՞ եղքան հանդին,  
 Եղքան տուռզ աղեք հազար  
 Ընենց չելավ՝ Ֆուսթ գային,  
 Կռիվ տային հետ-հավասար:

## XI

Ու միտքն եկան հազարավոր  
 Են տղերքը իրանց պոլկի,  
 Դիրը քյասիր-աշխատավոր,  
 Գործը թողած՝ եկած դորքի:  
 Ո՞վ ե, ասավ, քչել դրանց  
 Իրանց անից, գործ ու կարգից.  
 Իսպես տվել սրի բերան՝

Հեռի մարդից ու աշխարքից:  
Ո՞վ է դրանց ավել պատրոն,  
Բերել-քցել սար ու չուր—  
Հազար թոփի, պուլեմեաբի,  
Հազար-հազար թվանքի կեր...

## XII

Հազարեթում ընկած հապիս  
Միաք եր անում Սաքոն: Մի որ  
Եկան ասին թե՛ վնդջ ըլես,  
Չկա ել թագ ու թագավոր:  
Ասին՝ ոսի հողի վրա  
Ազատութեն հիմի պաի...  
Լավ է, ասավ Սաքոն իրան  
Ու գուրս գրվից լազարեթից:  
Վոնց վոր մարութ թագա ծնած  
Քուչա յելավ Սաքոն թիլ-թիլ:  
Քուչում բան չեր փոխվել հալս,  
Նայող չկար քյասիր մարդին:

## XIII

Թագավորը գուղ է, չկար,  
Համա նրա տեղը թախտին  
Նստել էյին թե յենեբալ:  
Թե ավիցեր-հարուստ մարդիկ:  
Չեր վերջանում կախիլ էլ յեա,  
Ել յեա գորքին քշում Փոտնիթ,  
Ել յեա ախպեր-սալգաթի հետ  
Սոսում էյին շառ ու գոտով:  
Յելավ Սաքոն, դնաց դիվան,

Թե ապրուստ տան, խարջ տան փորձի—  
 Ըսկի ունիին նայող չեչալ  
 Ու ուշք դնող նրա սրին:

## XIV

Ման եր դալիս եսպես քաղցած  
 Սաքոն եղ մեծ քաղքի մեջին:  
 Ու մի որ ել ասին՝ հեռվանց  
 Մարդ է դալիս—«ընկեր Լենին»:  
 Ասին՝ ինչքան աշխատավոր,  
 Ինչքան բանվոր, ունչպար վոր կա —  
 Եդ բուրբի մեծն է Լենին,  
 Եդ բուրբի առաջնորդը:  
 Ինչ բանվոր կար եղ մեծ քաղքում —  
 Իրիքը վակղալ դնաց, վոր են  
 Լենին ասած ընկեր մարդուն  
 Պատիվ բունեն, դիմավորեն...

## XV

Յերալ ինքն էլ գնաց վակղալ:  
 Առաջ անցավ սալդատ Սաքոն:  
 Եդ սհաթին պոեզն եկավ,  
 Պոեզի մեջ քսան վագոն:  
 Ու դուրս եկավ ընկեր Լենին,  
 Բանվոր խալխը տվավ ուռա:  
 Սաքոն խառնեց նրանց ձենին  
 Ըռանչաբարի ձենը իրա:  
 Ու յերբ մի քիչ ձենը կտրավ—  
 Խոսեց Լենին ժողովրդին,

Ու յետ ենպես խոսքեր ասավ,  
Վոր ջուր խմեց դիմի սրտից:

## XVI

Մինչև հիմի, ասավ Լենին,  
Աղի համար կռիվ արիք,  
Հիմի վախտն ե, վոր ձեր սլին  
Շուռ տաք ել յետ՝ դեմ տաք աղին:  
Ասավ՝ բուրժուշն ե թշնամին  
Կռիվ զրկած բանվոր խալխի.  
Նա յե խմում արջուհն հիմի  
Փողովրդի ու աշխարքի:  
Ձեզ կռիվ ե զրկել, ասավ,  
Ձեզ պես հալսւ բանվորի դեմ,  
Վոր ձեր ձեռով տիրե աշխարհ,  
Դուք կոտորվեք—ինքը ուտե:

## XVII

Ել վերջ, ասավ ընկեր Լենին,  
Ես արնախում պատերազմին.  
Պատերազմը ներսում պտի,  
Վոր բուրժուշի հողին հանի:  
Ի՞նչ ունենք մենք սալլաթի հետ—  
Ըլի նեմցի, ըլի ոսի.  
Ամեն սալլաթ հալա տգետ  
Ու բուրժուշի ձեռին յետիր:  
Մենք բարև ենք զրկելու եզ  
Քերման գորքին ու բանվորին,

Վոր վեր կենա բուրժույի դեմ  
Քցի նրան ու տրորի...

## XVIII

Սաղաղութեն ֆոռնթում, ասավ,  
Կռիվ ներսի բռնավորին.  
Հարըստի հետ անենք հեսար  
Ու տանք նրա տուղ փորին:  
Ու յերբ, ասավ, հեսար արինք  
Ու բուրժույի մահը տեսանք—  
Հողը կտանք ըռանչպարին,  
Բանվորներին զավոդ ու հանք:  
Ել վեր, ասավ ընկեր լենին,  
Ու բուրժույի հաշիվը տես,  
Կռիվն է ես, ասավ, վերջին—  
Բանվոր խալխի կռիվը մեծ...

## XIX

Եսպես ասավ լենինն իրանց:  
Լսեց Սաքոն ու հասկացավ:  
Միտը եկավ նանը մեռած,  
Հերն հալիվոր, կրակ ու ցավ:  
Միտը բերեց Սաքոն մեկ ել  
Ռեսանց հրեշ—բռնավորին.—  
Ասավ՝ գնամ յետ զեղը մեր  
Ու տամ խշտով նրա փորին:  
Պոեղ նստավ եղ որ Սաքոն,  
Եկավ-հասավ զեղը իրանց,  
Մտիկ արավ աչքի տակով—

Դար չեր ճնացել քարի վրա...  
 Վնչ հեր կար ել, վնչ մեր, վնչ տուն,  
 Հողն ել ուսանց տղի ձեռին.  
 Եդ եր դատել մաճկալ Սաքոն  
 Ի փոխարեն կարած կոխ...

## XX

Գնաց Սաքոն աչքը արուն  
 Ու ձեն տվալ ուսանց ցեցին.  
 Մտածել եր ճանապարհին,  
 Վոր մի քացոյ նրան քցի:  
 Բայց դեմ յելալ եղանդ նրան  
 Տոգած տղեն տանուտերի՝  
 Հնապարտ կեցած դռան վրա,  
 Ձեռը դրած մաուզերին...  
 Ռեսանց տղա Միկուն եր եդ,  
 Վոր տնումը նստել հանգիստ,  
 Կերել, խմել—ու հիմի յել  
 Դարձել եր ցեց—մաուզերիստ:

## XXI

— Հը՞, մեր տղա, արի մի գնա,—  
 Ասավ հնապարտ տղեն ուսի.  
 Դո սաղ կոխց վախեցել չեմ—  
 Պտի վախեմ հիմի կեսից...  
 — Բա մեր հոգը... ասավ Սաքոն.  
 — Հոգ,— քրթմնջաց ուսի տղեն.—  
 Ընենց մի հող հիմի տամ քեզ,  
 Վոր քեզ համար լավաշ թխես...

Բանի թեզ ե գնն, ասով.  
 Մտիկ արա, ասով, ձեռքս...  
 Ու ձախ ձեռը բեխին տարով,  
 Աջը դրավ մատուցերին:

## XXII

Թողեց Սաքոն գեղը իրենց,  
 Փախավ դաշնակ մալգերխտից,  
 Եկավ Գյումրի քաղաքը մեծ,  
 Վոր ետեղից մաշին նստի—  
 Գնա նորից Մոսկով քաղաք,  
 Ուր որենք եր սալեատական,  
 Ուր ել չկար սես ու աղա  
 Վոչ ել դրանց նման մի բան:  
 Ուզեց Մոսկով գնա ելի,  
 Անցնի ել յետ ճամփին դժար,  
 Տեսնի թե ի՞նչ կասի Լենին  
 Հայաստանի խալխի համար...

## XXIII

Գյումրի եկավ Սաքոն գեղից  
 Ու գյումրեզվա վակզալի քով  
 Ըռաստ եկավ մի լավ աղի,  
 Հեաը զրից արավ խելքով:  
 Բանվոր եր եդ ծանոթ տղեն,  
 Պարավոզ եր սեմոնտ անուս.  
 Ճանաչում եր հալա գեղեն  
 Մեր Սաքոյին, հորը, նանուն:  
 Զրից արին սրտանց: Մեկ ել

Ես բանվորը, թե՛ հն, շուտով  
Տի դաշնակի յախից բռնեն,  
Վոր սավեաի ըլի հետո...

## XXIV

Ու ցույց տվալ բանվոր տղեն  
Եդ դեպոյի դեսը մի քիչ,  
Վոնց վոր վիշապ երկաթեղեն՝  
Բրանեվոյի պոեզը մեծ:  
Մերն ե, ասավ, Սաքո՛ ախպեր,  
Ըստեղից ենք նշան տալու...  
Դու յեւ մնա, ասավ, մեզ հետ—  
Ել իզուր ես Մոսկով դնում...  
Մնաց Սաքոն: Մի շարաթ անց  
Բրանեվոյի վրից մին ել  
Հարայ տվին, քշեցին ցած—  
Դե դաշնակն ել հո չէր քնել:

## XXV

Կռիվ, կռիվ դաշնակներին,  
Իշխանութեն սավետական...  
Սաքոն ինքն ել գնաց կռիվ,  
Չնայած վոր կուռը չկար:  
Մի քանի որ Գյումրի քաղքում,  
Բայազեթում, Ղարսա բերթում  
Կարմիր բայդազ տեսալ Սաքոն,  
Սավետական իշխանություն...  
Բայց հարս տես, վոր ըռանչողը  
Խալիսը՝ յեսիր ցեց դաշնակին՝

Հասկանում չէր սավետական  
Իշխանության կարգը կարգին:

## XXVI

Սեպուն եկավ իրա զորքով,  
Մավզերխատներ բերավ հազար,  
Կռիվ եղավ եդաեղ հինգ որ,  
Հինգ որ եսպես տվին իրար:  
Կռիվ տվին մերոնք հինգ որ,  
Վերջը քաշվան Ղազախու սար.  
Եդ որվանից մաճկալ Սաքոն  
Բալշեիկ էր, կուսակցական:  
Ու բալշեիկ տղերանց հետ  
Գնաց Բագու ու մի տարի  
Չանցած՝ եկավ իրանց գեղ յետ,  
Վոր տա ոեսանց տղի փորին...

## XXVII

Եկավ—գեղը են չէր հո ել.—  
Աղքատ խալխը յելել վոտքի—  
Վոչ Միկիչ էր գեղում թողել,  
Վոչ դաշնակի մուռթ ու քիթ:  
Հարուստներից ով մնացել—  
Մաճկալ Սաքոն հախից եկավ,  
Ու հաստատվեց եդ գեղում ել  
Իշխանութեն սավետական:  
Շինականը կպավ դործի  
Ու պատերազմ չկար ել յետ—  
Վոչ ինգլիզի, վոչ ել նեմցի  
Ու կամ թուրքի, վրացու հետ:

## XXVIII

Հիմի Սաքոն իրանց գեղում  
 նախագահ ե գեղխորհրդի  
 Վախտ-վախտ նստում գիր ե գրում  
 Բանչպարական «Մաճկալ» թերթին:  
 Ու թե գեղում խոսք ե ըլում  
 Պատերազմի-բանի մասին—  
 նա միշտ են ե զրից անում,  
 Թե ինչ ստավ ընկեր կենին:  
 Բանչպար, դու լավ լսի նբան,  
 Մտիկ արա կարած կռին,  
 Ու թող ըլի ել քեզ խրատ  
 Ես Սաքոյի զրիցը հին:

## XXIX

Մաճկալ Սաքոն ել քեզ խրատ,  
 Ես զրիցն ել քեզ որինակի  
 Մենք շառ հունենք խալխի վրա,  
 Վոչ ել կռիվ ու պատերազմ:  
 Համա թե վոր եկան մեր դեմ  
 Բուրժուճները, կռվեն միթամ—  
 Կարմիր Բանակ հիմի ունենք,  
 Դրանց ուխին մի լավ կտանք:  
 Ման թշնամուն հիմի հարուստ,  
 Մեր տերության վրա թե գան—  
 Բանվոր խալխին խաղաղ ապրուստ,  
 Իշխանութեն սովետական...

ԿՈՍՏՈՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Ալեքսանդր Մյասնիկյանի հիշատակին

Այստեղ և Կոմունարների Պատը:  
Ցցված և ահա այստեղ նա:  
Այս փոքրիկ,  
Փորփրած այս ֆասադը:  
Այս փլատակը դեղնած:

Մնացորդն և առաջվա պատի:  
Մի փոքրիկ կտորը:  
Մնացել և այն որից այգուկես,  
Վորպես յեղել և:  
Վրան՝

Հատիկ-հատիկ—  
Գնդակների տեղերը:  
Մեկ ել,

Հենց այդ հին քարերի վրա,  
Վրեժից կիզված իր թակով՝  
Փորփրել և դեմքեր  
Զարհուրած

Մի քանդակագործ:

Քանդակել և ապա նա մի կին,  
Վոր մեջքը քարերին հպած,

Անսահման ցասումը դեմքին,  
 Ստինքները բաց՝  
 Յերկարել ե ձեռքերն, ահալոր,  
 Յեղ տենդոտ դեմքը թշնամուն՝  
 Մունչում ե՝

„La Commune est mort—  
 vive la Commune!“

Նա ինքն ե:  
 Վոզին հոմունի:  
 Ծառացել ե:  
 Կարձիկ ե ել ներել:  
 Յեղ շուրջը,  
 Տղամարդ ու կին,  
 Նրանք են.—

—Փարիզի  
 հոմունարները:

Բարձրանում ե սրտից իմ  
 Ցասման անսայր ալիք:  
 Ուզում եմ թվել յես նրանց:  
 Բայց անթիվ են.  
 Վորին յես թվեմ:  
 Այդ նրանց ե,  
 Յեղներով վերսալից՝  
 Սվիններով հնձել  
 Գալիֆեն:

Այդ նրանց վրայով ե, վոբ՝  
 Պատվանդան շինելով այդ դեյերը՝

Բարձրացել է մի ուր  
Տյերը:

Այստեղ են խմբերով բերել  
Ու հպել պատին:  
Սուլել են գնդակները—  
Դիպել են—  
Աչքերին,  
Քունքերին,  
Ճակատին:  
Ծակել են մարմինները,  
Մսերից անցել—  
Ու փորել են պատը:  
Սուլել են անընդհատ, անընդհատ:  
Կուտակվել է մինչև  
Հենց այս պատի առջև  
Դիակների մի պատ:

Բարձրացրել են ձեռքերը վեր,  
Ծակել են ձեռքերը կրծքերին:  
Սեղմել են մարմիններն իրենց,—  
Տեսնում ես՝ այս քարին:  
Զայրույթից պայթող աչքերով  
Թքել են թշնամու յերեսին:  
Վորպես կարմիր դրոշ՝  
Բարձրացրել է զավակին մի կին:  
Ու վնչ սարսափ, վնչ աս:  
Վորպես սամուհ—

Վոռնացիք էն դեմքին թշնամու՝

Vive la Commune!

Հիմա չկան նրանք:

Հիմա չկան:

Բայց տեսնում եմ յես տհա բոցվող,

Հպարտությամբ գոցվող

Աչքերն աչն կոմունար աղջկա:

Տեսնում եմ բոցն աչքերի,

Վոր վերջին վայրկյանին թռած՝

Մնացել և տհա

Փորփրած

Այն քարերի վրա:

Ու նայում և:

Ի՛նձ և նայում:

Պատրմատ ևս—ասում և:

Հասկանիմ ես՝ վայրկյանից մահու

Մենք այսպես—ընկած—սպասում ենք:

Սպասում ենք՝ հպած այս տատին,

Սկանջներս ձայներով դեռ լեցուն են:

Մնում ենք, վոր դաք, աղատեք,

Վոր բերեք—հարմիր Հատուցումը...

Փարիզ:

Մշուշ ու ահ:

Յես,

Պոետս,

Լենինյան բայլելիկս՝

Պատին կռթնած ահա  
 Լսում եմ նրանց ձայնը,  
 Շշուկը:

Հասկանում եմ յես ձեզ, ընկերներ:  
 Դուք մոտիկ եք ինձ:  
 Հարազատ եք:  
 Մեկը թե դար հիմա և ինձ այստեղ տեսներ՝  
 Դժվար թե դեմքս նա ձեր դեմքերից զատեր:

Իհարկե, թշնամին թե դար՝  
 Պիտի կարծեր, թե դեմքս  
 Ձեր դեմքերից և՛  
 Գնդակով այս պատին քանդակած:

Ձեր մտից եմ յես ել, ընկերներ,  
 Իմ մեջ և մարմնացել ձեր աճյունը:  
 Նայում եմ յես փորած ձեր դեմքերին ահա—  
 Յեզ մեկ-մեկ ձանաչում եմ:

Հարկավոր եր յերկնք դեզերել  
 Յեզ հազար ճամփաներ մաշել,  
 Վոր գալի, կանգնեյի ձեր դեմ,  
 Վոր համնեյի այստեղ—

Պեր-Լաշեզ:  
 Բայց չտեսած դեռ ձեզ—

Յես ձեզ գիտեյի:  
 Յեզել եք դուք ընկեր  
 Թե յերդիս, թե ինձ:  
 Կարծես տեսել եյի  
 Ձեզ յերազում յես:

Ո, վաղուց զգացել եմ յես ել  
Ձեր վերջին հուզումը:

Ինչքան անգամ յես ել,  
Ձեր վերջին ջերմը ճակատիս՝  
Սաբափած կեցել եմ՝  
Հպված մի պատի:  
Յեւ սվիններ ինչքան  
Ծակել են կուրծքս, յերբ—  
Մի յերջանիկ դիպված  
Փրկություն ե բերել:  
Ինչքան եմ ազատվել հանկարծ—  
Ինձ կորած եմ կարծել յերբ յես...  
Ուղճւմ եք՝ ձեզ պատմեմ մի արյունաս

արկած՝

Մեր պայքարում փոքրիկ դա մի գեղջ ե  
Թեպետ:—

. . . . .

Մի փոքրիկ քաղաքում եր:  
Տասնեութը թվին:  
Թշնամին դիմանում եր:  
Կովելով՝ մենք քաղաքը սվինք:  
Թշնամին տիրել եր  
Քաղաքի դիրքերին:  
Մեր բոլոր ընկերները  
Ընկան գերի:

Յես և ընկերս՝  
Յերկու արմեյցի՝

Նեաեցինք զենքերս—  
Գնացինք:

Բոլոր փողոցները,  
Անկյունից-անկյուն,  
Թշնամին բռնել եր.  
Կապել եր փողոցները՝ վորպես հանգույց:

Յես անցա ցանկապատը՝  
Մտա այգին:  
Նկատեց ընկերոջս մի սպիտակ կազակ՝  
Յեղ ահա—մտրակեց իր ձին  
Յեղ ընկերոջս հասավ:  
—Վորտեղից ես,—հարցրեց կազակը:  
—Դե ետեղից, զիրքից...  
—Բաս հւր ե հրացանդ:  
—Նեաեցի:  
—Կարմիր արմեյցի՞ յես:  
—Այո:  
—Այո՞՞...

Յեղ մտրակեց իր ձին  
Յեղ քեց՝ նրա վրայով:

Ինձ ոգնության կանչեց  
Ընկերս ներքեից:  
Սուրը քունքին առավ,  
Անցավ թևից:  
Յերկրորդ հարվածն հետո  
Գանգը կիտեց:  
Յես հեռացա փութով,  
Վոր չկիտվեմ յես եր:

Այգիներէ միջով  
 Յետ մտա մի տուն:  
 Հետո՛ ընկա կրկին  
 Ծանոթ տեղեր:  
 Ու քայլեցի մթում, վորպէս կատու.—  
 Արշունը հոսում եր քաղաքում, վորպէս հեղեղ:  
  
 Ինձ բռնեցին շուտով:  
 Խուզարկեցին թեթև:  
 Բան չգտան վրաս՝ ձեռք չտվին:  
 Ինչ վոր յեղավ սակայն— մահից վատ չե՛ր միթե —  
 Ինձ քշեցին մի տեղ,  
 Մի տեղ,  
 Ուր կարող եր լինել մահը՝ կյանքի գեղից:  
 Մի հարյուր մարդու յետեից,  
 Ինձ ել խառնած նրանց՝ դաշտը տարան:  
 Ճամփին բռնում եյին  
 Սրան-նրան:  
  
 Փողոցներում տեսա  
 Հազար ընկեր:  
 Վճրը քունքից զարկած,  
 Վճրը վզից:  
 Վողջը ծանոթ մարդիկ,  
 Ծանոթ գեմքեր:  
 Հիմա գիակ դարձած՝  
 Փլատակներ մտի:  
 Սակայն թողնենք այդ դեռ:  
 Կայարանի հանդեպ  
 Կար «Сіу»-ի մի մեծ, հսկայական սեկամ:

Յուցանակի նման ցցված եր նա այնտեղ՝  
 Չույզ սյուներրի, կարծես զույգ վոտքերի վրա:  
 Ա՛յ, «Շիչ»-ի հենց այդ ցուցանակից  
 կախված էյին մերոնք... Հինդ սպիտակ մերկ դի:  
 Ինչ-վոր կանայք, հարբած, շուրջը պարոււմ էյին:  
 Լեզուները հանոււմ ու ծիծաղոււմ լիտի:

Յեղ կայարանն հետո...

Այնտեղ, դռան մոտիկ,  
 Յերկու լապտեր կար փոքր՝ սովորական, գազի:  
 Չորս ընկերներ այդտեղ մեկտեղ կախված էյին՝  
 Սև լեզուներն հանած ու վոտքերը հողից  
 Բարձրացրած հազիվ...

Կայարանի մոտից մեկ քշեցին դաշտը:  
 Յերկաթ բահեր տվին:  
 Յեղ փորեցինք անա մեր՝ ձեռքով մի մեծ  
 Յեղբայրական շիրիմ:

Յերկու հազար ընկեր մենք դրեցինք այդտեղ,  
 Լցրինք իբար վրա, վորպես ձկներ մզած:  
 Վորը թե չեր մեռել, կամ վիրավոր եր թե՛  
 Նրան նետոււմ էյին այդպես՝ մի աչքը բաց:

Հասկանում եք արդյոք, ընկերներ,  
 Թե ի՞նչ ապրեց հողիս այդ գիշերին,  
 Թե հարազատ, մոտիկ, յեղբայրական ձեռներ  
 Ինչքան, ինչքան անդամ ինձ դրեցին շիրիմ:

Իսկ առավոտ, յերբ յես  
 Դարձա քաղաք—  
 Դրված եր մեյզահնում  
 Մի կախաղան:  
 Շուրջը մարդիկ, կանայք,  
 Հագած-կապած.  
 Յեկեկ եյին կարծես  
 Զվարթ կարակ:  
 Ու անբռերներ ճերմակ,  
 Վարսնց շրթից  
 Հոսում եր, վորպես թերմացք,  
 Ինչ-վոր մի յերգ խրթին:

Յեզ բերեցին ահա, շրջապատած,  
 Մեր գինիումին՝ տկլոր, վորպես մորութ:  
 Նա քայլում եր հաստատ, գլուխը բարձր,  
 Կարմիր դրոշ ուներ կարծես բռնած  
 Իր կապույտ, իր լուրթ աչքերում:

Կախաղանի ներքև  
 Դրված եր մի արիկ:  
 Սաղանի յեր՝ վրան գրած «Բողո»:  
 Նա բարձրացավ վրան՝  
 Բարձր, բարձր.—  
 Ո, ինձ այնպես թվաց, թե շուռ կտա հիմա  
 Յերկրագունդը վտուով:

Նա նայեց այդպես իրա շուրջը՝

Հայացքը վորպես գերանդի:  
 Ու դլխատեց կարծես նա հայացքով իր այդ—  
 Թշնամական վաշտեր ու բանակներ անթիվ:

Ուզեց ինձ ել հանկարծ  
 Կարծես հնձի:

Հասկանում եք՝

Նա

Նայում էր—

Ի՛նձ:

Յեվ ճանաչեց արդյոք,

Հասկացանիվ,

Հասկացանիվ արդյոք, վոր հայացքը

Կախաղան էր, իմ դեմ ահազարհուր կեցած:

Բայց չտեսա ել յես:

Ել չխմացա:

Յերբ նայեցի հետո՝ նրա դին

Սրդեն կախված էր զած:

Ընկերներ,

Յես վճնց չխենթացա...

Այսպես է ահա, Պեր-Լաշեզ:

Յես փրկեցի կաշիս,

Բայց անողոճ յեղա,

Յերբ կարմիր բանակը կրկին

Մտավ քաղաք:

Ո, յերեք որ չանցած յես ունեյի արդեն

Կարմիր ձեռներ...

Հասկանձում եք արդյոք, ընկերներ,  
 Հասկանձում եք արդյոք հիմա թե—  
 Ինչքան ենք ունեցել մենք եւ  
 Պեր-Լաշեզի պատեր:

Այս պատերի ներքո յերբ ընկավ  
 Մեր վերջին ընկերը—

Այն որից

Մեր կռիվը անվերջ, անընդհատ ե:

Պեր-Լաշեզի պատեր ինչքան ենք մենք փորել...

Բայց ունենք մենք մի պատ, ընկերներ,—

Յեւ ուրիշ ե, ուրիշ այդ մի պատը:

Մոսկովում ե նա:

Հյուսիսում:

Այստեղից հեռու յե:

Չեղ ծանոթ ե սակայն նրա ճամփան:

Յեւ զիտե պայքարող բանվորը—

Լոնգոնում նա լինի, թե Ռուրում,

Վոր կոչվում ե նա՝

Կրեմլյան Պատ:

Պառկած են այնտեղ ընկերներ,

Վոր պիտի պառկեյին ձեզ հետ:

Նա մի կարմիր, մի նոր

Պեր-Լաշեզ ե:

Բայց ուրիշ, ուրիշ Պեր-Լաշեզ:

Հաղթանակի մի պատ:

Նրանով ենք փառքի մենք հասել,  
Աշխարհը յերկուսի կիսել:  
Նրանով ենք այսօր  
Հպարտ:

Մենք ենք փորել այդ պատը՝ հաղթանակից հետո:  
Մեր շարքերի համար  
Դա հաղթական կամար ե:  
Այնտեղից ե անցնում մեր հիմնականը, հունը:  
Պաշարով ենք դրել  
Ամեն մի քարն այնտեղ.  
Հաղթանակով հիմնել  
Մեր կարմիր Պանթեոնը:

Ձեզ գուցե ցնձրք ե թվում,  
Վոր աշխարհում հիմա  
Կարմիր Պանթեոն կա:  
Յեվ պատկած են այնտեղ քով-քով:  
Մեր բոլոր ընկերները՝ Մոսկովում  
Հոկտեմբերին ընկած:

Պատկած են նրանք, վոր ընկան  
Առաջին գրոհին մեր:  
Յերբ առաջին անգամ  
Զնդաց  
Հոկտեմբերի հիմնը:  
Յեվ առաջին այդ մեր  
Մարտիկներից բոցի—  
Պատկած են այնտեղ ընկերներ,

Վիթխարի, արի ընկերներ,  
 Վոր պայքարի համար մեր վեհ  
 Քառուղիներ բացին:

Սահայն բողբոջ այգ վեհ շիրիմների կողքին  
 Կա առաջինը, մեծը:

Այգ բողբոջ կողքին — այն մեծագույնը կա:  
 Կանգնած է նա այնտեղ, իբր անհաղթ փառքի  
 Մի վիթխարի վկա:

Պառկած է այնտեղ — Լենինը...

Մեր կարմիր Ղեկավարը —  
 Լսում էք...

Այդպիսի ղեկավար — չկան,

Ու չի՛ յեղեւ յերբեք —

Վնչ յերեկ,

Վնչ առաջ,

Վնչ հնումը:

Լենինը —

Ուղեղն էր մեր դասի.

Մեր դասի հոգին էր:

Նրա ամեն մասում

Հոսում էր մեր դասի արյունը:

Նրա մկանն ամեն,

Ամեն բջիջը մի —

Դասակարգի համար յեռում էր,

պայքարում էր:

Լենինը —

Դե վորպես յերկրագունդը:

Այսինքն՝ աշխարհը,

Վոր հավաքել ե կյանքը իր ջղերում:  
 Լենինը

Հավաքել եր իր մեջ—  
 Հիսուն հազար սերունդ:  
 Բանվորական, իհարկե,  
 Բանվորական սերունդ:

Դասակարգը  
 Դրել եր նրա մեջ իր ամբողջ մեծությունը:  
 Նա յեռանդ,  
 Կամք,  
 Յեվ գիտություն եր:

Դիպցիալին եր Լենինը  
 Դասակարգի մի նոր,  
 Վոր ձգտումներ ունի  
 Ընդհանուր:  
 Վոր փոխելու յե կյանքը  
 Հանուր:

Հարկավոր եր ամբողջ մի դասի  
 Ինչքան քրտինք ու ջանք,  
 Վոր ծնվեր հանճար մի այնպիսի,  
 Ինչպիսին եր ինքը...  
 Ինչքան յեռանդ եր պետք—  
 Արևմուտքից մինչև արևելք  
 Ու հյուսիսից՝ հարավ:

Այսպես  
 Ձուլեց նա կամքը մեր

Յեւկ հաղթութեան տարաւի:

\* \* \* \* \*

Այստեղ և

Կամունարներէ Պատը:

Յցլած և ահա այստեղ նա:

Այս փոքրիկ,

Փոր:իրած այս Ֆասաղը,

Այս փլատակը դեղնած:

Մնացորդն և առաջիւս պատի:

Մի փոքրիկ կտորը:

Մնացել և աչն որից այդպես՝

Ինչպես յեղել և:

Վրան՝

Հատիկ-հատիկ —

Գնդակներէ տեղերը:

Գշեցին հորդու-հորդու

Ու բերեցին այստեղ:

Ի՞նչ.

Թապեցին ձեզ թե՛

Կարծում են՝ խեղդեցին սպազան:

Ընկերներ,

Ընկաք թե վոր դուք —

Բայց,

Լսում եք. —

— Մենք կանք:

Դեռ կգանք:

Լցված է կյանքը հիմա  
 Մեր արշավի թինդով:  
 Մեր հսկողով լեցուն է:  
 Շուտով,  
 Շուտով կզանք,  
 Կրեքնք—Կարմիր Հասուցումը:

Վայրկյանը  
 Լարուն է հիմա, վորպես յերկունք:  
 Գալարվում է աշխարհը:  
 Պիտի ծնի:  
 Դեմառդեմ՝  
 Բանակներ յերկու:  
 Պայքար է գալիքի  
 Ու համառոդ հնի:

### Հինը

Հետո է ահա ներքևում:  
 Տագնապից զալարվում է:  
 Նվում է  
 Հավաքում է ուժերը,  
 Կուտակում.  
 Խեղդել է կամենում բնում  
 Լեռնացող ընդհարումը:  
 Սարապից զեղնել է  
 Յերեսի կաշին:  
 Գույնը թափել:  
 Չուել է աչքերը,  
 Հասել հյուսիս:  
 Չառանցում է նոր Ռուք,

Պեր-Լաշեզ:

Դիյեր,

Դիյեր,

Դիյեր.

Շշելուններ մսի:

Կարծում ե գալիքը,

Անխուսափելին

Գալու յե հյուսիսից:

Իհարկե, այնտեղ ե

Գլխավոր մեր բերդը:

Մեր գլխավոր ամրոցը—

Իհարկե, հյուսիսում ե:

Կղիմանմը սակայն մինչև որս մեր բերդը, —

Թե չլիներ կյանքում,

Հնդուչինից Ձանդու—

Մեր կենդանի հոսումը:

Թե չլիներ մեր շունչը Փարիզում,

Չլիներ Լոնդոնում կամ:

Յերկրադնդի յեթե

Յուրաքանչյուր մասում

Չբաղմանար, չաճեր

Հոկտեմբերի հունար:

Յուրաքանչյուր ինչում թե չշաշեր

Մեր պայքարի շունդը հոնդուն—

Հիմա հո չե՞ր Փարիզը գալարվի ներքեը

Հողաբքի տենդում:

Տեսնում եմ՝

Ներքեում տհա,

Փողոցների չեռում, շառաչում—  
 Լսում եք՝  
 Բառաչում ե սարսափը:  
 Բանվորական թաղերը խավարում—  
 Լսում եք—  
 Աղմկում են,  
 Խոսում են:  
 Վորպես վրեժ մի ալ—  
 Հոսում ե այնտեղից սարսափը  
 Դեպի Նոռալ:

Նրա շուրջը,  
 Վրան  
 Իջնում ե անա ազջամուղջը.  
 Թանձրանում ե վուալը.  
 Կորչում ե մշուշում շքազիծը լուսի:  
 Արդեն Նոռալը  
 Դողում ե, վորպես տերև, գալիքների անից:  
 Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք.—  
 Այդ թաղերի վրա  
 Շուտով կհննե արևը, վորպես դահիճ...

1925 Բերլին

ԲԱՆԼԱԿ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ, ՄՈՒԺԻԿԻ ՅԵՎ ՄԻ  
ՋՈՒՅԳ ԿՈՇԻԿԻ ՄԱՍԻՆ

I

Վարմիր գծից անդին—  
Թշնամիներ անթիվ:  
Ու հեռախոսը ֆրոնտից  
Հազում է  
Շիֆր:

Հեռախոսով հուզումը հասում է  
Կրեմլ:  
Կոմուտատոր N.  
Դեպի կարինեաը Իլյիչի:  
Լուրերը թափվում են շտապով  
Հասնում են հենց իրեն,  
Ու հասում են հետո  
Տապով  
Իր ուղեղի միջից:

Փրասեղանի հանդեպ  
Հանդիստ  
Նստել է Իլյիչը:  
Կարգում է:  
Կարգադրում:

Փրում:

Կուռտակել ե ուղեղը,

Սեղմել ե,

Կախել ե խոհերի գլխին,

Ինչպես ծանրածանր բուռնցք:

Կիտել ե հոնքերը ներքև,

Թերթում ե, քրքրում, ջրկում:

Պսպղում ե ճակատը լույսի դեմ,

Ինչպես ահագին յերկրագունդ:

Լարել ե ուղեղը Իլլիչը,

Ինչպես պողպատե դսպանակ...

Հարկավոր ե կովել, չզիջել...

Հարկավոր ե — կարմիր բանակ:

Հարկավոր ե ցնցել գյուղացուն

Ու բանվորին կրթել:

Հարկավոր ե քանդել հնի բերդը:

Հարկավոր են գրքեր, թերթեր...

Իսկ հետո՝ պարոցին կգա հերթը:

Հարկավոր ե բանվորի սղից

Պրոֆեսորներ ձուլել...

Հարկավոր ե, վեր ամեն ազախին

Սովորի պետութուն դարձնել...

Հարկավոր ե...

Վճրը թվել:

Հարցեր են՝ անծայր, անթիվ:

Իսկ մինչ այդ՝ հեռախոսը Փրոնտից

Հաղում ե—

Շիֆր...

## I

Հալաքել և ուղեղը Իլլիչը,  
 Լամբում և լուրերը ու ծամում.  
 Թռչում և ժամանակը, ինչպես սամում.  
 Ժամանակը քիչ և:

Բաց լինչ և.  
 Կողքի սենյակում —  
 Աղմուկ և.  
 Խոսում են բարձր.  
 Քարաուղարը մեկին համոզում և...  
 Մոտենում և Իլլիչը.  
 Բացում և դուռը մի քիչ —  
 Լսում և:

Մուժիկ և:  
 Ուզում և ինչ-ձոր բան:  
 Լսում և դռների միջից...  
 Ի՞նչ. —  
 — Անցել և ահագին ճամփա —  
 Յեկել և Իլլիչին...

Լսում և Իլլիչը՝ ուշիմ...

— Եխ-եխ, մուժիկ:  
 Մուժիկին հարկավոր և — մի գույգ կռիկե  
 Դիմել և մուժիկն ուրիշի —  
 Ասել են՝ չիք.  
 Դե նա ևլ — յեկել և Իլլիչին:

Բարկանում ե,  
 Հուզվում ե քարտուղարը.  
 Համոզում ե, վոր զնա էր գործին:  
 Անհողգողդ ե մոտփիկը,  
 Ինչպիս քարը.  
 Կարո՞ղ ես խանդարել.  
 — Հապա փորձի՞...

Նայում ե Իլիչը  
 Արանքից դռան.  
 Ժպտում են աչքերը մի քիչ ծուռ:  
 Հրում ե դուռը—  
 Զվարթ  
 Մոտենում ե հանկարծ գյուղացուն:

- Վճրանդից ես:
- Սիրիբից:
- Յե՞րբ:
- Հինգ ամիս ե՛ յեկել եմ մեր գեղից:
- Կարմիր արմենյի յե աղես...
- Ի՛նքս եմ զրկել աղիս:
- Հող ունե՞ս:
- Իհարկե՛ս Խլեցի՛նք:
- Ընչի՞ յես յեկել:
- Դեղիզսո՞ւս եմ:
- Խնդրել եմ գեղական գործիք—
- Ստացել եմ շատը:
- Ե՛լ ի՛նչ ես ուզում:
- Ծիծաղում ես
- Նայում ե Իլիչին ուշիմ...

— Երս-էրս, մուժիկ:  
 Մուժիկին հարկաւոր ե—մի դույզ կոշիկ:  
 Դիմել ե մուժիկն ուրիշի—  
 Ասել են՝ չիք:  
 Դե նա ել—յեկել ե Իլլիչին:

Ծիծաղում ե քահ-քահ Իլլիչը՝  
 Սորամանկ խիսդ ե աչքերում:  
 Բոթում ե մուժիկին,  
 Հետո—  
 Վերցնում ե մի թուղթ,  
 Գրում ե.—

«Ում վար հարկն ե:  
 Տալ մուժիկին մի զույգ կոշիկ»:

— Երս-էրս, մուժիկ...  
 Վերցնում ե մուժիկը գլխարկը,  
 Հետանում ե՝ հանելով փոշի—

### III

Կարմիր գծից անդին—  
 Թշնամիներ անթիվ:  
 Ու հեռախոսը Ֆրոնայից  
 Հազում ե—  
 Շիֆր:

Ու նորից նստել ե Իլլիչը,  
 Կարգում ե, կարգադրում, գրում:  
 Թոչում ե ժամանակը,  
 Ժամանակը քիչ ե:

Ու սեղմել ե նորից մեր Իլլիշը  
Իր ուղեղը՝ ծանրածանր բռունցք:

Ու նորից շտապում ե ուղեղը.  
Լափում ե խորհերը հիմա նա—  
Յեզ լ՛հնչը, լ՛հնչը կրիմանա  
Այդ վիթխարի ուժին...

— Եխ-Եխ, մուժիկ...—  
Քեզ հարկավոր եր—մի զույգ կոշիկ,  
Յեզ կոշիկի համար  
Ընդունեց քեզ Իլլիշը:  
— Բայց հասկաց՞՞ր, մուժիկ,  
Վոր հուներ Իլլիշը ժամանակ,  
Վոր Իլլիշի համար—  
Մեր ժամանակը քիչ եր...

## Լ Ե Ն Ի Ն Ք Ե Ռ Ի Ն

### I

Հայրը զենքով յեկավ գործարանից այգի որը:  
Դեմքը խիստ եր, անզամ մի քիչ մուսյր:  
Յերը մոտեցավ, ուղեց զրկի հորը՝  
Կամաց մի կողմ հրեց հայրը նրան:

Անխոս, հատեց թեյի Մխարը դուրսն եր,  
հեռուն եր.

Աչքը յերկանր-յերկանր հասել եր մի բանի:  
Դեմքին զեռ մնացել եր գործարանի մուրը:  
Այդ յերեկս խոժոռ եր հայրն Իվանի:

«Գնում ենք, մորն սասց, մենք լեհերի վրա:  
Հանել ե լեհերին մեր զեռ կլի Անտոնառը,  
Բայց հուշս ունենք, կնիկ, վոր կջարզենք նրանց»  
Կշարտենք—անթիվ տանկերով ել գան թե:

«Դենիկինն եր յերեկ, հեռս Կոլչակն եկավ:  
Ու լեհերն են հիմի... Վոչինչ, կնիկ—  
Կարմիր բանակը մեր բանվորական  
Սովորել ե քշել նրանց բնից...»

Այսպես յերկար խոսեց հայրը մինչև գիշեր:  
Խոսեց կովի մասին՝ բուրժուռյի դեմ:

Անցած հաղար-հաղար դեպքեր հիշեց,  
Հիշեց հուլիս ինչ-վոր ու հոկտեմբեր:

Յեվ նա տեսավ, տեսավ, թե ինչպես հոր  
Աչքերը հուր դարձան հետզհետե,  
Հուսարձակներ յերկու դարձան վոնց վոր,  
Վոնց վոր ուռմբեր, վոր նա պիտի եզուց նետե:

Ու վառելով այգպես իր բորբոքուն հայացքը՝  
Հայրը թռավ հանկարծ, յերսով վոտքի:  
Յեվ Իվանին թվաց թե  
Այրող գնդակ անցավ իր հոր մտքից:

Վոտքի թռավ այգպես ու սրբելով քրտինքը՝  
Հայրը ասավ. — «Արդյոք հասկան՞ում ես, կնիկ, —  
Մեր դորքերին եզուց խոսելու յե ինքը.  
Ինքը Լենինը մեզ պիտի ճամփա դնի...»

Հայրը այսպես ասաց ու գնաց քնեց,  
Վոր առավոտ ծեղին գնա բանին: —  
Բայց խոսքերը նրա վերջինն են  
Վառվեցին սրտում Իվանի...

## II

Հարկ չկա յերկար պատմելու  
Այդ բանվոր խոխի՝ այդ Իվանի մասին:  
Կապույտ աչքեր ուներ, գանդուր գլուխ.  
Դե ուռւ տղա յեր մի՝ ութ տարեկան հազիվ:

Իր բանվոր հոր հետ միասին  
 Գործարանն էր գնում նա յերբեմն:  
 Կամ հավաքած իր քաջ ընկերներին դրսի՝  
 Նա խաղում էր «Կոխի բուրժուշի գեմ»:

Ձիավոր էր լինում միշտ ինքը:  
 Նստած ձեռնափայտին պապի՝  
 Քշում էր փայտե ձին, մինչև ջերմին  
քրտինքը  
 Վողգեկով մարմինը՝ վերջ տար խափին:

Մտածում էր ի վանը. — յերբ մեծանա  
 Պիտի շոֆեր գառնա, կամ ողաչու.  
 Պիտի ձանի հետո — կարմիր Բանակ...  
 — Դեռ սպասիր, բուրժուշի,  
 — Դեռ կգն Վոյնիկա-ողաչուն, —  
 — Դեռ մեծանան...

Սակաչն հայրը կգուց պիտի գնա...  
 Պիտի ճամփա դնի նրանց — ընկեր Լենինը...  
 Պիտի խոսքեր տալի նրանց կգուց:  
 Իսկ ի՞նքը...  
 Պիտի այսպես տնում կլի նստած մնա —  
 Արդեն հասակն առած պատանի չե թեկուզ...

Յեվ նա դիակն արդեն Լենին քեռուն,  
 Հրեն նայում է նա այնտեղ պապի՝  
 Խորամանկ մի ժպիտ աչքերում,  
 Ահագին մի միաք հակառին:

Այդ նա յե, Լենինը: Այսինքն նա,  
 Վոր զեկազարն ե բանվոր դասի.  
 Նրա նկանն ե միշտ պլակատների վրա,  
 Միշտ նա յե, ամենուր՝ Մարքսի հետ միասին...

Հաչրը հաճախ նրան ցույց ե ավել յերկու  
 Այդ մեծերի պատկերքը:  
 Անգամ աշնանդ — նրա ալբուրենի գրքում՝  
 Նրանց նկարը կա:  
 Սովորել ե հորից ե գիտե նրանց յերգը՝  
 «— Յե-իի՛ի՛ի՛ր—բո-դո-բի՛ի՛ի՛ր—բան-վ՛ո՛ո՛ո՛ր  
 դա-առ-կա՛ ա՛ ա՛րգ...»

Պատմել ե հայրը նրան,  
 Վոր Լենին քեռին  
 Խեղացի յե, մեծ ե ու քաջ:  
 Այնքան, այնքան, այնքան,  
 Վոր աշխարքում ու բիշը — աջպիսին չկա:  
 Պատվիրել ե, վոր ինքն ել յերբ մեծանա՝  
 Յերթա նրա — այդ մեծ Լենին-քեռու ճամփով,  
 Վորի վրա թեկուզ հազար փուշ կու ցանած,  
 Բայց գնում են վորով գյուղացի ու բանվոր...

Բնու.

Այսպիսին ե Լենին-քեռին:  
 Յեղ վաղը նա ինքը պիտի խոսի:  
 Պիտի անցնի իր հաչրը՝ զենքը ձեռին —  
 Յեղ Լենինին լսի...

Այդ հո նման ե — զարմանք բանի՛...

Յեւ վորոշում ե ի վանը.  
 Ինչ եւ լինի՝  
 Վաղն առաւրտ կանուխ պիտի փողոց գնա  
 Յեւ տեսնի — ընկեր լինինն:

## III

Արդեն գնացել էր հայրը, յերբ արթնացավ:  
 Շաապ հագավ շորերը և թռավ փողոց:  
 Վաղ, վաղ, վաղ անցավ իրենց փողոցը  
 Յեւ ընկավ Կարմիր Հրապարակը՝  
 բանվորներով վողոց:

Ծփում ե Կարմիր Հրապարակը,  
 Ինչպես մարդկային մի անաստ:  
 Հավաքվել եր կարծես  
 Աշխարքը բովանդակ:  
 Վողջը բանվոր մարդիկ,  
 Հոր պես հագած:  
 Դրոշակներ անթիվ,  
 Անթիվ պրակատ:

Հրմշտկելով մարդկանց ու բռնելով՝  
 Փորձեց առաջ յերթալ, հորը կոչել:  
 Փորձեց յեղնել կողքի մի բանվորի վրով՝  
 Բայց բանվորը — պապի ձեռնափայտը հոչե՛ր:  
 Այդպես սեղմած — մնաց:  
 Փորձեց ելի:  
 Պատահեց մի մարդ հայհոյող:  
 Նորից մնաց՝ հողին մորմոքով լի:  
 Բայց ի՞նչ տեսներ — իր այն մի թիղ բոյով...

Հանկարծ մի ծով ամբողջ  
 Վոնց վեր գտաւ —  
 Դղրդաց հրապարակը,  
 Գոռաց ուռաւ:  
 Հետո լեց ամբողջը.  
 Բանվոր մի կէն  
 Իր կողքի ընկերոջը  
 Շշնջաց՝

«Լենինը...»

Փսփսաց նա եւ կողքինին:  
 Ու շրթից շուրթ անցավ՝  
 «Լենին, Լենին...»

Հասկացավ Իվանը.

— Այնտեղ և նա...

Շփոթված՝ գլխարկը հանեց —

Յեւ սեղմեց առամները, բարկությունից  
 գեղնած:

Եւ ճար չկար: Տեսավ՝ տեղ չէն առ իրեն:

Յեւ վորոշեց՝ անի, ինչ եւ լինի: —

Վոտքը խոթեց հանկարծ գրպանը կողքինի —

Յեւ բարձրացավ վրեն...

Թոռով ուսին նստեց

Մի բանվորի.

Բայց բանվորը ներքե շարտել

Զփորձեց եւ նրան նորից:

Պատույտ չեկա՛վ գլուխը, սիրտը ամուր թակեց:  
 կարծես աշխարքը վողջ նվիրեցին նրան:  
 Նայեց... Լենին-քեռին կանգնած եր տախտակե  
 Ամբիոնի վրա...  
 Ձեռքը առաջ մեկնած, գլուխը լաց,  
 Ինչպես տնում կախած աչն նկարի խորքից —  
 Իր հայրիկի ձայնով, մի փոքր բարձր՝  
 Նա պատգամ եր ասում բանվորական զորքին...`

Յե՛վ Իվանին հանկարծ այնպես թվաց,  
 Թե տեսել է ինքը նրան վաղուց.  
 Վոր աչք Լենին-քեռին պիտի սիրեր իրան,  
 Յեթե տեսներ «բուրժույ», «զորք» խաղալիս:  
 Ու մտածեց՝ եզուց չերթա տեսնի նրան,  
 Ասի՛ ինձ ել ղրկի, գնամ բանակ.  
 Ասի՛ ուզում եմ յես կարմիր շոֆեր վառնամ —  
 Լենին-քեռուն բոլոր իր մտքերը բանա...`

Այսպես՝ աչքերը չիւ Լենին-քեռուն հառած  
 Յերազում եր Իվանը:  
 Հանկարծ լուց Լենինը:  
 Ու դրդաց նորից բանվորական ուսան.  
 Ձեռքը մեկնեց առաջ — ու ըզավեց ինքն ել:  
 Զորքը ծփաց հետո ու շարժվեց առաջ:  
 Ու դրոշի վրա դիմացի նա  
 Տառ-տառ կարդաց վաղուց իմացած իր  
 բարք:

«Յերարդ Ինսերնացիանով»:

Դրոշակներ նորից: Այդ ինչքան են...  
 Յե՛վ կապելով իրար տառերն հազիվ՝  
 Կարդաց նորից Իվանը՝  
 «Կորչի՛ բուրժուազին»:

Յերգում եր զորքը «Ինտերնացիոնալը»:  
 Ինչն էլ գիտեր յերգել: Յերգեց: Նայեց՝ հեռուն,  
 Զինվորների նման, գլուխը բաց՝  
 Յերգում եր յերգը նույն — Լենին-քեռին...

Ու խանդոտ մի ըոց աչքերին՝  
 Նայեց նորից Իվանը... Տեսավ՝ հրեն  
 Հայրը քայլում ե՛ մեծ մի հրացան ձեռին —  
 Ու նայում է, նայում Լենին-քեռուն...

Ուզեց կանչի նրան,  
 Բայց այդ պահին հանկարծ  
 Մի ահռելի ուռա  
 Կրկին զնգաց:  
 Գոռում եր զորքը վողջ,  
 Ինչքան վոր ձայն ունեւր.  
 Ախ, ունենա՛ր ինչն էլ  
 Մի բարձր ձայն գոնե...

Թնդում եր ողջ  
 Նրանց ձայնից,  
 Ինչպես վորոտը՝  
 «Լենին, Լենին»:



## Լ Ե Ն Ի Ն Ն Ո Ւ Ա Լ Ի Ն

### I

Աշխարհի կենտրոնը — Մոսկովն է  
Մոսկովը Մեկկայից ել հին է  
Մոսկովից մեծ քաղաք — չէ՛ք:  
— Քանի վոր Մոսկովի միջին  
Ապրում է ինքը — Լենինը:

Տրապիզոնը Մոսկովից հեռու յե:  
Տրապիզոնից Մոսկով —  
Չես հասնի վտաքով դու իսկի:  
Թե ունես վոսկի՝  
Կնստես նախ նալ դու  
Ու նալով կերթաս նախ Բաթում.  
Հետո գնացք նստած  
Կհասնես Թիֆլիս,  
Հետո Բաղու,  
Ռասսով,  
Հետո կերթան-կերթան  
Ու նոր  
Կհասնես Մոսկով:

Այ, Մոսկովում հենց այդ  
 Ազգում ե արխադաշ Լենինը:  
 Նա, վոր մեծ է, ինչպես ամենամեծ խալիֆ:  
 Բայց այնպիսի խալիֆ,  
 Վոր հասկանում ե միշտ ֆուխտրազի հալից:  
 Այս ե պատճառը հենց,  
 Վոր սիրում ե նրան արապկոնցի Ալին:

Թիավար ե Ալին մի նաժակի վրա:  
 Սաանում ե ամխը—  
 Յերեք ու կես լիրա:  
 Աշխատում ե սահայն առաժոտից-գիշեր:  
 Ու սիրում ե նրան  
 Տերը, ինչպես գրաստ—  
 Բշել,  
 Բշել,  
 Բշել:

Սիրում ե Ալին Լենինին:  
 Նրա մասին նրան  
 Պատմել ե նախաստի մի ուսու:  
 Յույց ե տվել նրան  
 Պատկերքը Լենինի.  
 Ասել է.  
 — Լենին—կառոշ:  
 Ալին ասել է.  
 — Չոկ:  
 Ուսուսն ասել է.  
 — Յձ.

Լենին վար—  
 Բուրժույ յնկ»:  
 Բուրժույ— ալսինքն գանգին,  
 Ալսինքն եֆենդի, ազա.  
 Այն, վոր նստում են հանգիստ,  
 Ուտում են ուրիշի քրտինք  
 Ու սիրում են  
 Միշտ  
 Ծովափին  
 Նստել նարդի խաղալ:

Հասկացել եր Ալին.  
 «Լենին— բեյուկ խալիֆ»:  
 «Բեյուկ խալիֆ» սահալն,  
 Վոր հասկանում է միշտ ֆուխարայի հալից:  
 Ու սիրում եր նրան,  
 Այդ Լենինին հեռու  
 Իր չարքաշի սիրով տրապիզոնցի Ալին:

## II

Այդ սրը սուգ եր Մոսկովում  
 Ու սուգը— վնտ եր:  
 Վորբացել եր ասես պրոլետարը:  
 Ով վոր մոտ եր նրան—  
 Արդեն գիտեր.  
 — Ել չկա կարմիր Ղեկավարը...  
 Փակել եր աչքերը Ղեկավարը,  
 Վոր կյանքում չբանա ել բնավ:

Գնել եր Ղեկավարը  
Անդարթնելի քնով:

Այդ որը արդեն կոմկուսը  
Հավաքում եր մկան առ մկան  
Իր ուժերը, վոր պատնեշ հյուսի  
Անողոր կորուստի դիմաց:

Այդ որը ամեն պրոլետար  
Մոսկովում, Բազլում, Թիֆլիսում  
Շինել եր իր կամքը — բեռոն  
Ու հողին — չուզուն:

Պողպատել եր իրեն, վոր եզուց,  
Կորուստի տեղ այդ թանկագին՝  
Կուռ՝

Դնե բյուրմկան մի բուռնցք  
Վոստիխ բկին:

Մորմուքով իր սրտով այդ որը  
Մեր յերկրում ամեն պրոլետար  
Այնպես եր զգում, կարծես նոր է,  
Կարծես նոր է չեկել կովի որը  
Յեղ ինքը դու գրոհ պիտի տա:  
Ամփոփի պիտի իր ուժերը,  
Հավաքե մկանն իր վերջին,  
Վոր մնա բանվորի գիկատառուրը  
Յեղ հաղթե —

Առանց Իյիշի...

## III

Ու թուով ոսպիտն այդ որը,  
 Ինչպես թուր աշխարհը կխոզ՝  
 Մահառիթ ոսպիտն այդ որը  
 Մոսկովից հասավ Տրապիզոն:

Այդ որը այնքան էր աշխատել,  
 Վոր հալից ընկել էր Ալին:  
 Մարմինը քրտինք էր պատել,  
 Բազց պիտի աշխատեր ելի:  
 Նվում էր ամեն մե մկանը,  
 Նվալով քաշում էր դեպի առն.  
 Բավական է, ասում էր, — բավական է  
 Հոյնութչունը քո...

Յերեկո չեր:  
 Մութ ծովափով  
 Գնում էր Ալին՝ դեպի առն:  
 Ու տեսավ հանկարծ ծովափին  
 Իր ծանոթ նավաստուն ոռու:  
 Մոտեցավ,  
 Վոր ասի սալամ,  
 Սեղմի ձեռքը՝ ծանոթ ինչպես հին,  
 Ու կամաց փափսա նրան.  
 «— Կարաշն Լենին»:

Մոտեցավ:  
 Տխուր էր նավաստին:  
 Անձանոթ էր դեմքը: Անուպ:

Ու չասով մշտական «գրատի»-ն:

Այլ—

Կամաց.

«—Ալի, Լենին յոկ»:

Եւ վոչինչ:

Հեռացավ:

Ու թվաց թէ

Լեոնացած՝ դարկեց մի ալիք:

Հասկացավ խոսքերի մութ բմաստղ

Նավաստի Ալին...

ԷՎ

Նիշեր և:

Թնել և Տրապիզոնը:

Ձի հաջում անգամ մի շուն:

Վոստիկանը միայն, ինչպես շունը

Արթուն և.

Հսկում և փողոցում:

Սրթսրթում են սե սոսիները,

Փսփսում են ասես խավարին,

Վար թեկուղ Տրապիզոնը քնել և,

Բայց ահա—արթուն և Ալին:

Գողեզող գնում և Ալին—

Պաաների տակով դեպի մութը:

Գողեզող գնում և Ալին—

Դեպի մութ.

— Լոկ ինքը պիան:

Մոտենում և ահա կամացուկ

Մի շենքի:

Պորո՞ծ խավարում՝

Յուցանակ կա այնտեղ մի ծուռ...

Նկարած է վրան—

նա գիտե—

Հասարակ—

ՄԱՆԳԱԴ ՈՒ ՄՈՒՐՃ:

Շրջում է ալգետի գողերու

Վաստիկանը՝ խեթ ու առույ:

Կոչվում է շենքը քաղաքում—

«ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՏ ՌՈՒՄ»:

Մտանում է Ալին ինչպես գող:

Անցնում է մտախց վաստիկանը:

Սահում է Ալին կողքով—

Մտանում է դռանը:

Սեղմում է գանգը:

Չանգից սահայն գիլ:

Խոր լուսթյան մեջ

Չարկում է

Մի սիրտ:

Բացվում է դուռը:

Մտնում է ներս:

Լող պահապանն է,

Վոր արթուն է դեռ:

Նա ճանաչում է

Կարդաշ-Ալուն.

Հաճախ գնացել են մեկտեղ լողալու:

Բալց արդեն պիշեք է.

Ուշ է արդեն.

Ի՞նչ ե հարկավոր Ալուն արդյոք:—  
— Կոնսուլ...

— Խն-խն...

— Գիշեր ե:

— Ուշ:

Բայց բախտից Ալու—

Հյուսարտուն հանկարծ յեկնում ե գուրտ:

— «Լենին յձի» — հարցնում ե Ալին:

Լուսթյուն:

Ինչպես մուրճ՝ տաշող:

Յեղ— Կրճքին խփելով՝ Ալին՝

Մրմնջում ե՝

«— Նեթ կարաշո»:

Յեղ ապա, նայելով գետին,

Մի բանից ասես վախելով՝

Ասում ե՝ դառնությամբ լի.

«— Ալի պլոխ: Ալի— ազլիտր»:

Խոնարհում ե գլուխը ներքե,

Անխոս վիշա ե հայտնում ու պատիվ—

Յեղ—

Հեռանում ե՝ քափելով պատին...

V

Ուրիշ ի՞նչ:

Վոչինչ:

Խնդալու

Կամ լալու կարծեմ պատճառ չիք:—

— Վողջո՞ւյն արխադաշ Ալուն:

— Հաղթանակ գործին Իլյինչի:

ԵԼԵԳԻԱ ԳՐՎԱՍՒ ՎԵՆԵՏԻԿՈՒՍ

I

Տեախ յերկիրը յես Խաալիս,  
 Յեկ Վենետիկը, և գոնդոլներ...  
 Այնտեղ շքում եր պոետը մեր  
 Յերազակին իր, տարտամ քայլով:  
 Չշացած այն փարթամ փայլով,  
 Գեղեցկությամբ այն հեքյաթային,  
 Նա որորում եր յերգով մի հին  
 Իր սիրտը, սիրտը դեռ դայլայլող:  
 Այնտեղ արևը քնքուշ բուշրով  
 Ցողում եր ծովը այնպես հեշտին,  
 Իսկ նա հիվանդ եր հին մի վշտից,  
 Հին մորմոքից՝ իր սիրտը այրող:  
 Նա իր սրտով հին, հին քնարով  
 Յեկ մատներով իր՝ արդեն անուժ՝  
 Դեռ գուրգուրում եր հեռու մի հուշ—  
 Յեկ այնպես, այնպես, այնպես անուշ  
 Նա փաղաքշում եր հուշը այդ ուշ,  
 Յեկ ի՞նչ եր հուշը. — մշուշ ու մուժի—

## II

Եւ յերազում եր Արփաշայր  
 Յեղ հին Գյումրին իր հեռավոր—  
 Յեղ այն, ինչ հին եր, հուշ եր, այլ եր—  
 Երան թվում եր առավոտ:  
 Եւ ինձ ասում եր.— Հեռվում հեռու,  
 Ուր դաշտն ե, դաշտն ե Շիրակի,  
 Կա հին խրճիթ մի, մի տուն խարխուլ  
 Վոր ազատվել ե կրակից:  
 Այնտեղ հոսում ե մի հաշտ տուն  
 Յեղ բարդիները յերկնասլաց  
 Հիմա հիշում են յերգը իրա  
 Յեղ գլուխները թափահարում:  
 Երանք թափում են թերթերը չոր,  
 Ծածկում խրճիթը հնամյա այն,  
 Ինչպես յերգերը մահամնա,  
 Վոր հեծկտում են համր լացով:  
 Այն իր խրճիթն ե— Այնտեղ ե նա  
 Հյուսել յերգերն իր ու յերազել:  
 Այնտեղ վարդեր կան, թերթեր դեղնած,  
 Այնտեղ յերազ կա, ու յերգ, ու սեր—

## III

Եւ դեզերել եր, յեզել եր նա  
 Շատ ծովերում ու ցամաքներում  
 Յեղ ամենուր նա, ու ամենուր  
 Տեսել եր նույնը— Քաղաքներում  
 Գործարաններ եր՝ տեսել նա բոլոր  
 Ու գործավորներ համր ու հլու,

Ու գործավորներ, ինչպես թարուն:  
 Յեւ ամենի ալդ քաղաքներում,  
 Ռծված ցնորքով ու վաստակով՝  
 նա ամբողջներ եր տեսել հլու  
 Յեւ տերեր՝ շուրջ ու հաստափոր:  
 կյանքում տեսել եր նա լող տերեր  
 Յեւ բազմություններ կամակատար,  
 Վոր ընդունակ են կյանքը կրել,  
 ինչպես որենք մի հավերժական:  
 Յեւ նա ասել եր այդ տերերին,  
 Բայց ավելի՛ այդ թարունները,  
 Նրանց, ում կյանքը անիծել է  
 Յեւ դարձրել է ճորտ ու գերի:  
 Յեւ նա ասում եր. — Յերկրի վրա  
 Գազան ե, գայլ ե մարդը մարդուն:  
 կյանքի որենքն է հավերժական,  
 Վոր մեկը լաթ ե, մեկը՝ արթուկ: —  
 Յեւ նա ասում եր՝ նույնն է մարդը  
 Յեւ միշտ ել նույնը կմնա,  
 Մինչև ցնդի այս ակնթարթը,  
 Վոր ընթանում է գեպի մահ:  
 Ամբողջ կյանքում նա ու աշխարհում  
 Միայն այս բանն եր հասկացել —  
 Յեւ պատրանքին այս, ստին հլու՝  
 նա յերազել եր ու լացել:

17

Յեւ թափառում եր նա, վորը ու ծեր,  
 Բաղաքներում այդ բազմաժխոր,  
 Վոր վողողված են յերկաթաշեն

Գործարանների թանձր ծխով:  
 Չտեսնված մի, քանդող խանդով  
 Շաչում եր շուրջը մի գոռ պալքար.  
 Ամեն վայրկյանը — մի գործադուլ,  
 Անդուլ կռիվ մի հերոսական...  
 Սակայն հողին իր՝ հավիտյան խուլ  
 Խոլ պայքարին աչք աշխարհաշեն՝  
 Գաշվում եր մեջն իր, ինչպես խիտունջ,  
 Կամ սրորվում եր, ինչպես տաշեղ:  
 Ուրիշ յերազ եր նրան հուզել,  
 Ուրիշ ցնորք մի, սեր հնագույն —  
 Յեվ հարազատ եր նրա հողուն  
 Միայն այդ հինը — Ո, նա կուզեր  
 Հեռու տնակն իր վերադառնալ,  
 Գանել առվակը կրկին այն հին,  
 Ուր իր յերգերը կարհաշեկին  
 Յերազային ու տխրաբարբառ —  
 Սակայն մեր կյանքը սավետական  
 Նրան թվում եր անթով ու սուտ.  
 Նրա ազմուկը խորթ եր նրան  
 Յեվ անհաղորդ եր նրա լեզուն:  
 Նրան թվում եր մեր լույսը՝ ցուրտ,  
 Մեր արեղակը՝ գիշերային,  
 Մեր քաղաքները, անով լեցուն,  
 Յեվ մեր դաշտերը՝ ամայի...  
 Նրա աչքին մեր Հոկտեմբերը  
 Ըմբոստ մի բուռն եր անիմաստ,  
 Վորի ճգտունն եր այն բերելը,  
 Վոր լուկ ցնորք է ու յերազ:  
 Յեվ մեր հորձանքը՝ յերկրում յերած,

Մեր աշխատանքը դյուցազնական,  
 Նրան թվում էր սին մի յերազ,  
 Վոր ցնդելու յն՝ ծանր ու դանդաղ:  
 Նրան թվում էր մանկան մի խազ  
 Մեր ընդվզումը, պայքարը թեժ—  
 Յեվ ուր վոր կյանք ենք կերտում հիմա—  
 Նա լոկ տեսնում էր մահ ու աղետ:  
 Յեվ սեժը, սեժը մեր՝ նոր ծագող,  
 Մեր հորձանուտը՝ կյանքում հորդած՝  
 Նրան թվում էր մութ մի հորդա՝  
 Ու ավերո՞ղ լոկ ու կործանող:  
 Յեվ աշխարհում մեր հայիրական  
 Մեր մենամարտը ընդդեմ հնի—  
 Նրան թվում էր անիրական,  
 Ինչպես տարտամ մի, խառը վայրկյան,  
 Յերբ արթնանում էս ծանր քնից:  
 Յեվ նա ասում էր.—Մինչև շիրիմ  
 Պիտի նույն հուշը նա սրորե,  
 Յեվ չեն գա, չեն գա պայծառ սրեր  
 Վնչ ծեր սրտին իր, վնչ աշխարհին:  
 Անցածը հուշ էր չնաշխարհիկ  
 Նրա սրտին ծեր, գալիքը—սուտ,  
 Յեվ որորուն այս հին յերազով՝  
 Իրեն կարծում էր նոր մի Նազոն,  
 Վոր հայրենի իր յերկրից անդին  
 Շրջում է վորք ու վտարանդի:—

Յեա լսում եյի նրան հանգիստ  
 Յեվ փակում եյի աչքերս յերբ—

ԹՎում եր՝ մեկը յերգում և յերգ,  
 Վոր հին և, հին և, ինչպես զանգի  
 Տխուր զողանջը որերում ա՛յն,  
 Յերը նաչիրյան մի յեկեղեցի՝  
 Շուայլ՝ փում եր յերկրի վրա  
 Իր «որհնությունը» և «յեղիցին...»  
 Բացվում եր դեմս մի մութ կամար,  
 Ուր արեգակը՝ թեկից կախած՝  
 Լուսավորում եր քաղաքներ մառ  
 Ու գյուղեր՝ ծխոտ ու խեղդամահ:  
 Թախիծ եր, թույն եր այն աշխարհում,  
 Այնտեղ մամուռ եր միայն աճում.  
 Այնտեղ տերտերն եր ու վաշխառուն.  
 Ու խարազանն եր այնտեղ շաչում:  
 Յեվ հաշտ առուն այն, հեքյաթ-առուն,  
 Վոր յերագում եր կարոտով նա—  
 Այն արոտներն եր միայն ջրում,  
 Վորոնց տիրում եր մի ոես Հոֆման:  
 Մյուս զաշտերը—չլուտ ու չոր,  
 Ու զաշտերում այն—գրաստ-ապին,  
 Հադին նեխած մի, ցեխոտ շապիկ,  
 Հոգին միշտ համր, հրատոչոր:  
 Յեվ ժամը, ժամը զյուզամիջում՝  
 Կյանքի վրա այդ նստած թուխտի,  
 Յեվ քահանան ծեր և ծեր մուխտին,  
 Յեվ աղոթքները Յեղսան բաջու:  
 Իսկ քաղաքները... Այնտեղ արդեն,  
 Վորպես առանցքը ամբողջ կյանքի—  
 Բարսեղ աղա մի, կամ մի Արսեն՝  
 Կիսաշարչի ու կիսարանկիր:

Անա իմ դեմն ե, դեմն ե իմ նա.  
 Տեսնում եմ դեմքը նրա ճարպոտ.  
 Խողի մուռթ մի, ուռած մի փոր.  
 Նա ուղարկում ե վորդուն գիմնազ,  
 Ունի տներ ու խանութներ մեծ,  
 Գիտե ուտել կուշտ, չափով խմել,  
 Սակայն սիրում ե անչափ, անչափ  
 Ծծել քրտինքը բազմաչարչար  
 Բանակների այն, վոր աշխարհում  
 Միայն հոգնում են ու աշխատում:  
 Անա առանցքը—Շուրջը սակայն,  
 Ինչպես լուսինը շուրջը հողի—  
 Դառնում ե կյանքը նայիրական  
 Ու լիանում ե նրա շողից...  
 Հլու ու համր նրա խոսքին  
 Ու շարժումին մի նրա մատի—  
 Զրոբհնեքից ո, մինչև գատիկ—  
 Դառնում ե շուրջը կյանքը «ազգի»:  
 Դառնում են շուրջը գրքեր, թերթեր,  
 Դպրոց, թատրոն ու յեկեղեցի,  
 Տներ, կառքեր բյուր, ոթո ու ձի,  
 Հոգաբարձու ու վարձու տերտեր:  
 Դառնում են շուրջը վարժապետներ,  
 Վոր ըստ տեղի ու ժամանակի՝  
 Թե փաստաբան են, գրող են թե,  
 Թե խմբապետ են, թե խմբագիր:  
 Նրանք են ուղը, աղը կյանքի,  
 Նրանք են փայլը աշխարհի այն,  
 Ուր արեում ե վերից մի «հայ»  
 Կիսաչարչի ու կիսաբանկիր:

Նա վերն է, վերն է, ինչպես արև,  
 Փառաբանում են նրանք նրան,  
 Յեվ նա թափում է նրանց վրա  
 Իր բարությունը՝ փայլը հրե:  
 Յեվ նա թվում է նրանց որենք,  
 Ինչպես արեք հավերժական,  
 Վոր պարզեում է պայծառ որեք  
 Յեվ շնորհում է թե լույս, թե կյանք:  
 Ահա ցնորքը, բախտը բուրյան,  
 Վոր յերազում եր նրա հոգին.  
 Թեկուզ այս կյանքը մթին էր «քիչ»,  
 Բայց... «հարազատ եր ու նայիրյան»:  
 Այս կյանքը փառք եր թվում նրան,  
 Անհուն դրախտ մի՛ հուշով նաշխուն:  
 Յեվ այս եր, այս եր, այս եր, վոր նա  
 Չնաշխարհիկ մի բախտ եր հաշվում...

## VI

... Յես պատմում եյի նրան, թե մեր  
 Յերկիրը ի՜նչ է հիմա դառնում  
 Յեվ ի՜նչ ուժեր են հիմա հառնում  
 Իր յերազած այն աշխարհի դեմ:  
 Յես պատմում եյի այդք մեր մեծ  
 Յեվ առավտար մեր իրական  
 Յեվ այն, վոր սիրտս թինդով յերգեց  
 Յեվ այն, վոր նոր է ու պիտի դա:  
 Յես ասում եյի,— յերկրում հեռու,  
 Ուր մեր աշխարհն է սավետական,  
 Հիմա յեհնում է ուրիշ մի կյանք

Յեկ անլ պայքար ե հիմա յետում:  
 Վոր այն, ինչ մութ եր, հնին անտես,  
 Վոր խորշերում եր, ներսում, միգում—  
 Հիմա դառել ե հրե մի գունդ  
 Յեկ բորբոքում ե կյանքը այնտեղ:  
 Վոր վոնց դարնանը հեղեղը գա  
 Յեկ կապանքները ձմրան քանդե—  
 Այդպես մըրիկը այն հեռակա  
 Խուլ աշխարհում մեր արձագանքեց:  
 Ինչպես հանքում հին, յերբ վերեկի  
 Շերտերը ծուխ են արդեն գառնում—  
 Ուրիշ ուժեր են վարից հառնում  
 Ու բարձրանում են զեր՝ արեհին,—  
 Այդպես մըրիկը այն կարմրակեղ,  
 Վոր Հոկտեմբեր ե հիմա կոչվում—  
 Բերեց յերկրին մեր նոր մի աճում  
 Յեկ աշխարհներ նոր հանեց հանդես:  
 Յեկ այդ աշխարհը, ուժը այդ մեր—  
 Ո, անլ ե, անլ ե, չեզած յերբեք.  
 Վորպեսզի գար նա, կյանքում հորգեր—  
 Դեռ հարկավոր եր հինը սրբել:  
 Այդ ուժը նոր ե, ձերին ոտար,  
 Չերին ներհակ միշտ ու հակազիք,  
 Ինչպես փայտի դեմ—հալած մետաղ.  
 Ինչպես ջրի դեմ—հրի հատիկ:  
 Դա մեր բանակն ե, յեւած վարից,  
 Խուլ խավարից ձեր աշխարհի այն,  
 Վոր մեր քրտինքը փոխում քարի՝  
 Յեկ մեզ թողնում եր արյուն միայն:  
 Մեր կյանքը մութ եր ձեր աշխարհում:

Անդուռ նկուղ եր, անանց ձմեռ.  
 Յեկավ պայքարը, ցուրտը ցրեց—  
 Յեվ ձմեռն տեղ—տեսանք դարուն:  
 Մենք մեր որերը, այգը դարու  
 Հոկտեմբերից ենք հիմա հաշվում  
 Յեվ անաջող մի, հիմար սիրուց  
 Դեպի լեռները մենք չենք քաշվում:  
 Յեվ սրտերում մեր—տրտունջ չկա.  
 Մենք հավատում ենք հիմա կյանքին.  
 Մեզ հմայում են գործ ու պայքար  
 Յեվ հոգնությունը աշխատանքի:  
 Գո ճանապարհը աշխարհում այն  
 Դու գնացել էս մեն ու մենակ—  
 Իսկ մենք անթիվ ենք, անհուն բանակ  
 Յեվ կառուցում ենք հիմա անահ  
 Մեր նոր աշխարհը՝ պայծառ ու լայն:  
 Յեվ մենք ասում ենք.—Մենք ենք հիմքը  
 Ամբողջ կյանքի ու մարդկության.  
 Ամբողջ աշխարհը հայրենիք է  
 Յեվ աշխատանքը ու քրախնքը  
 Ո, նոր աշխարհ մի պիտի տան—  
 Նրանց, ում կյանքը անխժել է,  
 Ով ճորտ է, մերկ է ու անտուն,  
 Բայց պայքարում են հիմա անդուլ  
 Յեվ աշխատում են ստեղծել  
 Նոր մարդկություն մի՝ անցավ, անցեց...

Մեր յերգը—սա յե: Յեվ մենք հիմա  
 Խուլ աշխարհում մեր նայիրական

Բերել ենք ուժ նոր, ու թնփ, ու կամք,  
 Վորպեսզի կյանքը աշխարհի ան,  
 Վոր դուք քանդել եք ու կործանել—  
 Վերաշինենք ու վերածնենք—  
 Յե՛վ մենք անթիվ ենք ու անհաշիվ,  
 Մենք մեր յերկրում ենք և ամենուր—  
 Յե՛վ անաջող մի, հիմար սիրուց  
 Դեպի լեռները մենք չինք քաշվի:—  
 Հիմա յելնում ենք մենք մեր կաշվից,  
 Հիմա հոգնում ենք, տնքում անքուն,  
 Վոր մեր զնգուն այն, հիմար Զանգուն  
 Բիլովատներ ու վոյտեր հաշվի:  
 Ուր անապատ եր, դաշտ եր ամա,  
 Ուր լոկ յերաշտ եր ու մահ բոցե—  
 Մենք ջրանցքներ ենք շինել հիմա  
 Յե՛վ մեր դաշտերը վոսկեղոծել  
 Այնտեղ, ուր հովն եր քո կարկաչում,  
 Ուր կուզեյիր վոր Զարոզ ապրի—  
 Հիմա դրել ենք յերկաթ Փարբիկ  
 Յե՛վ մեքենան է այնտեղ շաշում:  
 Յե՛վ քիլովատը յուրաքանչյուր,  
 Ամեն մի վոյտը այնտեղ հաշված—  
 Ո, անլ վոյտեր է կյանքի կանչում  
 Յե՛վ քիլովատներ հանում աշխարհ:  
 Ո, դաշտերում այն մեր անջրդի,  
 Ուր կառքը փառք եր, յեթի գնար—  
 Մեր նոր բանակն է յելնում բանտից,  
 Այնտեղ զնգում է յերբ մեքենան:  
 Յերբ ծխնելու յգն է ծխում այնտեղ  
 Յե՛վ հիդրոշենք փռում կայծեր—

Դա թնօթն է, թնօթն է մեր յերկաթե  
 Քանդում աշխարհը հնամյա ձեր...  
 Այնտեղ մեր շուրջը ծփում է դեռ  
 Ճզճիմ ճահիճը ձեր ծանրանխատ—  
 Յեվ տարիներ դեռ քանի, քանի  
 Պիտի նա թափը մեր կաշկանդե:  
 Կարծում ես հինը չկա՞ այնտեղ,  
 Քո յերազածը՝ հուշով նաշխած:—  
 Ո, վնչ.—կանգնած են դեռ գեմառգեմ  
 Յերկրում մեր յեվս—յերկու աշխարհ:  
 Յեվ ձերը, ծերը—ճնշող է դեռ,  
 Քո ներբողածը—դեռ կա, դեռ կա.  
 Յեվ կլինի նա յերկամր, յերկամր,  
 Քանի դեռ հինը մենք չենք քանդել:  
 Կապրի, կապրի դեռ շունչդ այնտեղ,  
 Կերգեն յերգերը դեռ քո թողած,  
 Քանի կյանքում մեր կանգուն է՞ դեռ:  
 Ցնորք—բոստանը քո ներբողած:  
 Յեվ դա յե, դա յե, դա յե արդեն,  
 Քո այդ բոստանն է ու գույգ բարդին:  
 Յեվ մեքենան մեր, վոր գեմառգեմ  
 Հիմա յելել են մենամարտի:  
 Յեվ այս պայքարը համր, լսին,  
 Այս մենամարտը մեր ատորյա—  
 Ո, ավելի յե տագնապալի,  
 Քան բարբիկազը հոկտեմբերյան...  
 Ո, ձեր աշխարհը—դեռ կա, դեռ կա,  
 Նա դեռ նստած է, հաստանստուկ,  
 Յեվ քո յերգերը յերեկ յերգած  
 Դեռ շատերին են այնտեղ օղողում:

Բայց դա աշխարհն և մահապարտված,  
 Կյանքի մամուռը, տիղմը անհուն,  
 Վոր բոստանին քո, առվին կառչած՝  
 Յեկ համառում և, և՛ հեռանում:  
 Յեկ խուղերի յերբ անդուլ մթում  
 Վառվում և լամպը ելեկտրական—  
 Դա մեր պայքարն և ընդդեմ անդուլ  
 Խուլ աշխարհի ձեր նայիրական:  
 Յեկ մեր քլունսը՝ լիռը քանդող՝  
 Յերբ տունեղներ և ձգում յերկար—  
 Դա վնչ թե լեռն և քանդում անդուլ,  
 Այլ ձեր աշխարհը սարսափահար:  
 Քանդում, քանդում և նա անհանգիստ,  
 Քարե բերդերը շարտում դեն  
 Յեկ նոր շերտեր և կանչում կյանքի  
 Յեկ բանականեր նոր հանում հանդես:  
 Յեղնում, յեղնում են նրանք արդեն,  
 Սովարանում են որը որին,  
 Ինչպես մեռաղը յերկրի խորից,  
 Ինչպես գարնանը հեղեղ հորդե:  
 — Դա հորձանուտն և բանվորական,  
 Հորդել— գալիս և ահագնորեն,  
 Վոր ծանրությունը պայքարի այս  
 Լայն ուսերով իր եզուց կրե:  
 Դալիս, դալիս են նրանք ահա,  
 Լցնում յերկիրը շառաչով զիլ,  
 Յեկ մեր յերգերը ել ավելի  
 Հնչում են բարձր ու խանդավառ:

Դողում ե հողը այդ ընթացքից  
 Յեվ յեռանդից այդ, խանդից անծայր,  
 Յեվ մեր դալիքը՝ այնքան պայծառ  
 Ահա բացվում ե իմ հայացքին...

## VII

Այնքան պայծառ ե այդ ապագան...  
 Տեսնում եմ՝ վանդը, վանդը, շաղոտ  
 Յերկրի վրա մեր սավետական  
 Ահա բացվում ե մի առավոտ:  
 Ահա դյուղեր ու քաղաքներ նոր՝  
 Յերկաթ ցանցով մի իրար կապված,  
 Յեվ առորյան մեր անա վաղվա՝  
 Լցված խինդով նոր ու աղմուկով:  
 Ահա շեներ նոր, զվարթ տներ,  
 Ուր լճյս կա, լճյս կա, լճյս կա այնքան...  
 Չկան խուղերը նայիրական,  
 Ուր լույսը փառք էր, յեթե լիներ:  
 Ուր դարեր անթիվ ու տարիներ  
 Ապրում էր մարդը, ինչպես միջատ,  
 Ու չար աստված մի՛ յերկնից իջած՝  
 Որհնում էր կյանքը այն մոխիրե...  
 Յելել ե կյանքը, քնից դարձնել,  
 Դողում ե հողը բեղուն բերքից՝  
 Ու շճւրջը, շուրջը, շուրջը յերկրի—  
 Աշխարհը լսյն ե ու անպատենշ:  
 Աշխարհը դաշտ ե մի համերաշխ,  
 Յերկիրը վճնց ե, վճնց ե քրտնել...  
 Ապրում են շուրջը ժողովուրդներ՝  
 Յեղբայրական ու հավիտյան հանու:

Յեզ մարդը, մարդը անա վաղվա՛  
 Հարվածներից հին մեջքը շահած.  
 Անա հայացքը, սիրտը իր պարզ  
 Յեզ աշխարհում — իր քայլքը վստահ...

Անա ցնորքը մեր անսահման,  
 Մեր յերազանքը, վարպետ: — Սակայն,  
 Սա յերազանք է մի այնպիսի,  
 Վոր չի տրվի մեզ խոսքերով սին,  
 Վորի համար — ո, դարե՛ր, դարե՛ր —  
 Մենք պայքարել ենք ու պայքարել:  
 Ու պայքարում ենք: — Իհարկե դու  
 Մեր յերազին այս չես հավատում:  
 Դու յերազում ես, այստեղ նստած,  
 Մարմանդ առու մի, մի խուլ բոստան  
 Յեզ հեզ գառնուկ մի, վոր բառաչե —  
 Սակայն այդ յերգը — մեր յերգը չե...

### VIII

Յեզ լսի՛ր, լսի՛ր, լսի՛ր վարպետ, —  
 Իզուր ես հինը դու յերազում  
 Յեզ զո՛ւր է, զո՛ւր է սիրտդ հարբել  
 Անմխիթար այդ, սին յերազով:  
 Իզուր է սիրտը քո գազազում  
 Յերկրի հանդեպ մեր վերածնվող.  
 Վո՛չ մեր յերկիրն է շվայտ Հոռո՛մ  
 Յեզ վո՛չ ել ինքդ — նոր մի Նազոն:  
 Իզուր ստին այդ, մթին գերի՛  
 Դու անիծում ես ուժը մեր նոր. —

Դու այդ ուժից ես փախել յեղնող  
 Յեվ վնչ թե, վնչ թե արքաներից,  
 Յեվ դաս յեթե դու յերկիրը մեր  
 Յեվ նույնը, նույնը, նույնը մնաս —  
 Մեր նոր արևը չի գուրգուրե  
 Բո այդ յերգերը մահամնա:  
 Բեզ կընդունես այն աշխարհը հին,  
 Վոր դեռ ծամում ե մամուռ ու ցեց,  
 Բայց այդ արևը ձմեռային  
 Դժվար թե սիրտդ տաքացնե  
 Յեվ կմնաս գու Խառն ու ծեր,  
 Այդ նույն ձմեռը քո ցուրտ հոգում,  
 Յեվ հուսահատ ու վորը կլինես  
 Ինչպես հեռու այս Վենետիկում...

1925 հունվար, Վենետիկ

## ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՊՈՆ

ԲԱԿԱԳ ԾԱՆԿՈՒԹՅԱՆ, ԲԱԽՏԱԽԱՂԻ, ՊԱՅՔԱՐԻ ՅԵՎ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Ընկեր Հիպարիտ Մելչյանի հիշատակին*

**Մ**անկությունը հիշելիս՝ սիրտս դառնում ե գինով...  
Յես մի ընկեր ունեյի՝ Լիպո անունով:

Ինչքան հիշում եմ նրան՝ աչքերիս հանդեպ  
Մի նայիրյան տեսարան բացվում ե հապճեպ:

Փռվում ե դեմս խեղույն մի փողոց խաղաղ,  
Ու փողոցի անկյունում — մի վտիտ աղա:

Նիրհում ե Ղարսը՝ խաղաղ ամառնամուտին...  
Ինչքան վախտ ե աղան այդ վտտաբորիկ:

Նա նստած ե մի քարի — տասնամյա տղան,  
Ու նիրհում ե առաջին — մի ցածլիկ սեղան:

Կլոր սեղան ե ցածլիկ, մեջտեղում — մի չարիս.  
Բախտախաղ ե մանկական — կողեկնոց վիճակ:

Տուր մի կողեկ ու խփիր, — թե բախտդ բանեց —  
Մի տուփ լուցկի, կամ մի տուփ քորոց կհանես:

Կապուտաչյա այդ տղան, ախ, ինչքան եր չար՝  
Մեզ հետ կովում եր հաճախ, ծեծվում չարաչար:

Բախտը ժպտար յեթե մեզ ու լուցկի հաներ —  
Նա իր չարխը կծներ ու կոխվ կաներ:

Ունեք բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր.  
Միակ նեցուկն եր նա տան՝ բոլորին պահող:

Ինչքան հիշում եմ հիմա մանկությունս յես —  
Կապուտաչյա այդ տղան յելնում ե իմ դեմ:

Տեսնում եմ միշտ նրան յես իր չարխի առջև...  
Հետո որեր անցան շատ, սլացան հապճեպ:

Ու կորցրի յես նրան: — Աշխարհում այնինչ  
Յեկան որեր հուրհուրան, տարիներ անջինջ:

Պատերազմներ յեղան մեծ, պայքարներ բազում —  
Յեվ ամբողջ կյանքը փոխվեց, ինչպես յերազում:

Դասակարգեր ընկան հին ու յեկան նորեր —  
Որեր վառվառ ու անգին, անմոռանց որեր...

Մի որ յեկանք ու առանք Յերևանը մենք —  
Հետո դաշնակը շարժեց մաուզեր ու ղենք:

Նահանջեցինք քաղաքից մենք լուսարացին —  
Յեվ ընկերոջս նորից յես հանդիպեցի. —

Յերկու ամիս եր արդեն ճակատում եյինք—  
 Վերջին որերը միայն մենք հանդիպեցինք:

Լիսյարիս եր դարձել նա, իմ ընկեր Լիպոն.  
 Արշավում եր բանակում՝ ուզմի շապիկով:

Նա զինկոմն եր մեր գնդի, մեր գնդի հոգին.  
 Անճանաչ եր համարյա՝ գորշ շինելն հագին:

Ճանաչեցի սակալն յես:— Մոտեցա նրան,  
 Ասի՝ հիշում ես, Լիպոն, Ղարսը նայիրյան...

— Հիշում ես չարխը քո են... — Նա ժպտաց ու խիստ  
 Ասաց. — Գնում ենք եզուց. պատրաստվիր, Յեղիշ:

— Դե, են չարխը... նա չկա... չկա... Հիմա մենք  
 Ուրիշ չարխեր պիտի այս աշխարհում շարժենք:

— Բախտախաղ չե սակայն սա, այլ կռիվ ու կամք.  
 Լուսարացին մենք պիտի առաջանանք...

— Դաշնակը խաղ ե կարծում, հանաք ե անում...  
 Դե, կխոսենք մի լավ — Յերեանում...

...Լուսարացին մենք անցանք գրոհի,  
 Լուսարացին խփեցին Լիպոլին...

Լուսարացին նա ընկավ կովում,  
 Յերբ հաղթանակն եր վառվում, փռվում:

Ընկավ կուլում  
 Մեր զինկոմի արի.  
 Ընկավ Լիպոն  
 Յերեանի  
 Ճանապարհին...

...Լուսարացին Յերեանը յերեաց.  
 Լուսարացին մենք մտանք Յերեան:

Լուսարացին մեր բանակը հաղթական  
 Քաղաք մտավ՝ հեռը կարմիր մի դադազ...

Լուսարացին վնչ մի «ախ» —

Սակայն —

Լուսարացին դրոշներ հուրհուրան  
 Իջան ընկեր Լիպարիտի  
 Վրա...

Խոնարհվեցին դրոշները՝ բանակի —  
 Ու պառկած եր իմ ընկեր Լիպոն՝  
 Ռազմի կարմիր իր զգեստներն հապին:

— Փառք քեզ, փառք քեզ,  
 Մեր զինկոմ  
 Արի, —  
 Փառք, վոր ընկար  
 Հաղթանակի  
 Ճանապարհին...

Հիմա Լիպոն իմ չկա, նա չկա հիմա,—  
 Ո՞վ չի սակայն չերազում այդպիսի մի մահ...

Նա պառկած է  
 Կոմունարների  
 Այգում.  
 — Փանք քեզ, ընկած  
 Մեր քաջարի  
 Ջինկոմ:

Դու պայքարի  
 Դրոշ յեղար  
 Վառ մի.  
 — Թե տեսնեյիր ի՞նչ է դարձել  
 Մեր Բանակը  
 Կարմիր:

Նա աշխարհում բանակն է, ո, առաջին:  
 Յեվ վնչ մի ուժ չի դիմանա առաջին:

Ննջիր խաղաղ  
 Կոմունարների  
 Այգում.  
 — Փանք քեզ, ընկած  
 Մեր քաջարի  
 Ջինկոմ...

1928

## Բ Ա Լ Լ Ա Դ Գ Ե Ղ Ջ Կ Ա Կ Ա Ն

(Աղջիկները պարում են ու յերգում)

— **Ս**իրոնն աղջիկ, ուննես սիրում աշխարհում—  
Մալետականես մեր սիրուն աշխարհում:

— Քաղքից եկած են աղինեմ յես սիրում,  
Ճակատը բաց են աղինեմ յես սիրում,  
Աչքերը շող են աղինեմ յես սիրում,  
Մաշին քշող են աղինեմ յես սիրում...

— Ընչի՞ համար գուհես սիրում են աղինեմ,  
Բոյը սիրուն, բուսը սիրուն են աղինեմ,  
Հոնքը կխաած, բեխը սրած են աղինեմ,  
Գլխին սև-սև փափախ դրած են աղինեմ,  
Մառուկերը կողքից կխաած են աղինեմ,  
Մեր հանդերից հեռու փախած են աղինեմ...

— Ընչի՞ սիրեմ բեխերը ցից են աղինեմ,  
Հողը դնեմ սև ու անսիրտ են աղինեմ,  
Չեռքը տուռ, խելքը տուռ են աղինեմ,  
Թալան տվող, լիրը ու հարուստ են աղինեմ,  
Մառուկերին ձեռքը դրած են աղինեմ,  
Ըռանչաբարի շիվան ու լաց են աղինեմ...

— Են վճնց եղավ, վոր քեզ սիրեց են տղեն:

— Շեկ մաղերիս աչքը չոեց են տղեն,

Արնոտ աչքը վրես ածեց են տղեն,

Մառզերից կրակ բացեց են տղեն,

Ալևորիկ մորս ծեծեց են տղեն,

Ջահել սրտես արուն ծծեց են տղեն...

— Յերբ պատահեց եդ բոլորը աշխարհում:

— Յերբ դեռ սե եր խալխի որը՞ աշխարհում,

Յերբ դաշնակի ձեռն եր տիրում աշխարհում,

Յերբ ունևոր-տերն եր տիրում աշխարհում,

Յերբ ունչպարին արև չկար աշխարհում,

Յերբ ունչպարի որն եր խալվար աշխարհում...

— Են վճնց եղավ՝ քեց հորըդ նա գեղից,

Եկավ, քեց քաջ ախպրդդ նա գեղից,

Կրակ տվեց, ավար հանեց նա գեղից—

Բիչ եր մնում՝ քեզ ել տաներ նա գեղից...

— Եդ են կրակ, ցավ տարին եր մեր գեղում,

Յերբ սե կրակ ու արին եր մեր գեղում,

Ընտանչպարը թվանք առավ մեր գեղում,

Են սե տղեն մի հավ գառավ մեր գեղում.

Հետո են սե Սեպուն եկավ մեր գեղում,

Եկավ, փռեց կրակ ու ցավ մեր գեղում,

Ընտանչպարին գերի արավ մեր գեղում,

Արունն ելավ—սեխավ գառավ մեր գեղում...

— Թվանք առած՝ փախավ հերըս մեր գեղից,

Հետը փախավ քաջ ախպերըս մեր գեղից,

Ինչքան ուսնչալար-տղամարդ կար— մեր գեղից  
Յեւան գացին Ղազախու սար մեր գեղից...

— Հետո եկավ, գեղը տիրեց են տղեն,  
Շեկ մագերիս աչքը չոնց են տղեն,  
Արնոտ աչքը վրես ածեց են տղեն,  
Մաուզերից կրակ բացեց են տղեն,  
Ալեորիկ մորս ծեծեց են տղեն,  
Ձահել սրտես արուն ծծեց են տղեն...

— Հետո եկան վառման որեր, հետո կովի որեր եկան,  
Գեղից դացած իմ ախպերներ պոպողափոր, հուրհեր  
եկան.

Ալեորիկ իմ հերն եկավ,  
Իմ բայլընիկ ախպերն եկավ...

— Են որվանից, յերբ ախպերս եկավ գեղ,  
Յերբ բայլընիկ, ուսնչալար հերս եկավ գեղ—  
Կարմիր գարուն, կանանչ արև եկավ գեղ,  
Բանվոր տղից, քաղքից բարև եկավ գեղ...  
Մաշին նստած՝ բանվոր տղեն եկավ գեղ,—  
Վոնց վոր գարուն մի հրեղեն—եկավ գեղ...

— Ընչի՞ համար ել յես սիրեմ են տղին,  
Մաղերը սև, աչքերը սև են տղին,  
Հոնքը կիտած, բխը սրած են տղին,  
Գլխին սև-սև փափախ դրած են տղին,  
Մաուզերը կողքից կախած են տղին,  
Մեր հանդերից հեռու փախած են տղին...

— Իմ ուզածն է քաղքից եկած են տղեն,  
Աչքերը բաց ու սիրտը բաց են տղեն,  
Գլխին կաշվե գլխարկ դրած են տղեն,  
Ըռանչպարի սրտով սիրած են տղեն...

— Յես են տղի տեսքն եմ սիրում աշխարհում  
Մաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,  
Նրա անուշ յերգն եմ սիրում աշխարհում,  
Սավետական ես մեր սիրուն աշխարհում...

ԲԱԼԼԱԴ ԳՆԴԱՊԵՏ ՏՈՍՏՈՒՆԻ, ԿՈՍՅԵՐԻՏ ՏՂԻ ՅԵՎ ԳՈՐԾԱԴՈՒՆԻ  
ՄԱՍԻՆ

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բազու,—  
Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Յես ունեմ ընկեր մի, ընկեր մի մոտիկ,  
Նա մեջքին կապում ե մի բարակ դոտի,  
Նա գլխին դնում ե հասարակ կեպի—  
Իսկական մի հերոս ե չգրված վեպի,  
Հասարակ բանվոր ե նա Բալախանում—  
Փորում ե նա հողը ու նավթ ե հանում:

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ—Բազու,—  
Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Այս վտխա բանվորը, այս վտխա տղան  
Այն տարին յեղել ե համարյա խոխա:—  
Այդ այն մութ տարին եր, յերբ ծովի բացից  
Գրավեց քաղաքը մեր—անգլիացին:  
Յերբ յեկավ, նստեց նա ու հալեց պատին  
Մեր ըմբոստ քաղաքն ու պրոլետարիատին:  
Տոմսոնի կոշիկն եր քաղաքում տիրում,—  
Թշնամին դաժան եր, բարեկամն—հեռու...  
Բայց յերբ ե բանվորը լռել աշխարհում,—  
ա խուլ պայքարում եր, անզուլ պայքարում:

Քաղանք իմ, քաղանք իմ, քաղանք իմ—Քաղու,—  
 Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Այդ մութ որերին եր, յերբ մի որ բերին  
 Լցրեցին բանտերը մեր ընկերներին:  
 Տեղ վաղ առավոտը, հանկարծ, գեմուզեմ—  
 Մեր վախտ տղին այս կանչեց Կոմիտեն  
 Գազտնի Կոմիտեն մեր կանչեց ու ասաց.  
 «—Գու քաջ կոմյերիս ես՝ հասակդ առած,  
 Քո հայրը բանվոր ե, ինքդ—սրբուհտար.  
 Տեսնում ես թղթերը.—վերցրու ու տար:  
 Մերոնք գործադուլ են պատրաստում արդեն.  
 Այս խող գնդապետը յելել է մեր դեմ—  
 Ուզում է վողջին նա դարձնի գերի.  
 Կասնես այս թղթերը նրա գորքերին,  
 Կմտնես փողոցները խռիվ ու բանուկ—  
 Իբրև թե ափիշ ես հանգիստ բաժանում»):—

Քաղանք իմ, քաղանք իմ, քաղանք իմ,—Քաղու,—  
 Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Հրձվանքից շողաց մեր քաջ տղի հողին,  
 Կարծես թե նա տերը դարձավ քաղաքի.  
 Աչքերում ցողաց մի խնդություն անուռն.—  
 Տեսեք՝ ինչ գործեր են նրան վստահում...  
 Ճերմակ թերթիկները դրականը խոթեց.—  
 Իսկի չլատի թող դադանի Կոմիտեն:  
 Ու վազեց, վազեց նա սրտի դողոցով.  
 Դիմացից՝ մի վնշա եր անցնում փողոցով.—  
 Չսպելով սրտում իր մի կրծող, մութ բան—  
 Մոտեցավ նրանց նա ու ասաց «Գուդբայ»...

Ասաց, ծիծաղեց նա կամաց, ինքնիրեն—  
Ու հանեց թերթիկները, սկսեց ցրել...

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ— Բագու,—  
Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Այս ինչ քաջ տղա՛ յե, այս ինչ լավ ցրիչ...  
Բոլոր զինվորները մեկ-մեկ վերցրին.  
Սակայն հայհոյանքը կոկորդում զսպած՝  
Մեր տղի գլուխը արնոտեց սպանու  
Հարվածեց, գլուխը արնոտեց տղի—  
Կարմիր կաթիլները թափվեցին հողին...  
Բայց յերկրորդ հարվածը յերբ ոգում շողաց—  
Արդեն չքացել եր, կորել եր տղան...

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ— Բագու,—  
Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Հեիհե հասավ մեր Կոմիտեն տղան.  
Արնոտած յերեսը հրճվանքից շողաց.  
Կապեցին գլուխը, դրին անկողին.  
Ուղարկող ընկերը համբուրեց տղին...  
Հետո գործադուլ մեծ յեղավ քաղաքում—  
Յելան բանվորները— ու հաղթեց Բագուն:  
Ամբողջ պրոլետարը կանգնեց դեմուդեմ—  
Խողուկ Տոմսոնի՛ն այն հաղթեց Կոմիտեն...

Հաղթեց գործադուլը ինվիլիզ գորքերին—  
Բագվի պրոլետարը չդարձավ գերի.  
Մարսեց գնդապետը մեր ուժից անթիվ—  
Յեվ յելան ընկերները Բայիլի բանտից...

---

Քաղանք իմ, քաղանք իմ, քաղանք իմ—Բագու,—  
Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

Կեցցեն գործադուլը, կեցցեն կոմիտեն,  
Կեցցեն և փոքրիկ այն, կոմյերիտ տղեն,  
Կեցցեն մեր պայքարը ու կամքը արե—  
Կեցցեն բանվորները համայն աշխարհի...

Քաղանք իմ, քաղանք իմ, քաղանք իմ—Բագու,—  
Վորքան հեքյաթներ կան այս գորշ քաղաքում...

ԲԱԼԼԱԴ ՔՍԱԼԵՎԵՑԻ ՄԱՍԻՆ

I

Ամեն առաւոյտ ծեղին,  
Յերբ քնից դարձնում ե Բազուն,  
Յերբ, յեւած գիշերվա մեզից,  
Արթնանում ե կյանքը քաղաքում,—  
Յերբ ձայնով աշխուժ ու հնչուն,  
Բաղաքի բոլոր մասերից  
Շչակները գործի յեն կանչում  
Պրոլետարներին,—  
Բաղաքի ծայրերից լուրբ  
Զգվելով յերբ շարան-շարան  
Բանվորները հոծ խմբերով  
Շտապում են գեպ գործարան,—  
Ամեն առաւոյտ ծեղին,  
Այդ ժամին գորշ, մխերտնդ—  
Զուլվելով յերթին ամենքի—  
Բաղաքից անցնում են ե նրանք:

II

Բասնրվեց հոգի յեն նրանք—  
Յեւ խոհուն, մտադրադ են բոլորը:—  
Առջևից գնում ե նա—  
Յերկաթյա կարմիր կոմանդորը:

Քայլերով հաստատ, համաչափ,  
 Հեռուում են նրան ընկերները,  
 Ընթանում են քայլերով շատայ,  
 Շտապում են դեպի վիշկաները:  
 Աննիատ, ձուլված ամենքին,  
 Քայլում են նրանք դեպի ծովը.  
 Վողջունում են ջրերը դեմից,  
 Համբուրում ե հովը:  
 Համբուրում ե դեմքերը քամին,  
 Շշնջում ե խոսքեր հյուսիսի.  
 Յերկաթյա շքախումբ ե դա մի—  
 Գնում ե գորահանդեպի:—

## III

Քայլերով հաստատ, համաչափ  
 Ընթանում են նրանք խմբովին,  
 Անցնում են բուլվարի միջով,  
 Մոտենում են ծովին:  
 Խփում ե ծովը ափերին,  
 Յերկինքը գորշ ե, կապար,  
 Ճոճվում են նավերը սևերից՝  
 Շղթայով ափին կապած:  
 Իսկ հեռուն—ուրիշ նավեր,  
 Կողերով ծանր նստած՝  
 Սահելով գնում են վեր—  
 Գեպի Պարսկաստան...  
 Գնում են դեպի Ենզելի,  
 Գնում են դեպի Իրան,  
 Տանում են յերկրից Լենինի

Մի հեղուկ ալ-հուրհուրան:  
 Նայում են նրանք նազերին  
 Յեվ իրենց շրթերով անբառ,  
 Անսահման խինդը դեմքերին՝  
 Շշնջում են.— Բարի՛ ճամփա...

IV

Տեսնում են ապա հեռվում  
 Յեվ ուրիշ նազեր նրանք.  
 Մշուշում նրանց յերևում,  
 Արևում են փեր հուրհուրան:  
 Տեսնում են նավեր ծանրակող,  
 Վոր ջրերը խորունկ արխած՝  
 Գնում են դեպի Կրասնավոդսկ,  
 Գնում են դեպի Հաշտարխան...  
 Նայում են կարոտով անդուլ  
 Այդ հեռու փերերին նրանք.  
 Մի յերգ ե այնտեղից թնդում,  
 Խնդալով վողջունում նրանց:  
 Դաշտերում անբեր ու ամա  
 Տեսնում են հազար նվաճում.  
 Յերկաթե անտառի նման  
 Սերունդներ են յելնում ու աճում:  
 Հասնում են նրանց ականջին  
 Վիթխարի մուրճերի ձայներ.  
 Շչակներ են թնդալով կանչում,  
 Աշխատանքն ե հնչում այնտեղ:  
 Լսում են նրանք այնտեղից  
 Բյուրավոր վտաքերի գոփյուն.

Քրտինք ե բարձրանում հանդերից,  
 Մի կուրծք ե անդուլ տրոփում:  
 Նայում են հրճվանքով անհուն—  
 Ու խնդուն յեռանդով ջամբած՝  
 Կոմանդորը ձեռքով ե անում—  
 Ու թեքում են նրանք ճամփանս...

Վ

Ու, կրկին հեռուն նայելով,  
 Քայլերով հաստատ, համաչափ,  
 Անցնում են նրանք Բայիլով,  
 Մտնում են քաղաքը նվաճած...  
 Տարիներ են անցել կորովի,  
 Սուրացել, գնացել անդարձ—  
 Ու յելել ե նահանջող ծովից  
 Մի ամբողջ նոր նավթանտառ:  
 Ուր ծովն եր առաջ շառաչում  
 Յեփվելով զուր յեռանդից—  
 Վիշկաներ են հիմա աճում,  
 Վիշկաներ անծայր, անթիվ:  
 Թնդում ե յերկիրը նվաճած,  
 Շնչում ե յեռանդ ու կրակ,  
 Անցնում են քայլերով համաչափ,  
 Յերկաթե քայլերով նրանք:  
 Դեմքերով՝ վառված արևից,  
 Մազութով, մրով ձեփած՝  
 Վիշկաները կեցած բարևի  
 Ասում են.—Բարև՛, Ստեփանն...  
 Աշխատում են, յեռում են բոլորը.  
 Մրտած դեմքեր ու ձեռներ:—

Հիացած՝ կարմիր կոմանդորը  
 Շշնջում է.— Բարև՛, ընկերներս—  
 Ու մտնում են նրանք վիշկաները,  
 Յերկաթե քայլերով շշնջում.—  
 Դառնում են փոկերն, անխիչները,  
 Յեռանդի ձայնով շշնջում:  
 Շշնջում է կարմիր կոմանդորը  
 Փոկերի ազմուկի միջից—  
 Յեվ լսում են, լսում են բոլորը  
 Նրա ձայնը շինջ ու վճիտ:

VI

Յեվ ստում է նա—կոմանդորը.  
 —«Տոկացեք, ընկերներ անդին.  
 Ձեր ամեն մի փորած նավթահորը  
 Մի քայլ է ցանկալի կյանքին:  
 Բացվել է հորիզոնը լուսե,  
 Պայքարով ահոսել մի կյանք.  
 Ձեզ համար գիշերով մի սև  
 Ավաղե դաշտերում մենք ընկանք:  
 Քսանըվեց եյինք մենք, քսանըվեց,  
 Բայց անթիվ, անթիվ է մեր անունը.  
 Վոչ գնդակը մեզ սպանեց  
 Յեվ վնչ էլ կսպանե հողնությունը:  
 Քանի կաք, ընկերներ, քանի կաք,  
 Քանի կա աշխատանքը անդուլ—  
 Մեր յերթին—վախճան չկա,  
 Մեր պայծառ գործին—պարտություն:  
 Տոկացեք, ընկերներ, մենք ձեզ հետ ենք,  
 Տոկացեք, ընկերներ անդին,

Վոր անցնենք այս նեղ արահետը  
Յեղ հասնենք ցանկալի կյանքին...»

## VII

Շշնջում ե կարմիր կամանդորը  
Փոկերի ազմուկի միջից—  
Յեղ լսում են, լսում են բոլորը  
Նրա ձայնը ջինջ ու լճիտ:  
Ու անտես ամենքին, ինչպես ուրիշը,  
Այնտեղից յեղնում են նրանք,  
Թողնելով սրտերում հուր շոխնդ մի,  
Վառելով անմար մի յեռանդ:  
Ու կրկին, հրճվանքով անհուն,  
Գլուխը բարձր ու ուղիղ՝  
Կուսանդորը ձեռքով ե անում  
Յեղ փոխում են նրանք ուղին:  
Հոնգում ե դեմից քամին,  
Բայց անշեղ քայլերով նրանք  
Անցնում են Բալխասնի,  
Մանում են դործարան ու հանք:  
Շրջում են այդպես ամենուր,  
Մանում են գործարան, զավոդ,  
Դեմքերին իջնում ե մուր,  
Շորերին նստում ե նավթի հոտ:  
Յեղ մինչև բարձրանում ե որը,  
Դառնում ե թնդացող ցերեկ—  
Շրջում ե կարմիր կամանդորը,  
Լինում ե ամենուրեք:  
Ձուլվելով դարձող փոկերին,  
Ազմըկող ուրիշների միջից

Խոսում ե ընկերներին  
 Իր ձայնով հաստատ ու վճիտ:  
 Ու, ուրիշ մի նման անտես,  
 Զուլվելով սրտերին նրանց—  
 Շշնջում ե, շնչում ե անվերջ,  
 Անդադար ավյուն ու յեռանդ:

### VIII

Յեվ ապա, յերբ դառնում ե որը  
 Շառաչում, թնդացող ցերեկ—  
 Իրարից բաժանվում են բոլորը,  
 Ցրվում են ամենուրեք:  
 Մտադրադ, գլուխը թեքած,  
 Քայլերի համաչափ դարկով—  
 Ստեփանը գնում ե Յեկա,  
 Զափարիձեն—դեպի Մոփսարկոմ:  
 Գնում են և մյուս ընկերները,  
 Ամենքին անտես քայլերով  
 Անցնում են բոլոր փողոցները,  
 Մտնում են հիմնարկները բոլոր:  
 Սրտերում անբոց մի կրակ,  
 Պայքարում կռիված խոսքերով  
 Ամենուր շնչում են նրանք  
 Անդադար յեռանդ ու կորով:  
 Աշխատանքը անտակ ե, մեծ ե,  
 Թշնամին անտես ու դժնի—  
 Յեվ շրջում են այգալես Քասանդիկցը,  
 Մինչև իրիկունը իջնի:  
 Շրջում են անվերջ, շշնջում են,  
 Առորյա աշխատանքը հսկում,

Մինչև իրիկունը իջնում ե  
 Ու վառում կրակներ վոսկունս:  
 Յեղ իջնում ե յերբ իրիկունը,  
 Վոր հոգնած սրտերին նստի—  
 Քսանըվեցը անխոս հեռանում են,  
 Գնում են հանգստի:

## IX

Յեղ ամեն առավոտ, յերբ որը  
 Բարձրանում ե՛ հոգսը թևին—  
 Շրջում ե կարմիր կոմանդորը՝  
 Քսանիննդ ընկերներ յետևից:  
 Շրջում են ըզրբ վիշկաները,  
 Մտնում են զործարան ու հանք—  
 Քսանըվեց կարմիր ընկերներ են,  
 Քսանըվեց մարտիկներ նրանք:  
 Ձուլվելով դարձող փոկերին,  
 Աղմըկող ութմերի միջից  
 Խոսում են ընկերներին  
 Զայներով հաստատ ու վճիա:  
 Ասում են նրանք.— Տոկացեք,  
 Տոկացեք, ընկերներ անդին,  
 Վառվել ե հորիզոնը լուսե,  
 Առավոտը ցանկալի կյանքի:  
 Քանի կաք, ընկերներ, քանի կաք,  
 Քանի կա աշխատանքը անդուլ—  
 Մեր յերթին—վախճան չկա,  
 Մեր սլայծառ զործին—սլարաություն...

1928

## ԽՄԲԱՊԵՏ ՇԱՎԱՐՇԷ

### I

Փողոցում լուռթյուն էր ու թանձր խավար,  
Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում—  
Իսկ հյուրանոցում խմբապետ Շավարշը  
Խմում էր, խմում էր ու մոռնով լցվում:  
Խմբապետ Շավարշը:—Մի հաղթ տղամարդ,  
Ցերեխին՝ վերից վար՝ դաշույնի հարված.  
Այդ հարվածն համարում էր իր դեմքի զարդը՝  
Մանավանդ, յերբ դժգոհ էր ու մի քիչ հարբած:  
Այդ հարվածն—ու բեխերը:—Դեղին, վռլորած,  
Ցերկու խուրձ հրեղեն, յերկու առու,  
Վոր, ծանր, իջնելով կզակի վրա—  
Նրան տալիս էյին «քաջի» համարում:  
Ցեղ մոռյլ աչքերը՝ բիրերում արյուն,  
Ցեղ խիտ հոնքերի զերանդին...  
Նա իրեն համարում էր—անհաղթ արու,  
Վորպես հրաշք՝ յելած հայ ցեղի արդանդից:  
Շավարշը խմում էր:— Լուռ, մոռյլ բազմած,  
Սեղանի գլուխը, վորպես ամպ ծանր.  
Ցեղ ամեն մի բաժակը քամած  
Նրան դարձնում էր ավելի համր:  
Մենակ չէր Շավարշը:—Նրա հետ նստած

Նրա քաջ խոխեքը, իր խմբի աղերքը՝  
 Իրենց խմբապետ հռչակին վստահ՝  
 Անվերջ խմուռն ելին — ու հոսում եր յերգը:  
 Իզդիրցի Յեզորը, Աարսեցի Հարոն,  
 Մշեցի Թաթիկը ու Սաքոն Առչադ,  
 Վորոնցից վախենում եր անգամ ինքը — Դրոն,  
 Վոր իրենց կանչել եր առավոտը վաղ:  
 Նա նրանց կանչել եր առավոտ վեցին,  
 Շավարշին կարգադրել եր, վոր բերի իր խումբը —  
 Գիտեյին, վոր ուզում ե ուղարկի գործի, —  
 Յեվ ահա Շավարշը մինչև այդ — խմուռն եր:  
 Շավարշ մուսյլ եր: Մի մթին կասկած  
 Ոճի պես կրծում եր նրա սիրտը —  
 Սեղանի գլուխը մութ, մուսյլ բազմած՝  
 Անդադար խմում եր ու հայացքը — բիրտ եր:  
 — Կանչել ե Դրոն առավոտ վեցին, —  
 Մտածում եր Շավարշը, — բայց ինչո՞ւ յե կանչել —  
 Ասաց՝ զրկելու յե կարևոր գործի —  
 Յեվ թողեց, վոր կասկածը մինչև լույս տանջե  
 Յեվ ուտի իր սիրտը — Ինչո՞ւ չասաց,  
 Թե այդ ի՞նչ գործի յե ուղարկում նա —  
 Ուղեղում վխտում եր կասկած հազար —  
 Մտածում եր՝ գնան, թե չգնա:  
 Ո՞վ գիտե Դրոյին: Այո: Ո՞վ գիտե:  
 Կարող ե սարքել հազար դավ: Դրոն:  
 Դժվար ե կռվել հետը:  
 Չուզեց խաթրով անի — կանի գոռով:  
 Կհանի իր վրեժը: — Յերեկ չե՞ր միթե,  
 Վոր Շավարշն սպառնաց շտաբը քանդել  
 Ինչո՞ւ — Վորովհետև  
 Առևտահայ սղաներն են իշխում այնտեղ:

Ոսացած սպաները:— Ոսլայած սզերք,  
 Ձեռքերին՝ ձեռնոցներ, դեմքերին՝ պուզբա  
 Վոչ զենք են տեսել, վոչ կռիվ:— Մերկ  
 Մղջիկներ են միայն տեսել դրանք...  
 Յեվ դրանք ահա, այդ լակոտները,  
 Վորոնց ինքը կարող ե տանել բաղանիք—  
 Ուզում են, վորպեսզի խմբապետները  
 Իրենց ձեռքին դառնան կույր խաղալիք:  
 Ուզում են տիրանան յերկրին, բանակին,  
 Հաստատեն ոսացած մի իշխանություն.  
 Բայց վոնց նա կուանա դրանց տակին.  
 Կնիկ ե ինքը, թե կատմե...  
 Իսկ Դրոն, իզդիրցի այդ խմբապետը,  
 Վոր յեղել ե հերոս, անվախ տերորիստ,  
 Դրոն— նրանց հետ ե  
 Յեվ ուզում ե դառնա մինիստր:  
 Ռազմական մինիստր:— Լավ: Լավ:  
 Հետո: Ի՞նչ պիտի անի հետո նա:  
 Դե, վոր մինիստր դառավ—  
 Կարող ե բոլորին տա գետնովը:  
 Կարող ե հավաքի իզդիրցիներին,  
 Բռնոտի բոլորին, զինաթափի,  
 Սպանի, ջանդակները շներին քցի,  
 Վոր ծաղկի իր շտաբը...  
 Խոնվեցին մտքերը Շավարշի գլխում.  
 Գլուխը ծանրացավ. լցրեց ու խմեց:  
 Մրտում մոմաացող կասկածը խուլ  
 Դառնում եր հետզհետե մեծ:  
 Դե, Դրոն— թագավոր ե:— Դեռ յերեկ եր  
 Սպանեց իր աղերքից յերկուսին,

Վորովհետև այդ տղերքը  
 Հարբած՝ թքել էյին մեկի յերեսին:  
 Կառքից իջեցրել էյին ու դեմքին թքել.  
 Հետո դուրս եր յեկել, վոր մինիստր ե...  
 Դե, տղերքը—հարբած են յեղել.  
 Հարբածին էլ ի՞նչ մինիստր:  
 Թքել էյին դեմքին ու նստել նրա կառքը,  
 Մինիստրի կառքը,—վնյ, հարամգաղեք...  
 Բայց հո չկործանվեց աշխարքը.  
 Մինիստրը աշխարք եր աղատել...  
 Իհարկե, սխալ եր: Իհարկե, Դրոն  
 Վարվել եր անվայել, վարվել եր ամարդի.  
 Խարելով կանչել եր նրանց միլիցիատուն—  
 Այդպես չի վարվի տղամարդը:  
 Խարելով կանչել եր, թե կնեբրի.  
 Տղերքն էլ յեկել էյին,—և ասա միամիտ  
 Նրանց հանել էյին կամերից  
 Ու կոնակից խփել... Միայն մի  
 Ինչ—վոր հարբած մարդու ներկայությամբ...  
 Սուս ու փուս: Գաղտագողի: Անձեն:  
 Ո՞վ գիտե Դրոյին... Ինչքան ե նա  
 Այդպես գաղտագողի հնձել...  
 Մեկը—Թեիկն եր, Յեգորի յեղբայրը.  
 Յեգորը Դրոյին կնեբրի:—Վոչ:—  
 Ահա նստել իր մոտ—խմում ե անղաղար  
 Ու հարբած՝ համբուրում ե ընկերոջը—  
 Ղարսեցի Հարոյին:—Լավ: Լավ:  
 Յեգորը իր մարդն ե այսուհետև:  
 Յեղբոր պես լինելու յե մոտիկ, հալար,  
 Նույնիսկ կովեն յեթե:

Այ քեզ մինիստր... Այ քեզ Դրոս  
 Այ քեզ խմբապետ քաջ...  
 Չեռքը խփեց սեղանին Շափարչը—  
 Հողը դողաց:  
 Խփեց ու խմեց: Նորից խմեց: Մուսյլ:  
 Ու վոչ մի բառ հասեց: Գլուխը  
 Ծանր՝ դրեց կրկին իր բռունցքի վրա.  
 Այդպես անշարժ—մնաց: Իսկ շուրջը աղմուկ էր:  
 Յերգում էր Ղաչաղը:—Բայաթի՛ յեր, թե յերգ  
 Թուրքերեն, վոր լսել էր Շափարչը.— յերբ:  
 Գլխում ծանրացել էր մի թանձր մեզ.  
 Սրտում խլրտում էր կասկածը դեռ:  
 Ուզում էր բարձրանա, թքի հացին,  
 Իրենց կերած հացին. շուռ տա սեղանը:—  
 Արդեն մոտենում էր լուսաբացը.  
 Իսկ նա դեռ տառանվում էր. չգիտեր,  
 Թե կատարի՞ արդյոք Դրոյի հրամանը:  
 Ուզում էր տասնոցը հանի, կրակի,  
 Բայց իրեն զսպում էր. մտածում էր:  
 Վերջապես տղամարդի վարտիկ է հաղին,  
 Յերակներում—արյուն է, և վոչ թե— մածուն է  
 Դե, Դրոն թագավոր է:—Ու թող լինի:  
 Բայց հո չի՞ կարող այդ մարդը  
 Ինչ ուղենա—անի.—  
 Բա իրո՞ւ—Շափարչի՞—աշխրո՞ւթը:  
 Իր հետ է աշխրաթը:—Շափարչը հիշեց.  
 Ուզեղում բացվեց լայնանիստ—  
 Ալագյազը... դուման... անասաղ գիշեր...  
 Ծների վոռնոց անհանդիստ...  
 Սնցնում են գյուղերից: Առջևից—տավարը՝

Հայկական, թուրքական գյուղերից քշած:  
 Գյուղերում—ընկել ե հավարը.  
 Լաչանկ եր եդ՝ գյուղերի գլխին քաշած...  
 Ճոճուում են սայլերը. ձիերը դոփում:  
 Մայլերին—յերեխեք, կնանիք. բեռ...  
 Դումանը շոյոդ ե, ինչպես զեփյուռ,  
 Ջիբրի դոփյուենը, ինչպես յերգ...  
 Առջևից—տավարը, յետևից—աշիրաթը՝  
 Շավարշի աշիրաթը.—խնուսցինեք,  
 Վորոնց տեղահան եր աբել—  
 Պատերազմի թաթը—  
 Ու աշխարհում ցրել:  
 Շատերը՝ կորցրած տուն, տեղ,  
 Ընտանիք, յերեխեք, հայր, մայր,—  
 Այժմ պատրաստ եյին ամեն ինչ քանդել  
 Մի լավ ձիու, կամ մի բեռ ալյուրի համար:  
 Ով ել հանդիպեր, ումն ել լիներ.  
 Ռսի, թուրքի, հայի—միենույն չէ:  
 Միայն թե քաղցից չվոռնար կինը.  
 Միայն թե յերեխեն շունչը չփչեր:  
 Խնուսից—Ալաշկերտ: Հետո Ղարս:  
 Ցուրտ, մերկ, սով, տիֆ:  
 Ինչքան, ինչքան մեռան,  
 Քաղցից, կամ յետ չեկան Փրոնտից:  
 Ամբողջ ճանապարհը—դիակներ, մահ:  
 Ով վոր մնաց՝ մնաց: Հասան վերջապես  
 Այն ուսի յերկիրը, վորի համար  
 Այնքան արյուն եյին իրենք թափել...  
 Հասան: Թափվեցին կիսամերկ: Յեւ ի՞նչ.  
 Մնացին յերկնքի տակ բաց,  
 Ցուրտը յետևից, քաղցն առջևից—

Վոչ ոգնություն, վոչ բան:  
 «Ռուսահայ յեղբայրները»... հա—հա...  
 Ընդունեցին—թուրքից ել վատ, այն.  
 «Ռուսահայ յեղբայրները»... «Հայրենիք». «Հայ».  
 Կուշտ. ախանջները գինջ. տպահով:  
 Բայց ինչ՞աւ ընդունեցին այդքան վնաս, վնաս,  
 Ոտարի, թշնամու, գրողի պես.  
 Դե, հայեր են լիրբ, մուխաննաթ,—  
 Մտածում եր Շավարչը,—հայեր են գեշ,  
 Այլասերված հայեր, ուսացած.—վոչ  
 Կովի յերես անսած, վոչ կովի ահ.  
 Յեւ դա չէր պատճառը, վոր  
 Վոչխարների նման սարսափահար,  
 Նրանք փախան Փրոնտից, ավին Երզրումը,  
 Հետո Ղարսն, Ալեքսոլը... վնչ ձեղ, հայեր...  
 Շավարչի գլուխը մտքերից յեռում եր.  
 Շավարչը դառը ծիծաղեց.  
 Խմեց. ու հոսեցին կրկին մտքերը—  
 Իրարից ավելի պղտոր ու ծանր,—  
 Իսկ Ղաչաղը յերզում եր, դեռ յերզում եր,  
 Հոսում եր գառնությունը համր...  
 Յեւ հանկարծ Շավարչը—այնքան պարզ—  
 Կարծես դեմը լիներ, կարծես կենդանի—  
 Հիշեց.—առավոտը բացվում եր, թարմ,—  
 Երջապատել եյին թուրքական Թալինը  
 Յերեք որ եր արդեն—կովում եյին.  
 Երջապատել եյին գյուղը չորս կողմից խիտ.  
 Մարմանդ լուսաբաց եր, յերբ  
 Գյուղը զարթնեց հանկարծ թանձր ծխից.—  
 Շավարչի տղերքը գիշերը

Վառել էջին գյուղը մի ծերից—ու հիմա  
 Չորս կողմից խուժեցին նրանք ներս՝  
 Փռելով իրենց շուրջը ահ, մահ, մահ:  
 Աղմուկ, ճիչ, լաց, սմբակների շինիդ,  
 Ինքը, նստած սև ձին, ձեռին մառուգեր,  
 Փափախը թեք գրած, մի ձեռով պինդ  
 Գրկած ձիու բաշը՝ արշավում եր...  
 Յեկ հանկարծ... ծառս յեղավ Շավարշի ձին. լինչ,  
 Ինչ գարմանալի հրաշք, Շավարշ...  
 Իմացից դուրս թռավ մի հրեշտակ, չէ. կին.  
 Ձին սանձեց Շավարշը—ու մնաց:  
 Ձաննաթի փերի յեր, կին չեր, չէ.  
 Չեր տեսել Շավարշը այգալիսի կին.  
 Մարտափած աչքերով կինը նայեց շուրջը—  
 Աչքերը սև էին, սև ու ջինջ:  
 Սև մաղերը թափված ուսերին, կուրծքը բաց.  
 Ալբաստրե, ճերմակ ձյունների նման  
 Շողոողում եր կուրծքը, ինչպես լուսաբացին  
 Ալագյաղը, յերբ ցնդում է դումանը:  
 Շավարշը սանձել եր ձին, քարացել  
 Ազդեցիկ եր տեսքը՝ հազի  
 Կաշի սև զգեստը, ձին տակի,  
 Վոր սարսափահար ծառացել՝  
 Խփում եր մի վոտքը հողին, վրնջում եր,  
 Աչքերից թափում եր բոց, շանթ, աղամանդ, ծուխ.—  
 Շավարշը լսում եր իր ձիու վրնջյունը  
 Յեկ ուռչում եր կուրծքը, ուռչում, ուռչում, ուռչում...  
 Տեսարանը շքեղ եր. ինքը—զարհուրելի,  
 Ծառացած կնոջ առջև, ինչպես սուրբ Գևորգ  
 Ու կնոջ աչքերը՝ սարսափով լի,

Աչքերը, վորպէս գիշեր: Ու թվում եր—ցնորք ե:  
 Մի վայրկյան եր միայն, վոր տեկց  
 Յերկար, ինչպէս դարը:—Շավարշը մի պահ միայն  
 Ուզում եր բաց թողնել ձին յետեւից,  
 Վախենալով, վոր կինը կանեցանա,  
 Կտեսլանա հանկարծ, կցնդի,  
 Կդառնա գարնանային մշուշ, ամպ, ցող—  
 Ու կմնա լոկ ինքը ու ձին՝  
 Գյուղամիջին ահից խրխնջացող.—  
 Բայց պատահեց հանկարծ զարմանալի.  
 Չարմանալի մի բան.—կինը, հեիհե,  
 Ինչպէս ճերմակ փրփուր, ճերմակ ալիք—  
 Փլվեց, փռվեց Շավարշի նժույգի առջև.—  
 «Կուրբան»,—կանչեց կինը.— «Կուրբան սյանի,  
 Սյան մյանըմ իգիթըմ, սյան մյանի ալ.  
 Մյան սյավարըմ սյանի, իգիթ երմյանի» —  
 Չայնը՝ ազբրի նման, ազբրի նման գուլալ...  
 Ի՞նչ եր, ի՞նչ եր, ի՞նչ եր. ցնորք եր, գառանցանք, տէ՛նդ.  
 (Բրտինքի մեջ կորած ձին  
 Լիզում եր թաց չնդերքը  
 Յեւ հազիվ եր դիմանում օանձին)—  
 Յերբ դիմացից հանկարծ, դիմացի խրճիթից  
 Գուրս թռավ մի գինվոր՝ ձեռքին դաշույն,—  
 Հետո հիշում է Շավարշը մի զարհուրելի ճիշ,  
 Հետո մշուշ, մշուշ, մշուշ...  
 —Չեմ տա,—գոռաց գինվորը,—չեմ տա, Շավարշ,  
կմն ե.

Իմ ձեռքերից փախավ շան քածը...

Վրա պրծավ մուսկ.—ու շողշողաց դաշույնը,  
 Ու Շավարշին թվաց, թե հարբած ե—

Ու հիշում ե Շավարշը.—կինը՝ վերքը կողքին՝  
 Թավալվում ե իր կարմիր արյան մեջ—և—  
 Իր մառուզերի շողքը, իր մառուզերի շողքը,  
 Ու զինվորի դիակը—իւր ձիու սմբակներին առջև...

Այն լճն էր, լճն էր, լճն էր. ցնձրք էր, գառանցանք,  
 ահնգ.

Խենթի պես, նրանց դիակներին վրայով, քշեց իր ձին,  
 Այրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց,  
 Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի:

Կոտորեց. չհարցրեց ծեր, կին, աղջիկ, մանուկ,—  
 Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց.  
 Հետո լուսինը կարծես արյան մեջ եր լողանում,  
 Իսկ գյուղը դիակ եր կարծես՝ կապված իր ձիու  
 ասպանդակից:

Ուղեղում մշուշ եր—կարմիր, ալ, արյունարբու,  
 Ուղեղում թուրք կնոջ մարմինը վառվում եր,  
 վորպես վերք.

Հետո հարբեց Շավարշը. գայլը արյունով ե հարբում,  
 Իսկ Շավարշը—մի գայլ եր, վոր կորցրել եր մի եգ—  
 Մի սպիտակ, մի մաքուր, մի հրաշալի...

Շավարշը

Բռունցքը խփեց սեղանին. խմեց. և յերբ  
 Մրբեց բխիրը բռունցքով—հիշեց իր ձիու բաշը,  
 Իսկ Ղաչաղը յերգում եր դեռ:

## II

Արդեն փողոցում ցրվում եր խավարը,  
 Մոռենում եր առավոտը, պղտոր բացվում,—

Իսկ խմբապետ Շավարշը

Դեռ խմուճ էր, խմուճ էր ու մուժով ցլվում:

Տղերքն հարբել էյին:—Թաթիկը՝

Սիրեկանի նման դրկած Հարոյին՝

Համբուրում էր նման հարյուրապատիկ—

Իսկ Յեզոբը հայհոյում էր Դրոյին:

Շավարշը մտածում էր:—Մտքերի թելը,

Վոր աշնպես տարածվել էր Ղաչաղի յերգից՝

Թողնելով հիշողության, անցյալի յելը՝

Դրոյի շուրջը վոլորվեց կրկին:

Արդեն բացվում էր առավոտը.—արդեն

Բաց-կարմիր թանաքի նման Յերևանի վրա

Թափվում էր հորանջող ու մքլած այգը—

Յեվ Յեզոբի հայհոյանքն էր վողջունում նրան,

Միայն այդ հայհոյանքը:—Քաղաքում դեռ

Մարդիկ քնած էյին ծանր, տազնադալի քնով,

Յեվ բացվող առավոտը անտանելի մի բեռ էր,

Վոր իջնում էր կրկին իր անմխիթար հունով.—

Քաղաքը դեռ քնած էր լուռ, համր, ծանր,

Ներքևը միայն, հյուրանոցի առջևը, փողոցում

Կանացի, մանկական, թե՛ պառավային մի ձաֆն

Վնգստալով ողն էր սղոցում.—

Շավարշը մտածում էր. հարկավոր էր իսկույն վորոշել՝

Հարկավոր էր գնալ, կամ չգնալ. մնում էր

Մի-յերկու ժամ միայն:—Յեվ նա վորոշեց.—

Նա կգնա, բայց մենակ. խուճբը՝

Կազմ, պատրաստ՝ կապասի քաղաքից դուրս,

Փարաքարի մոտի այգիներում. հետո—

Հետո հայտնի կանի:—Ձինվորներից լոկ չորսը

Կգնան իր հետ առավոտուն.—

Յեզորը, Ղաչաղը, Թաթիկը, Հարոն.—

Հենց սրանք—բավական են. կարո՞ղ ե՛  
Թող հարձակվի Դրոն.—

Բայց ո՞վ ե... նրա ձեռքը... սահողը...

Կարող ե բանտարկի: Կարող ե հանկարծ

Սպանի տղերքից սրան, կամ նրան:

Վոլորեց Շավարշը իր պղտոր հայացքը—

Հիշեց արչունտ այն տեսարանը.—

Միլիցատան բակում, ավազին,

Իրար կողքի ընկած—յերկու դիակ.

Իգդիրցի Թեիկը և Աղասին՝

Լուռ, արնաշաղախ միայն

Ծոճրահների վրա—փոքրիկ վերքեր.

Խփվաց եր կոնակից... Այդպես—

Դեպի մաուզերը տարավ

Շավարշը իր ձեռքը.

Արյունը գլուխը խփեց—

Հարբեց...

Դա վնչ թե քամին ե փողոցում շահում,

Յեւ վոչ ել հրթիռը հրդեհում խավարը,—

Իր խմբի տղերանց հետ դա հյուրանոցում

Խմում, աղմկում ե խմբապետ Շավարշը:

Այդ նա յեր, վոր տարավ ձեռքը մաուզերին,

Հանեց. քաշեց.— և վաղ առավոտվա մեջ

Չարագուշակ, դաժան լերդեց մաուզերը

Արյան, մուժի, մահի, ասպատակի յերգ...

Հետո ձայնակցեցին նրան մյուսները՝

Յեգորը, Թաթիլը, Ղաչաղ Սաքոն,—  
 Իսկ քաղաքը, սմկած, դեռ քնել եր  
 Ու զառանցում եր մառուկերի կրակոց։—  
 Ինչպես տիֆով հիվանդի զառանցանքում հրե,  
 Նախճիրի պես բացվող առավոտվա ֆոնին  
 Գծելով տապնապի հնչնագրեր—  
 Յերգում եր մառուկերների սիմֆոնին։  
 Կրակում եյին աղերքը—բաց պատուհանից.  
 Իրար կողքի կանգնած, հայացքները դեպի լուսաբացը,  
 Համազարկը թռչում եր տանիքից—տանիք,  
 Առավոտվա միջով, վոր նրանց պես հարբած եր  
 Պտտոք առավոտվա միջով, առավոտվա մեզին,  
 Քաղաքի վրայով, վոր զառանցում եր,—  
 Մավառնում եր խմբապետ Շավարշի հողին,  
 Հարբած, մռայլ, դաժան, ինչպես ձյունը,  
 Վոր բուք դարձած՝ խեղդում ե, արորում,  
 Դարձնում աշխարհը, կյանքը, ամեն ինչ—տենդ.—  
 Կրակում եր խումբը ու նայում հեռուն՝ աչքերում  
 Արյան, մեզի, մահի, տապնապի նախճիրներ...  
 Շուռ յեկավ հետո Շավարշը. մառուկերը ձեռին—  
 —Գնանք,—գոռաց աղերքին,—ու պրծավ դուրս.  
 Խռպոտ՝ հորդեց կոկորդից քրքիջը,  
 Հետո—հայհոյանքը. հետո—  
 —Յեգոր,—կանչեց,—լսում ես. մեզ Դրոն ուզել ե,  
 Ուզում ե ուղարկի յերկինք՝ յեղբայրներիդ քով...  
 Ու կրկին շառաչեց Շավարշի մառուկերը—  
 Ասպատակի, մահի, արյան յերգով:  
 Ահուելի յեր Շավարշը. ձեռքին մառուկեր՝  
 Որորվելով, գնում եր մեզի միջից.

Յետեկից—իբ տղերքը. բոլորի ձեռքին—գենք,  
 Բոլորն ել—իբ նման հարբած:—Առաջից  
 Գայլում եր, վորպես սպառնալիք, ինքը. կողքեկողք  
 Ընկնելով—գնում եր, այրում եր սիրտը տապը.  
 Հետո բռնեց նրան մի խեղդող դող.  
 Գլուխը շուռ յեկավ. սիրտը թափեց—  
 Հենց այնտեղ, փողոցի մայթերին:—Տղերքը  
 Բռնել էյին նրան:—Փողոցում,  
 Ու դադարել եր արդեն մառազներն երի յերգը—  
 Մի ծանր խռպոց եր միայն ողը սղոցում:—  
 Մեկը, մտախիլ ընկած, մեռնում եր յերևի.  
 Կին եր, տղամարդ եր, յերեխամ,—անհայտ եր.  
 Ո՞ւմ ինչ, թե նայիրյան ծագող արևին  
 Խռպոցով եր դիմավորում այդ մարդը:—  
 Հանգստացավ Շավարշը:—Յեվ յերբ,  
 Բեխերը սրբելով, անցավ առաջ—յերկու  
 Զառանցանքի նման յերեխաներ,  
 Աչքերով ամեհի, ահարկու—  
 Ինչպես շները սովամահ, դաշտում դեգերող,  
 Հղի կանանց նման փորներն ուռած,  
 Մազիչների նման ձեռքերով  
 Հարձակվեցին Շավարշի փսխածի վրա—  
 Յեվ սկսեցին լափել ազահարար՝ ընկած  
 Յերեսնիվայր մայթին, ինչպես շներ,—  
 Ու նրանց աչքերում պսպղում եր քաղցը՝  
 Անասնական, անեղրական, անեղր...  
 \* \* \* \* \*  
 \* \* \* \* \*  
 Գնում եր փողոցով խմբապետ Շավարշը,

Յետեից—տղերքը, իր նման հարբած:  
 Արդեն արթնանում եր գառանցող քաղաքը,  
 Արդեն առավոտ եր դառնում լուսաբացը:  
 Տներից յիջնելով հետզհետե՝ մարդիկ  
 Անխոս զնում էյին՝ դեմքերին հոգս:—  
 Անցնում եր Շավարշը, իր խմբով, մայթից,  
 Տարածում եր շուրջը զարհուրանք, դող:  
 Յեվ հանկարծ—կրկին նա քաշեց մառուղիքը,  
 Առաջին հանդիպած մարդուն հրամայեց.  
 —Դեպի պատը ուխդ, դե շուռ տուր յերեսդ,  
 Տեսնում ես՝ անցնում են մայթից—ահա լես:—  
 —Շավարշն է անցնողը:—Տղերքը զվարթ  
 Հրհռացին բարձր, հայհոյեց Հարոն,—  
 Ու շուռ յեկավ մարդը, նայեց դեպի պատը,  
 Յեվ անցավ Շավարշը՝ հայացքը արյուն:  
 Յեվ հետո—ինչքան նա հանդիպեց մարդու՝  
 Բողորին հրամայեց նայել պատին.  
 Բողորի դեմքերին նա վախ եր կարդում  
 Յեվ դա համարում եր—բարձր պատիվ,  
 Յեվ այդ պատճառով ել—չափազանց հպարտ եր:  
 Մի ամբողջ փողոց նա այդպես անցավ,  
 Մինչև հանդիպեց մի մարդու,  
 Վոր յերեսը շրջել չկամեցավ...  
 —Յերեսդ,—գոռաց Շավարշը,—դեպի պատը,  
 Թե չես՝ ուխտ—մուխդ հիմի կջարգեմ...—  
 Բայց այդ զարմանալի մարդը  
 Մառուղիքը քաշեց—ու կանգնեց նրա դեմ:  
 Շավարշը շվարեց, յերանդ եր, տենդ,—  
 Ուզեց մառուղիքի բլթակը քաշի,  
 Յերբ հանկարծ յետեից մի ծանր ձեռք  
 Բառնցքով խփեց Շավարշին:

Շավարշը որորվեց, ընկավ մայթին.  
 Փողոցը յերերած աչքերում. մթնեց.  
 Ու թվաց Շավարշին, թե այդ մարդը  
 Գաշեց իր ուղեղում յերկաթե պատնեշ...  
 Չլսեց եւ Շավարշը իր խմբի տղերանց  
 Մառազներների ձայնը և չղզաց անգամ,  
 Թե ինչպե՞ս Յեզորը հանկարծ  
 Գարի պէս ծանրածանր—իւր վրա ընկավ:  
 Չտեսավ Շավարշը և այն, թե հետո  
 Իր խմբի մնացորդը վոնց նահանջեց.  
 Լոկ թվում եր նրան, թե մեկը յերկաթով  
 Այրում է իր ախանջը:  
 Յեւ տանը միայն, յերբ աչքերը բացեց,  
 Ուշքի յեկավ մի քիչ—հասկացավ, վոր այդ մարդը,  
 Վորին հանդիպել էր—յեղև է իր մեծ  
 Խաչեղբայր—խմբապետ Սմբատը:

Ս Ա Ս Ո Ւ Ն Յ Ի Դ Ա Վ Ի Թ Ը

Դառնանք—բարբառենք նզովք մենք նախ  
Մարմեխիքին, Թագավորին:

Դառնանք—բարբառենք նզովք ապա  
Չենով-Ոհանին, Իշխանին նենգ:

Դառնանք—բարբառենք նզովք ապա

Մ. յլ Իշխաններին բոլոր այն մեր,

Վոր բերին մեզ մահ, ու մութ, ու նեւ:

Փնփն փառաբանենք ապա մենք մեր

Առյուծ-Մհերին, դյուցազնին քնջ,

Դավիթին՝ նրա վորդուն դյուցազն,

Մհերին՝ նրա վորդուն անմահ,—

Վողջ ժողովրդին ապա Սասմա,

Վոր լուրթ լեռներում մի որ բազմած

Հորինեց պայծառ զրույցը այս—

Յեւ անցավ անհետ, դարձավ յերազ:—

Սկսենք ապա հանգով ճարտար

Սասունցի Դավիթի զրույցն արդար,

Վոր մնալու յե հավիտյան—հնր

Զրույց իմաստուն և վռկերաս:—

## Ա

Մհերը՝ զարմով արևազուն՝  
 Քառասուն տարի իշխեց Սասուն,  
 Իբրև այր արգար և դյուցազուն։—  
 Նա պատերազմներ մղեց բազում  
 Թշնամիների հանդեպ հզոր,  
 Վոր խուժում էյին անբավ ուժով  
 Տիրելու բարձրիկ յերկրին Սասուն, —  
 Բայց մարտերում այդ հզորագոր  
 Հաղթում եր նա միշտ իր սրով սուր։—  
 Վորպես այր ոամիկ ու դյուցազուն՝  
 Նա հուր ձի ունեւր, կայծակե սուր,  
 Բայց ուժը նրա, վոր չեւր կասում,  
 Ժողովուրդն եր իր բազմաբազում։  
 Յեւ անպարտ եր նա իր սրով սուր  
 Յեւ ժողովրդով ոամիկ ու սուրբ։—

## Բ

Մհերի որով յերկրում Սասուն  
 Ապրում եր ոամիկ մի ժողովուրդ,  
 Չունեւր իշխաններ նա զեռ հմուտ,  
 Իշխաններ դժնի, ու չար, ու մուլթ,  
 Յեւ ապրում եր իր լեռներում լուրթ  
 Վաստակով իր պարզ, քրտինքով սուրբ։  
 Առյուծ-Մհերին, դյուցազնին մեր  
 Նա ինքն եր իրեն իշխան կարգել —  
 Յեւ ապրում եր իր լեռներում զեռ  
 Նա կյանքով ազատ ու անարգել։

9.

Ո՛, ռամիկ կյանքի անգո պատկեր,  
 Դարերում հեռու, ու հին, ու ծեր,  
 Յերբ մարդկությունը ասլրում եր դեռ  
 Վաստակով արդար, ու սուրբ, ու վեհ:  
 Ո՛, վաղընջական արշալույսներ,  
 Մանուկ մարդկության որեր լուսե,  
 Յերբ լուրթ լեռներում դեռ չեր բուսել  
 Դժնի բանսության ընձյուղը սև,  
**Յերբ իշխում ելին աշխարհում դեռ**  
 Ռամիկ ու արդար դուրսագուններ...

9.

Իշխեց նա այսպես, դուրսագնը մեր  
 Քառասուն տարի:—Յեկ անհ ծեր  
 Մազերին նրա, գլխին հուրհեր  
 Իջավ մառախուղ, ցրտին ձմեռ:—  
 Դարձավ նա դառամ ու ալեհեր,  
 Յեկ կամաց-կամաց դուրսագնին ծեր  
 Սկսեց պատել, ինչպես գիշեր,  
 Վիշտ անբուժելի ու մահաբեր:—  
 Չուներ նա ժառանգ աշխարհում դեռ—  
 Յեկ մտորում եր դուրսագնը ծեր:

b

Մտորում եր նա, դուրսագնը ծեր,  
 Վոր մնալու չե չերկիրն անտեր,—  
 Բարձրաբերձ լեռներ, հարուստ հանդեր,

Յեզ վոսոխի ու չարի հանդեպ  
 Ռամիկ ժողովուրդ՝ անկար, անգետ:—  
 Մտածում եր նա, դյուցազնը սուրբ,  
 Վոր անցնելու չե իր փառքը զուր,  
 Վոր իր չերկնահեց չերկիրն հզոր  
 Դառնալու չե վազն հազար ու բյուր  
 Թշնամիների ավար ու կուր:—  
 Յեզ այսպես՝ հասած ծերության դուռ՝  
 Մտորում եր նա սրտով տխուր,  
 Յեզ իր հեա մեկտեղ, թախիծով հուր,  
 Ժողովուրդն եր վողջ մտորում լուռ:—



Կարճը ե սակաչն պատահել, վոր՝  
 Վորքան ել լինի ապագան մութ՝  
 Մնա անժառանգ ու անսերունդ  
 Յերկիր մի ամբողջ ու ժողովուրդ:—  
 Կարճը ե լինել, վոր չերկրում լուրթ,  
 Վորքան ել խավարն իջնի տխուր,  
 Զբացվի հանկարծ հրաշքով հուր  
 Գալիքի համար փրկության դուռ:—  
 Յեզ անա—մի վառ ու պայծառ սր—  
 Հրաշքով անհաս ու զորավոր—  
 Առյուծ-Մհերին մեր ալևոր  
 Ծնվեց մի մունկիկ արևավոր:—



Ծնվեց մի մանկիկ սրևալոռ  
 Առյուծ-Մհերին իբրև ծառանդ,  
 Դավիթ անվանեց ծերը նրան,

Փառք տվեց ապա բախտին իրա,  
 Վոր հուշն իր ել հնր չերկրի վրա  
 Պիտի առկայծի ու հուրհուրա:—  
 Յեզ նայելով իր մանուկ Դավթին՝  
 Նա պայծառացավ սրտով կրկին,  
 Նա ինքն եր կարծես չեկել չերկիր  
 Հրաշքով մի սուրբ ու անհնար,—  
 Նա ինքն եր կարծես չեկել աշխարհ  
 Ու հուր-հավիտյան պիտի մնար...

## Ը

Գիտեր նա արդեն, դյուցազնը ծեր,  
 Վոր դյուցազունն է Դավիթն հուրհուր,  
 Վոր չերկրին իր լուրթ, ու բարձր, ու վեհ  
 Վորքան ել ահ գա, վորքան ավեր—  
 Կելնե Սասունցի Դավիթը վեր,  
 Իրբև նոր դյուցազն ու նոր Մհեր:  
 Գիտեր, վոր արդեն չերկրին Սասուն,  
 Իր ժողովրդին ուսմիկ ու սուրբ  
 Թեկուզ վորձանքներ իջնեն բազում,  
 Վորքան ել տենն նոքա չերկար—  
 Ահա Դավիթը իր դյուցազունն,  
 Իր ժողովրդի բազուկը սուրբ՝  
 Յեզ արդար, է՛ վեհ, է՛ աներկրա...  
 Յնծաց նա սրտով իր աներեր,  
 Սյդ ինքն եր կարծես ծնվել չերեկ,  
 Խոր խավարի մեջ տեսել ցերեկ,  
 Փարվեց կարոտով վորդուն նորեկ—

Խանդով խնդագին գրկից նրան,—  
 Փակեց նա ապա աչքերը սեզ—  
 Յեզ ինքն ել, կինն ել ընկան— մեռան...



Յերբ մեռավ աչպես Մհերը ծեր,  
 Թողնելով մանկանն իր նորածին—  
 Սասմա իշխաններն չեկան—ասին,  
 Թե մերն է հիմա Մհերի ձին,  
 Յեզ տեր կանգնեցին ու տիրեցին  
 Մհերի ամբողջ ունեցածին—  
 Յեկան իշխաններն ու խլեցին  
 Մհերի հողերն ու նրա ձին,  
 Մհերի գորքերը ցրեցին  
 Յեզ կալվածները բաժանեցին—  
 Յեզ տիրանալով չերկրին աչպես՝  
 Ջենով-Ոհանին բերին հանդես,  
 Վոր իբրև հմուտ ու հուստես  
 Այր հավատարիմ, իշխան ու մեծ—  
 Կառավարե է իշխե իբենց—



Ջենով-Ոհանը դարձավ իշխան...  
 Յեզ Ոհանը չերբ իշխան դարձավ—  
 Առյուծ-Մհերի զենքերն հրցայտ,  
 Նժուլդներն այն հուր, սուրը կալծակ—  
 Հավաքեց, լցրեց մի քարանձավ:  
 Մոռացած նրա փառքը սլայծոտ՝  
 Թագցրեց նրա զենքերն հրցայտ,

Առյուծ-Մհերի սուրը կաջծակ  
 Յեզ գորութիւնը նրա անծայր:—  
 Հավաքեց ապա, տիրեց իսկուչն  
 Առյուծ-Մհերի անբավ վոսկուն,  
 Սրտում ան հաղար, հաղար սոսկում՝  
 Աչքերը չսեց նրա վոսկուն:—  
 Մոռացած նրա համբավն հավետ՝  
 Նրա վաստակած վոսկուն ցավեց,  
 Իբրև վոստիւից աշխարհավեր  
 Միակ փրկութիւն ու ապավեն:—  
 Իսկ դշուցազն Դավթին, մանկանն հուրհեր-  
 Նա հովիվ կարգեց սարերում մեր,  
 Վոր խաշն արածե ամառ-ձմեռ,  
 Իսկ գիշերները քնի մի ծեր,  
 Մի սյրի կնոջ խուղում, վոր ել  
 Մոռանա հավետ, վոր դշուցազուն  
 Իր հայրը ուներ կաջծակե սուր,  
 Հուր նժուշգ ուներ, զրահներ հուր,—  
 Չըրկելով նրան աչսպես մի որ  
 Չենքերից իր քաջ, դշուցազուն հոր:—

ԺԱ.

Ո՛հ, Առյուծ-Մհեր, ուսմիկ արդար,  
 Փրկութեան պատենէ չարից չարկամ,  
 Չեռք ժողովրդի, ուժ տիրակալ,  
 Անհատենելի ու անեզրական...  
 Մինչև բարձրանար վերջին անգամ  
 Դշուցազուն Դավթին իր քնից վեր—

Ձենով-Ոհանը, իշխանն այն նեո  
 Դեո վորքան պիտի քրտինք քամեր,  
 Յեվ ինքնությունն ու հուր՝ գանձը մեր  
 Տար գարկիչներին աշխարհավեր...

## ԺԲ

Մարածելիքը, արքան այն նեո,  
 Յերբ լսեց մի որ լերկրում իր ջեո,  
 Վոր չկա Սասունում Առյուծ-Մհեր,  
 Վոր իշխաններն են արդեն տիրել  
 Լեռներին Սասնա ու դարձել տեր—  
 Յեկավ, պաշարեց հովիտ ու լեռ,  
 Վորպես չար խորշակ, կամ ժանտ ձմեռ։—  
 Ոհանը մի որ բարձրացավ դեր—  
 Պաշարված տեսավ լերկիրն հայոց,  
 Տեսավ զբահներ, ու հուր, ու բոց,  
 Սարսափեց, սարսեց ելությամբ վողջ,  
 Յեվ գնաց հայցի աղիտզորմ  
 Փրկություն՝ չարից այն անողորմ։—

## ԺԳ

Գնաց մեր Ոհանն, ահով-դողով  
 Սրքալի առջև այն անողորմ  
 Գլուխ խոնարհեց ազգով-ցեղով,  
 «Բննն ե» — աղերսեց — «Յերկիր ու հող» —  
 Ընծայեց նրան վոսկի շողշող,  
 Գերության հանձնեց Սասունը վողջ։—  
 «Լավ» — համաձայնեց Մելիքն անեղ,—  
 «Ձեր կյանքը» — ասաց — «Կխնայեմ,

«Միայն թե թող գա քո չերկնասեռ  
 «Ժողովուրդն ամբողջ, մանուկ ու ծեր,  
 «Յեվ անցնի տակով իմ թրի կեռ,  
 «Վոր Սասնա չերկրու՛մ վնչ մի մարդ էլ  
 «Չարժի իմ դեմ զբահ ու զհնք?»»

Ժ՛:

Չենով-Ոհանը, իշխանն աչն նենգ,  
 Գլուխ խոնարհեց Մելիքին նեռ,  
 Արձակեց սպա հրամանս գոռ,  
 Վոր ժողովուրդը Սասնա ամբողջ  
 Գա, անցնի նրա փալաւտակող  
 Արնահոտ, դաժան թրի տակով:—  
 Յեվ ժողովուրդը Սասնա անկոր՝  
 Խեղճացած, խոնարհ ու գլխիկոր,  
 Անցավ Ոհանի դժնի կամքով  
 Մարամելիքի թրի տակով:—  
 Մելիքը, շողշող զբահ հագին,  
 Կանգնեց՝ ահռելի ու ահագին,  
 Յեվ ժողովուրդը, մանուկ ու կին,  
 Անցավ սողսողտե թրի տակից:  
 Բաց հերթը հասավ չերբ Դավիթին՝  
 Չմոտեցնով նա չարի թրին,  
 «Չեմ անցնի» — ասաց կամքով անկոր —  
 «Մարամելիքի թրի տակով:»

ԺԵ

Վոլորեց աչքերը արնակոխ  
 Մարամելիքը Դավթի վրա,  
 Մարակեց ապա նժույզն իրա,  
 Մարակեց, քշեց Դավթի վրա,  
 Վոր սմբակներով հրահըրան  
 Վտանակոխ անի, ճգմի նրան: —  
 Բայց մանուկ Դավիթն անփուլթ, ուրախ,  
 Իբրև խաղ մանկան մի հրածին,  
 Բռնեց Մելիքի ձիու սանձից,  
 Յեռ գնաց, ահաեց Մելիքի ձին,  
 Յեւ մնաց Մելիքն այն չարածին  
 Կախված ահարեկ ձիու սանձից:  
 Մուրնչաց Մելիքն ահով անծիր,  
 Իր կայծակնափայլ սուրը քաշեց,  
 Վոր հարվածով մի, զարկով մի շեղ  
 Դյուցազուն Դավթին միջլից կիսե:  
 Մոտ յեկավ սակայն նրան մի ծեր,  
 Մի ոսմիկ արդար, այբ ալեհեր,  
 «Ներիր» — բարբառեց — «Մանուկ ե դեռ.  
 «Վողջ Սասունն ե քեղ գլուխ թեքել,  
 «Ո՛ր, Մարամելիք, ինչու ես ել  
 «Վախենում վորբից մի կաթնակեր»  
 Նայեց Մելիքը ոսմիկ ծերին,  
 Իր սրին նայեց, իր զորքերին,  
 Նայեց սասունցի իշխաններին  
 Յեւ ժողովրդին՝ դարձած գերի, —

Յետ չեկավ, նայեց ապա Դավթին,  
 «Ներու՛մ եմ» —ասաց ժողովրդին, —  
 «Բայց թե փորձանք զա մի որ գլխիս —  
 «Մրանից կզա, այս ծուռ Դավթից:»  
 Ասաց, մարակեց իր նժուլդ ձին,  
 Հավաքեց ապա զորքերն անձիր,  
 Հեռացավ, գնաց Սասմա չերկրից,  
 Մարդիկ ուղարկեց ապա կրկին,  
 Վոր Սասմա ամբողջ հարկը փրկիչ  
 Հավաքեն, տանեն Մարա չերկիր —

ժ2

Յեւ չեկան Բագին ու Կողբադին,  
 Յնծաղին հասան մի որ Սասուն,  
 Հեռնեւրը բերին պարկեր բազում,  
 Վոր Սասմա ամբողջ գանձերը ձուլ  
 Հավաքեն, տանեն: — Մանդալ շուտ  
 Չենով-Ոհանը, իշխանն այդ մեծ,  
 Հարկահաններին դիմաժորեց: —  
 Գնաց նա ապա, անհուն հորից  
 Հանեց Մհերի գանձը խորին,  
 Յեւ զարմանալի շուպլորեն  
 Սկսեց չափել, ինչպես ցորեն,  
 Առջու՛ծ-Մհերի գանձը, վոր եւ  
 Մարամելիքի ձեռքը զորեղ  
 Հավիտյան իշխե, թագաժորե: —  
 Չկար Մհերի զորքը հո եւ,  
 Վոր ճգմեր նրանց ու տրորեր: —

ԺԷ

Այդ ժամին մանուկ Դավիթն հուրհեր  
 Այն պառավ կնոջ աղքատ արած, —  
 Թռչունների դեմ չելած մարտի,  
 Չեռին մի կանաչ, բարակ բարդի,  
 Խաղում եր զվարթ ու թռչկոտում:—  
 Պառավը կանչեց մանուկ Դավթին.  
 «Ո՛վ Դավիթ» — կանչեց — «Բաջի վորդի,  
 «Դու ի՞նչ ես ուզում իմ խեղճ արտից.  
 «Ինչքան արորես վոսկեհատիկ  
 «Հասկերը աչրու կտավատի.  
 «Չես տեսնում՝ Բադին ու Կողբադին  
 «Տանում են քո հոր արդար վոսկին.  
 «Ուժ, զորութուն ե տված բազկիդ,  
 «Գնա՛, ո՛վ Դավիթ, գնա՛ հսկի  
 «Չտանեն քո հոր արդար վոսկին»  
 «Բայց ո՛վ ե տալիս վոսկին իմ հոր  
 «Բադուն, Կողբադուն» — դարմանքով խոր  
 Հարցրեց Դավիթ-դչուցազնը նոր:—  
 «Չենով-Ոհանն ե տալիս քո հոր  
 «Դանձերը չարին՝ չարի սովոր» —  
 Բարբառեց պառավն հառաչքով խոր:  
 Յեվ գնաց մանուկ Դավիթը, վոր  
 Տերութուն անի գանձերին հոր:—

ԺԸ

Գնաց նա, տեսավ՝ սենյակում հին  
 Կանգնել են Բադին ու Կողբադին,

Իսկ Ձենով-Ոհանը մահատիպ  
 Չափում և վոսկին վոսկեհատիկ,  
 Պարկերը հենած հողե պատին,  
 Ինչպես բես հնձած կտավատի:—  
 Դավիթը տեսավ, նաչեց Բաղուն,  
 Դարձավ, լուս նաչեց նա Կողբաղուն,  
 Մոտեցավ ապա նա Ոհանին  
 Յեվ չափը խլեց նա ցորչանի,  
 Ասաց.— «Թող վոր լես չափեմ, Բաղի,  
 «Մհերի վոսկին վոսկեհատիկ:»  
 Ասաց, պարկերի վոսկին թափեց,  
 Դատարկ ամանով ողբ չափեց,  
 Շրջեց աչն ապա նա պարկի մեջ—  
 Յեվ ծիծաղելով ասաց.— «Այս մեկ:»  
 Չալրացավ, դժնեց Կողբաղին նենդ,  
 «Դեն տարեք»—կանչեց— «Դավիթին խենթ,  
 «Մսրամելիքի հարկը տվեք,  
 «Չեք ուզում յեթե՝ գնանք ասենք—  
 «Գա, հիմքից քանդե Սասունն անտեր,  
 «Անապատ դառնան Սասմա հանդեր:»  
 Չալրացավ անչափ Դավիթն աչտեղ,  
 Բարկութունն անհուն ել չգսպեց,  
 Յետ դարձավ—ձեռքի պղինձը մեծ  
 Կողբաղու ճաղատ գլխին խփեց:—  
 Չաչն տվեց ապա նա Ոհանին,  
 «Ռ՛վ Ձենով»—կանչեց— «Գնա քնի,  
 «Մսրամելիքը չոթգլխանի  
 «Ինչ վոր կարող ե՛ թնգ գա՛ անի:»

ԺԹ

Գնացին Բազին ու Կողբազին,  
 Մսրամելիքին գանգատ արին,  
 Պախարակեցին Դավթին արի,  
 Գովեցին, իբրև Սասմա բարիք,  
 Չենով-Ոհանի վարքը բարի:—  
 Մսրամելիքը, արքան այն նեռ,  
 Զաչրացավ, ինչպես դաժան ձմեռ,  
 Արձակեց ապա հրաման գոռ,  
 Վոր դա, հավաքվի անհաշիվ զորք.—  
 Հազար, հինգ հարյուր մանուկ նորե,  
 Հազար, հինգ հարյուր ուղղմիկ զորե,  
 Հազար, հինգ հարյուր այր սևահեր,  
 Հազար, հինգ հարյուր այր ալիհեր,—  
 Վոր գնա Սասմա յերկրին ախրե,  
 Վոր Սասմա քաղաքը ավիրե,  
 Վոր ժողովրդին ամբողջ դերե,  
 Տեղահան անե; Մսրը բերե:—

Ի

Մսրամելիքի զորքերն չեկան,  
 Բռնեցին Սասմա սարերը վողջ,  
 Լցրին շոնգյուն, ու թինգ, ու կոշ,  
 Զիբրի խրխինջ ու խրխնջոց,  
 Յեկ Սասմա չքնազ աշխարհն ամբողջ  
 Բռնեց աղաղակ, ու ծուխ, ու բոց:—  
 Չենով-Ոհանը, իշխանն հաչոց  
 Բարձրացավ, տեսավ մի առավուս  
 Մսրամելիքի զորքերն այն հոծ,

Տեսա՛վ արշալանք մի ճահահոտ  
 Յե՛վ սիրտը նրա լցվեց անով:—  
 Գնաց նա ապա Դավիթի մոտ  
 Ասաց.—«Ո՛վ Դավիթ, մանուկ դիվոտ,  
 «Բերել եմ անա քեզ մահվան ըոթ:»  
 «Ո՛վ Դավիթ»,—կանչեց—«Դավիթ»—ասաց.—  
 «Մասձա ավերման ժամը հասավ.  
 «Յեկել ե գորքով բազմահազար  
 «Մսրամելիքը, արքան զազան.  
 «Գնանք, ո՛վ Դավիթ, գնանք»—ասաց.  
 «Իրեն տանք հարկը իրա ուղած.  
 «Գնանք, ո՛վ Դավիթ, վոսկի տանենք,  
 «Փրկութչուն հացենք արքայից նենդ,  
 «Վոր վրեժն իր չար նա չհանե,  
 «Մասձա չերկիրը չկործանե:»  
 Յե՛վ ասաց Դավիթը Ոհանին.  
 «Ո՛վ Ձենով»—ասաց—«Գնա քնի.  
 «Առավոտ, առած աղեղ ու նեռ,  
 «Ի՛նքս կգնամ—կուրվ կանեմ:»

ԻԱ.

Առավոտ չելավ Դավիթը վեր,  
 Վերցըրեց-առավ աղեղ ու նեռ,  
 Վոր գնա՛ Մսրա արքայի հեռ  
 Մղի պատերազմ մի չարաղեռ,—  
 Վոր ուժը նրա հորդած, ինչ վեռ,  
 Դարձընի, քշի մեր չերկրից չեռ:—  
 Բաց տեսավ նրան ալբին այն խեղճ,

Ո՞վ Դավիթ»—ձայնեց—«Այդ *սուր*—կանչեց,  
 Դավիթը ասաց.—«Գնում եմ չես  
 «Մսրամեկիքին կոչեմ հանդես,  
 «Մեր չերկրի համար կռիվ անեմ,  
 «Մսրամեկիքին Սասնից հանեմ:»  
 Պառավը ասաց.—«Դավիթ ուամիկ,  
 «Ինչքան ես անմիտ ու միամիտ,  
 «Փուչ գլխիդ ունես լերան քամի.  
 «Մարդ ել կգնա դարանամիտ  
 «Մսրամեկիքի հետ հարամի  
 «Նետով-աղեղով կռիվ կանի:»  
 «Բա ինչպես անեմ»—Դավիթն ասաց.  
 «Վոչ զրահ ունեմ, վոչ զենք հաղար:»  
 «Բա ինչպես անեմ»—պառավը ասաց.—  
 «Բա չես իմանում, Դավիթ անճար.  
 «Մհերը ուներ զենքեր անչափ,  
 «Մհերը ուներ նժույզ պայծառ,  
 «Մհերը ուներ և սուր-կայծակ:»  
 Դավիթը կիտեց հոնքերն, ասաց.—  
 «Բա *սուր* եմ իմ հոր գենքերն»—ասաց.—  
 «Հեյ, խնդի Դավիթ»—պառավը ասաց.—  
 «Ձեռով Ոհանին գնա ասա.  
 «Ինչքան վոր զենքեր քո հերն ուներ,  
 «Ինչքան վոր զրահ Մհերն ուներ—  
 «Ձեռով Ոհանն ե տարել-պահել.  
 «Գնա, չեմ խլիր, Դավիթ հուրհեր:»  
 Ասաց, խրատեց պառավը արթուն  
 Դյուցազուն Դավիթին, ինչպես վորդուն.  
 «Հավատ չընծայես ուրիշ մարդու.  
 «Թե սիրով չտա—ուժով առ դու:»

ԻԲ

Գնաց Դավիթը սրտով արաւում,  
 Գնաց այն Ձենով-Ոհանի տուն,  
 Թակեց, թնդացրեց չերգիկ ու դուռ,  
 «Ո՛վ Ոհան» — կանչեց — «Յեկ-արի դուրս,  
 «Առյուծ-Մհերի զենքերը տուր,  
 «Վոր կռիվ գնամ զենքերով հուր:»  
 Ոհանը, սարսած, լելավ գավիթ.  
 «Ի՞նչ զենքեր» — ասաց — «Մեռել Դավիթ,  
 «Դու մանուկ ելիր մի միամիտ,  
 «Վերտեղից փչեց գլխիդ քամին:»  
 Դավիթը ասաց. — «Ձենով-Ոհան,  
 «Մհերը ուներ վոսկե վահան,  
 «Մհերը ուներ զենքեր հրցալտ,  
 «Մհերը ուներ նժույզ սլաշմառ,  
 «Մհերը ուներ և՛ սուր-կալծակ:  
 «Բեր, հանձնիր զենքեր ու զրահներ,  
 «Յեթե վոչ» — ասաց — «Ուժով կառնե՛մ:»  
 Ոհանը, ահով լցված հազար,  
 Հարցրրեց — «Դավիթ, քեզ ո՞վ ասաց:»  
 Դավիթը ասաց. — «Պառաջն այն մեր.  
 «Յել, Ձենով-Ոհան, զենքերը բեր,  
 «Գնամ, մեն-մենակ կռիվ անեմ,  
 «Մտրամելիքին Սասնից հանեմ:»

ԻԳ

Տեսավ ճար չկա Ոհանը նենդ,  
 Հավաքեց, բերեց զրահ ու զենք,  
 Բերեց Մհերի զենքերն հրցալտ,

Նժուլզը բերեց նրա պաշտառ,  
 Յեւ սուրբ բերեց նրա կայծակ:—  
 Յեւ 'Դավիթը չերբ նժուլզն հեծաւ,  
 Յերբ հաղաւ իր հոր դրահն արծաթ,  
 Յերբ բռնեց ձեռքին սուրբ կայծակ—  
 Դարձաւ—Դավիթի հեռքից սասաւ.  
 Ափսոս, Մհերի հրեղեն ձի,  
 «Ձրահներ անդին, գանձեր անծիր,  
 «Ափսոս Մհերի ձիու սանձին...»  
 Դավիթը լսեց և չեա դարձաւ,  
 «Ո՛վ Ձենով-Ոհան, Ոհան»—ասաւ,  
 «Պապանձիլի»—ասաւ—«Ի՞նչ չար լեզուն.  
 «Բա մանուկ Դավիթին չե՞ս ամոտսում...»  
 Ոհանը ահից խոսքը փոխեց.  
 «Ափսոս ձեր մանուկ Դավիթ»—ասեց,  
 Աչքերից առատ արցունք հոսեց,  
 Իբրև թե խղճաց ու ամոտսեց:—  
 Դուրսագուն Դավիթն ել չխոսեց,  
 Առյուծ-Մհերի անունն հիշեց,  
 Յեա դարձաւ ապա և ձին քշեց...

Ի՞

Դուրսագուն Դավիթն հուր-ձին քշեց—  
 Մարամելիքի բանակն հասաւ.  
 Յերբ բանակն հասաւ, նաչեց—տեսաւ՝  
 Գնել է, բռնած հովիտ ու սար,  
 Մարամելիքի գորքը հաղար:—  
 Դուրսագուն Դավիթն չերբ այս տեսաւ՝  
 Մաածեց, մանուկ մտքում ասաւ.

«Թե հիմա այսպես քշեմ-գնամ,  
 «Յորյանի նման հնձեմ նրանց—  
 «Պիտի մտածեն, թե մենք քնած,  
 «Դավիթը գող-գող լեկավ գնաց:»  
 Ջաշն տվեց ուստի Դավիթը քաջ.  
 «Վեր կացեք, չեւեք, զորքեր քնած,  
 «Վոր չասեք հետո, թե մենք քնած՝  
 «Դավիթը գող-գող լեկավ գնաց:»  
 Արթնացավ իսկուհին բանակն ամբողջ,  
 Թնդչուն, շառաչչուն, շոինդ ու կոչ,  
 Ջիւրի խրխինջ ու խրխնջոց,  
 Ջենքերի շաչչուն, ու հուր, ու բոց...  
 Հավաքեց Դավիթն իր ուժը վողջ,  
 Մրբիկի նման հուր-ձին թողեց,  
 Կաշձակներ թռան քարից, հողից,  
 Արեգակն անգամ գուշնը փոխեց,  
 Յերբ սուրն արձակեց հրե շողեր—  
 Շարժելով այսպես իր սուրն հրե,  
 Սկսեց հնձել, ինչպես ցորեն,  
 Մարամեկիքի զորքը զորեղ,  
 Վոր Սասմա վրա քանի՛ որ եր  
 Յեկեկ եր, նստել, ինչպես մորեկ:—  
 Ահեղ եր Դավիթն ու ահավոր,  
 Իբրև այր արդար, ոամիկ զինվոր,  
 Իբրև անսասան դյուցազուն, վոր  
 Կովում եր սրով իր անպարտ հոր:—  
 Յերբ տեսավ նրա ցասումն այդ խոր  
 Մարամեկիքի զորքը բոլոր,  
 Դեմ յեկավ նրան մի ալևոր  
 Մարա աշխարհից չեկած զինվոր:—

«Դավիթ» — բարբառեց զինվորը շփեր —  
 «Ինչո՞ւ չես մեր դեմ կովի չելել,  
 «Մսրամելիքն ե, արքան աջն նեռ,  
 «Մեզ քչել, բռնի Սասուն բերել.  
 «Ո՞վ Դավիթ» — կանչեց — «Ո՞վ միամիտ,  
 «Դյուցազո՞ւն Դավիթ՝ մեզ պես ուամիկ,  
 «Մսրամելիքն ե քո թշնամին,  
 «Դյուցազո՞ւն ես՝ գնա՞ դարանամիտ  
 «Մսրամելիքից վրեժդ հանի:»  
 «Լավ» — պատասխանեց Դավիթը մեր.  
 «Իսկ թուր ե հիմա Մելիքը նեռ:»  
 «Այնտեղ ե» — ասաց զինվորը ձեր.  
 «Վրանում աջն մեծ քնած ե դեռ,  
 Ծուխ ե բարձրանում այնտեղից վեր —  
 «Այնտեղ ե հիմա Մելիքը նեռ:»

Ի Ե

Լսեց — արձակեց Դավիթն իր ձին,  
 Ել չանսաց հուր ձին իրա սանձին,  
 Ինչպես գերանդին ցորչան հնձի՝  
 Մրրկվեց այդպես թափով անձիր,  
 Յեղ գնաց, կանգնեց աջն առանձին  
 Վրանի առջև, վորի միջից,  
 Ինչպես հնոցից, թափով ամբողջ,  
 Ծուխ եր բարձրանում, ու հուր, ու բոց: —  
 «Ո՞վ Մելիք» — կանչեց ձայնով անդող  
 Դյուցազուն Դավիթն անհուն խանդով.  
 «Ո՞վ Մելիք» — կանչեց — «Ինչեղդ թող,  
 «Յեղ, կռիվ մղենք, դարկենք հերթով,

«Ինչքան էս տեսնենք արդյոք դու քաջ,  
 «Վոր ժողովրդիդ՝ անկց կորած՝  
 «Քշել էս, բերել Սասմա վրա»  
 Մեկիքը լսեց ձայնը նրա,  
 Վեր կացավ, նստեց մի պահ մոռալ,  
 Նայեց նա հպարտ իրա զորքին,  
 Մոտ կանչեց ապա մանուկ Դավթին,  
 Հսկա բերանը ապա բացեց,  
 Իջուցազուն Դավթի վրա փչեց,  
 Վոր նրան, ինչպես չնչին տաշեղ,  
 Թոցնե, Սասմա դաշտից քշեւ—  
 Բաց կանգնած մնաց Դավթին հուրհեթ  
 Իր տեղում անշարժ ու աներեր։—

## ԻԶ

Վեր թռավ տեղից Մեկիքն անկզ  
 Մարսափից կորած ու խելահեղ,  
 Բաց զսպեց իրեն, շունչը պահեց,  
 Ժպտալով ապա Դավթին նայեց,  
 «Ներս արի»—ասաց—Դավթի Չահել,  
 «Նստենք միասին, մարդավայել  
 «Սոսք-զրույց անենք, ապա կրկին  
 «Յեկնենք միասին, կարգով կարգին  
 «Զի-նժույզ նստած, զրահ առած՝  
 «Մեր ուժը փորձենք զորքի առաջ»  
 Ո՛ր, մանուկ Դավթի դու միամիտ,  
 Առյուծ-Մհերի վորդի՛ ուամիկ,  
 Ի՞նչ գլխում ինչքան խաղա քամի,—  
 Ահեղ փորձութեան, մահու ժամին

Վորքան հավատաս անգետ կամիլ  
 Ամեն մի վոսոխ ու թշնամի  
 Մարամելիքի ու Ոհանի...  
 Ահա Մեղիքը, արքան այն նեռ,  
 Քեզ նենգ ժպիտով կանչում ե ներս,  
 Վոր դավով խարզախ ու արնանենգ,  
 Քեզանից, Դավիթ, իր վոխն հանե—  
 Յեկ ոամիկ Դավիթն, արդար ու մեղմ,  
 Հավատաց չարին ու մտով ներս,  
 Յեկ ընկավ, խարված դավով այն նենգ,  
 Մեղիքի փորած անդունդի մեջ...

Իի

Ընկավ մեր Դավիթն անդունդի մեջ.  
 Շուրջը—մթուփյուն, ու մուծ, ու մեղ:  
 Իսկ վերից Մեղիքը արնանենգ,  
 Մարտելով ահից իր խելագար,  
 Քաշեց մի հսկա, վիթխարի քար:—  
 Դավիթը մնաց փոսում խավար,  
 Անդաշտպան, մենակ, իսկ դուրսը չար  
 Մարամելիքը, արքան դաժան,  
 Քրքջում եր անեղ ու ժանտաժանտ:—  
 Յեկ Սասմա վրա իջավ այնժամ  
 Խորշակ դառնաղետ, մահ տարածամ:—  
 Յեկ Դավիթն, ընկած խավարում քար,  
 Ոգնության կանչեց չերկար, չերկար,  
 Յեկ դուր ե ասում զրույցը հար,  
 Թե պահուն այդ սև, այդ ժամին չար,  
 Ոգնության չեկավ խորհուրդով վառ  
 Ձենով-Ոհանը, իշխանն այն մառ—  
 Դա չեկավ, Ձենով իշխանն հայոց.

Մե սրտում՝ սարսափ ու նի մահու՝  
 նա Մելիքին եր նվաստ նայում  
 Յեվ ժողովրդին հրամայում—  
 Հավաքեն, տանեն նրա համար  
 Քառասուն կաղ կին՝ կոթեկ աղան,  
 Քառասուն այլ կին, վոր ուղտ բառնան,  
 Քառասուն աղջիկ՝ նման գարնան՝  
 Գնան՝ Մելիքին վարձակ դառնան:—  
 Հավաքեց ապա ահով անսանձ  
 Ոհանը անբավ վոսկի ու գանձ,  
 Մսրամելիքի մտը գնաց,  
 Թախանձեց, խնդրեց վիղը ծռած,  
 Վոր գերի գրի հավիտյան-հար  
 Յերկիրը Մասմա և դարեդար  
 Թե իր և թե վնղ Մսրա համար  
 Գա, վոսկի տանի, անհատնում հարկ:—  
 Մելիքը լսեց, չարկամ խնդաց,  
 Մորնչաց—ձայնից հողը թնդաց,  
 Արձակեց ապա հրաման գոռ,  
 Վոր ժողովուրդը Մասմա ամբողջ,  
 Հավաքի, բառնա հարկը փրկիչ  
 Յեվ գերի գնա Մսրա լերկիր:—  
 Չենով-Ոհանը լսեց, գնաց  
 Յեվ ժողովրդին՝ ահից կորած՝  
 Հայտնեց Մելիքի հրամանն այս:—  
 Յեվ սուգ բարձրացավ, տրտունջ ու լաց  
 Աշխարհում հայոց,—և վորբացած  
 Մասմա աշխարհի ձայնը գնաց,  
 Հասավ ականջին Դավթի դուռցազն,  
 Վոր խավար ու խուլ հորում կորած  
 Ժայթքում եր աչքից կրակ ու կայծ:—

Սթափվեց, հիշեց Դավիթն այնժամ  
Առյուծ-Մհերի փառքը պայծառ,  
Հիշեց կայծակե սուրը հրցայտ,  
Հավաքեց ամբողջ իր ուժն անծայր,  
Խփեց—շողշողաց սուրը կայծակ—  
Յեւ քարը կտրեց—միջով անցավ...

## ԻԸ

Դուրս լեկավ հորից Դավիթն այնժամ,  
«Ո՛վ Մելիք»—կանչեց—«Արքան դաժան,  
«Յեւել եմ, բերել քեզ մահու ժամ»  
Կանչեց նա ապա ճայնով ահեղ.  
«Յեւ, հանդես արի, ո՛վ արքա նենդ,  
«Զի նստիր, կապիր զրահ ու զենք,  
«Վոր վերջին անգամ դեմ-հանդես մենք,  
«Ո՛վ Մելիք, մահու կռիվ անենք»  
Ինձ լեկավ դաժան արքան նրան,  
Ժպտաց շողոքորթ, նայեց վրան,  
Զենքերին նայեց այն հուրհուրան,  
Նժուլդին նայեց նրա կրակ,  
«Յեւկ, նստիր»—ասաց ժպիտով նենդ.  
«Յեւկ, նստիր, սիրով զրույց անենք,  
«Թե կամիս հետո՝ առած թուր-տեղ,  
«Ո՛վ Դավիթ, մահու կռիվ անենք»  
«Վ՛ոչ»—սլատասխանեց Դավիթը մեր.  
«Սասունցի Դավթին չես խարի ել.  
«Յեւ, Մսրամելիք, զենքերդ բեր,  
«Կանգնիր անխարդախ ու անվեհեր,  
«Բեզ մահ եմ բերել, ո՛վ արքա նեռ»  
Բարձրացավ Մելիքն իր տեղից վեր,

Զրահներ հագալ, առավ զենքեր,  
 Զի-նժույզ նստեց և կանգնեց մեր  
 Դավիթի հանդես, ինչպես մի լեռ—  
 «Դավիթ» — ըարրառեց Մելիքը նեռ,—  
 «Մ'ան և առաջին հարվածն արդյոք»  
 «Բո՛նն է» — դյուցազուն Դավիթը մեր  
 Պատասխան տվեց այն նեռ-մարդուն։—

ԻՅ

Յեկ կանգնեց Դավիթը նրա գեմ  
 Անսասան, անահ, դեմքով վսեմ,  
 Հայացքով պայծառ, ժպիտով սեղ,  
 Բոցավառ, ինչպես պայծառ արեղ:  
 Մսրամելիքը իր ձին քշեց,  
 Հեռացավ, լեկավ, և ասլա շեղ  
 Հարվածով դժնի, թափով ուժեղ  
 Հարվածեց Դավիթին, վոր նրա սեղ,  
 Բարձրարերձ կուրծքը միջից կիսե:—  
 Յերբ գարկեց Մելիքն հարվածն ուժեղ,  
 «Հո՞ղ դարձավ Դավիթ» — դարձավ ասեց.  
 «Այստե՞ղ եմ» — կանչեց Դավիթը սեղ,  
 Յեկ ահով լցվեց Մելիքը սե:—  
 Նա յերկրորդ անգամ իր ձին քշեց,  
 Յեկավ, հարվածեց հարվածով շեղ.  
 «Հո՞ղ դարձավ Դավիթ» — ելի ասեց,—  
 «Այստե՞ղ եմ» — կանչեց Դավիթը սեղ:—  
 Յեկ յերրորդ անգամ իր ձին քշեց  
 Մսրամելիքը, արքան այն սե,  
 Յեկավ, հարվածեց գուրզով ուժեղ.  
 «Այս անգամ մեռավ Դավիթն» — ասեց.

«Այստեղ եմ» — կանչեց Դավիթը սեզ.  
 «Կանգնիր, սի Մելիք, սի արքա սե, —  
 «Յնս պիտի հիմա իմ ձին քշեմ:»  
 Յերբ կանգնեց Մելիքը նրա դեմ,  
 «Դավիթ» — բարբառեց — «Յամիկ գորեդ,  
 «Թոդ, մանուկ Դավիթ, խոր հոր փորեմ,  
 «Մանեմ նրա մեջ, դլխիս քաշեմ  
 «Բառասուն կաշի, քառասուն քար —  
 «Յեկ ապա արի, քո զարկը զարկ:»  
 «Լնով» — սասց Դավիթն արքային չար.  
 «Թոդ փորեն խոր հոր, քաշեն թոդ քաք, —  
 «Զի փրկի, Մելիք, քեզ վնչ մի ճար  
 «Սասունցի Դավթի զարկից արդար:»

Լ

Բերին, փորեցին մի հոր խավար  
 Մարամելիքի, նեռի համար.  
 Յեկ մտով Մելիքը դողահար  
 Իր համար փորած հորը խավար,  
 Յեկ բերին ապա, քաշեցին մառ  
 Բառասուն կաշի, քառասուն քար:  
 Յեկ քշեց Դավիթն ապա իր ձին,  
 Վոր խփի հարվածն իր առաջին,  
 Մոտ վաղեց սակաչն մի սլառավ կին,  
 Մարամելիքի մայրն եր՝ հազին  
 Մարա զգեստներ՝ մեռաքս անդին.  
 Յեկավ, փաթաթվեց Դավթի վոռքին.  
 «Ի՛նձ քաշխիր» — սասց — «Զարկ զառաջին»  
 «Լնով» — սասց Դավիթը պառավին.

«Յես քեզ եմ բաշխում զարկս անաջին»  
 Յեւ յերկրորդ անգամ քշեց իր ձին  
 Դավիթն շտապով, սակայն կրկին  
 Յեկավ, փաթաթվեց նրա վոտքին  
 Մի ուրիշ—տարեց, գեղեցիկ կին.  
 Մարամեւիքի քույրն եր՝ հագին  
 Չգեստներ չքնաղ ու թանկագին.  
 Յեկավ, փաթաթվեց Դավիթի վոտքին.  
 «Դավիթ» — բարբառեց — «Դյոււցնն անգին,  
 «Ի՛նձ բաշխիր յերկրորդ զարկդ կրկին»  
 «Լնվ» — ասաց Դավիթն — «Ո՛վ չքնաղ կին,  
 «Քեզ եմ շնորհում զարկս կրկին»  
 Յեւ յերրորդ անգամ իր ձին քշեց,  
 Վոչ-վոքի խնդիրք եւ չլսեց,  
 Առյուծ-Մհերի անունն հիշեց,  
 Յեկավ, կայծակե սուրը խփեց,  
 Չարկեց հարվածով, զարկով վսեմ—  
 Քառասուն կաշին միջից կխսեց,—  
 Կտրեց քառասուն կարծր կաշին,  
 Քարերը կտրեց ջրաղացի,  
 Ճայթեց զորուիթյամբ մի անհաշիվ,  
 Դեմքն արեգակն րոնեց փոշին:  
 Յերբ փոշին մի քիչ բարձրացավ վեր—  
 «Այստեղ եմ» — կանչեց Մելիքը նեո.  
 «Սասունցի Դավիթ, չեմ մեռել դեռ»  
 Չարմացավ Դավիթն, ապա ասեց.  
 «Ո՛վ Մարամեւիք, թնփ տուր դու քեզ»  
 Մելիքը նրա ձայնը լսեց,  
 Թափ ավեց իրեն, արյունն հոսեց,

Մեջտեղից յեղավ նա յերկու կես,—  
Անցավ, խորտակվեց Մելիքն այսպես...

ԼԱ

Այսպես է ասում զրույցը մեզ,  
Սասունցի Դավթի զրույցն արդար,  
Ասում է ապա զրույցն չայդ վառ,  
Վոր մեռավ այսպես յիրք նեռը չար—  
Դավթիթը նրա զորքին դիմեց.  
«Գնացե՛ք» — ասաց — «Ձեր յերկրում կեզ  
«Ապրիցե՛ք ազատ, ապրուստով վե՛ս,  
«Յե՛վ հանգիստ թողե՛ք մեր տունն ու մեզ»  
Ասում է ապա զրույցը մեզ,  
Վոր Դավթին հետո դաշտից քշեց  
Ձենով-Ոհանին, իշխանին նենգ,  
Հավաքեց ապա զրահ ու զենք,  
Յե՛վ դարձավ ուսմիկ յերկիրն ուժեղ,  
Յե՛վ հնչեց կրկին ամենուրեք  
Սասմա լեռներում ծիծաղ ու յերգ...  
Ասում է ապա զրույցը մեզ,  
Վոր Սասմա յերկրում տիրեց այսպես  
Կյանք զարմանալի, արդար ու վե՛ս,  
Մինչև մահացավ Դավթին հրկեզ  
Յե՛վ ժառանգ թողեց յերկրի վրա  
Մհերին՝ վորդուն իր հուրհուրան,  
Բայց դժնի ուժեր տարան նրան,  
Փակեցին Սասմա անհուն լերան  
Քարայրում մթին, վոր ափստեղ նա  
Հավիտյան, ընդմիշտ գերված մնա...

—Ո՛ր, դյուցազն Մհեր, ուամիկ դու այր,  
 Առյուծ-Մհերի շավիղ պայծառ,  
 Դյուցազնուն վերջին, ուղմիկ արդար,  
 Ձեռք ժողովրդի ստեղծարար,—  
 Ուժեր կործանիչ, և՛ մութ, և՛ չափ  
 Բարայրում այն մութ, միդում խավար  
 Փակեցին անով քո դեմքը վառ,  
 Յեվ գալիք քնից սարսափահար՝  
 Հայտարարեցին քեզ նեո ու չար,  
 Վոր չեղնես մի որ՝ նրանց համար  
 Չբերես անկում, ու մութ, ու մահ...

## ԼԲ

Հուշ դարձավ այսպես, կյանքից դնաց  
 Սասունցի Դավթի գարմը դյուցազն,  
 Յեվ տիրեց անհուն աղետ ու լաց  
 Լեռներին Սասմա, աշխարհին բարձր,  
 Յեվ ժողովրդին ուամիկ ու պարզ։—  
 Հուշ դարձավ այսպես, դարձավ յերազ  
 Առյուծ-Մհերի գարմը գորեղ,  
 Յեվ դարեր ապա ու տարիներ  
 Լեռներում Սասմա, աշխարհում մեր,  
 Վոր վոչ մի դյուցազն ել չսերեց—  
 Ձենով-Ոհանի գարմը տիրեց...  
 Տիրեց Ոհանի սերունդը մառ  
 Բազում տարիներ,—ու գարեգար  
 Հայրենի յերկրում ժլատ ու չար,  
 Անդուլ կեղեքող—ձեռքով շռայլ  
 Յրեց մեր չերկրի գանձը անձաջր

Յե՛վ ինքնությունը մեր վոսկեսար:—  
 Յե՛վ յեկան ապա ու շարեշար  
 Տիրեցին յերկրին իշխաններ չար,  
 Տերեր հայրենի ու զանազան,  
 Ազատանիներ՝ վարքով զազան,  
 Յե՛վ նեո-արքաներ հազարհազար:  
 Յե՛վ ժողովրդի գլխին ազատ,  
 Իրրև հովանի մի սրբազան,  
 Կախվեց տերերի ժանիքը ժանտ—  
 Յե՛վ խարուչկ, և՛ խաչ, և՛ խարազան...  
 Այսպես Ռհանի սերունդը մատ  
 Տիրեց աշխարհում չերկամբ, չերկամբ,  
 Մինչև որն յեկավ—և դեմքով վառ  
 Յելով քարալցրից Մհերն արդար,  
 Յե՛վ բերեց զարմին Ռհանի չար  
 Անկում վերջնական և մահ անճառ:—  
 Ո՛ր, անմահ Մհեր, քանի՛ դու դար  
 Պիտի մնայիր այրում խավար,  
 Մինչև աշխարհում քո որը դար  
 Յե՛վ յե՛նկելիք դու արեամբառ—  
 Համայն աշխարհի զարմերին չար  
 Բերելու անկում և մահ արդար:—

19

Յե՛վ մենք աշխարհում հավիտյան-հար,  
 Վորքան վերնիշենք զրույցն այս վառ,  
 Սասունցի Դավթի զրույցն արդար,—  
 Սերունդե-սերունդ ու դարեգար—

Դառնանք—բարբառենք նզովք մենք նախ  
 Մարամելիքին, թագավորին,—  
 Դառնանք—բարբառենք նզովք ապա  
 Ձենով-Ոհանին, իշխանին նենգ,—  
 Դառնանք—բարբառենք նզովք ապա  
 Ա՛յլ իշխաններին բոլոր այն մեր,  
 Վոր բերին մեղ մահ, ու մ՛հու, ու նեո։—

Փռնք փառարանենք ապա մենք մեր  
 Առյուծ-Մհերին, դյուցազնին քանջ,  
 Դավիթին՝ նրա վորդուն դյուցազն,  
 Մհերին՝ նրա վորդուն անմահ,—  
 Վո՛ղջ ժողովրդին ապա Սասմա,  
 Վոր լուրթ լեռներում մի որ բազմած  
 Հորինեց պայծառ զրույցը այս—  
 Յեվ սնցավ անհետ, դարձավ չերազ․․  
 1933. IV. 6.

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԴԱՏՏԵՐԻ ՍԵՐՄԱՑԱՆՆԵՐ

Ա

Նրանք յիշում էին առավոտվա ծեղին  
Յերբ արևը նոր էր բարձրանում,  
Յեզ մինչև մալրամուտ, մինչև իրիկուն  
Երեսց սերմը ցանում  
Վախվելիս լույ, աչքերը կարիքին,  
Բնուլթյան ու Մարդու դավերին բյուր,  
Գերի թշնամական Տարերքին,  
Գերի շահագործող Մարդուն:

«Յեհե-չեհե-յեհե»,  
«Հորովե՛լ հորովե՛լ, հո՛»,  
«Հո՛ո, յեզը ջան...»

«Որհնչանլ և Աստված» —  
Աշխատիր, վարիր որնիբուն.  
«Բարձրյանլ և Աստված» —  
Բերքը տանուտերին տուր.  
«Գովյանլ և Աստված» —  
Մնացածը տուր զոռբային.  
«Տեր, փնուքդ շատ» —  
Նատիր՝ աչքդ մահի...

«Հորովե՛լ, հորովե՛լ, հո՛,  
«Հո՛ո, չեզը ջան...»

Գարունը հեղեղ եր բերում,  
Ամառը՝ չերաշա,  
Աշունը՝ կարկուտ ու ցուրտ...  
«Տեր, փանքդ շատ,  
«Որհնյալ ե Աստված» —  
Չմեռը նստի՛ր գերանին  
Յե՛վ յերազիր գուր...»

«Հորովե՛լ, հորովե՛լ, հո՛,  
«Հո՛ո, չեզը ջան...»

Գալիս եր գլխի՛րը չեչոտ,  
Անցնում եր գյուղամիջով,  
Կանգնում եր գյուղամիջում,  
Կանչում եր չոր... —  
«Տերության հրաման անխախտ —  
«Ամեն անից մի մարդ,  
«Յերկու անասուն...  
«Առավոտ-ձեզին-գան —  
«Գնան մութլուսուն...»

«Հորովե՛լ, հորովե՛լ, հո՛,  
«Հո՛ո, չեզը ջան...»

Գնում եր՝  
Չլուտ Չագին,  
Տկլոր Բագին,  
Հոտ Հովանը,  
Ծուռ Հարոն...

Մնում է՞ տանը՝  
 Իշխան Աղասին,  
 Հարուստ Հովասափը,  
 Կորտո Բազդասարը,  
 Ռես Մնոն...

«Հորովել, հորովել, հո՛,  
 «Հո՛հ, լեզը ջան...»

«Յեհե-յեհե-յեհե, —  
 «Տեր, փնռքդ շատ...»

Արտը՝ հնձած կիսատ,  
 Անասունը տրաքեց շողից,  
 Իսկ հարուստ Հովասափը  
 Գնաց ըողոքի...  
 Եզուց ուսը կգա,  
 Կիւլի հողը,  
 Հովասափը կգա —  
 Կուզի փողը...  
 Կնկնես վտար ուսի,  
 Կլիգես դեռինը,  
 Կտանեն տանդ քուրսին —  
 Կվոռնա կինդ...  
 Գութ կաղերսես ուսից,  
 Վոր թողնի քեզ տանըդ —  
 Յե՛վ արևառ վզիդ  
 Կիջնի խարազանը...

«Հորովե՛ր, հորովե՛ր, հո՛,  
«Հո՛ս, յեզը ջան...»

«Որհնյա՛լ ե Աստված» —  
Ապրել ես պապեպապ  
Այսպես...  
«Բարձրյա՛լ ե Աստված» —  
Յերգել են տերտեր ու  
Ռես...  
Յեթե նրանց մեա,  
Յեթե այսպես գնա —  
Մինչև մահդ  
Դես  
Կերգես. —

«Տե՛ր, փնռքդ շատ,  
«Փնռքդ շատ,  
«Տե՛ր...»

«Հորովե՛ր, հորովե՛ր, հո՛,  
«Հո՛ս, յեզը ջան...»

Բ

Նրանք յիշում եյին առավոտվա ծեղին,  
Յերը արևը նոր եր բարձրանում,  
Յեվ մինչև մայրամուտը, մինչև իրիկուն  
Իրենց սերմը ցանում  
Վախժրիսելով, աչքերը կարիքին,  
Բնության դավերին ու Մարդուն, —

Յեկ անսահման բարիք եր  
 Նրանց համար այդ հնդն անարդյունք։—

Ո՛ր, հնդ, ո՛ր, դանտ, ո՛ր, տանի,  
 Մի բռաչափ գետին քարքարոտ,  
 Վերի վրա մարդու աշխատանքը անափ  
 Թողնում եր փշրանքի կարոտ  
 Ու կարիքն եր պարում  
 Դաշտերում, դաշտերում,  
 Յեկ սով, և՛ մահ, և՛ արյուն  
 Աչքերում...

Ո՞ւր եր տանում մոխիրե  
 Ճանապարհը քեզ.—  
 Մինչև սարը դիմացի,  
 Նույն աշխարհը կեզ,  
 Ուր նույն արևն եր կիզող,  
 Սև ու անուրախ,—  
 Ո՛ր, կապարե հորիզոն  
 Դաշտերի վրա...

Գնա՛, վորքան կամենաս —  
 Նույն աշխարհն է գորշ.  
 Վնչ մի ընկեր-բարեկամ,  
 Յեկ վնչ մի դրոշ.  
 Նույն ուղին է մոխիրե,  
 Նույն աշխարհը մոռթ,  
 Նույն հորիզոնը հրե,  
 Նույն մարդիկ անգուռթ...

Հենակներով վուսկորե,  
 Ուսին մի մաղախ,  
 Մոլի եր շըջում ու թակում  
 Խուզերը խաղաղ:  
 — Դոսերդ բաց, ս'վ հողի  
 Աշխատավոր խեղճ.  
 Միևնույնս ե՛՛յ յերթիկից  
 Կմտնեմ ներս:—  
 Լուսամուտից կմտնեմ,  
 Վարից ու վերից,  
 Դոսատակից կմտնեմ,  
 Պատի ճեղքերից...»  
 Յեվ մանում եր Մովը ներս,  
 Վոր դուրս չգա ել հանր...

«Հորովե՛լ, հորովե՛լ, հո՛,  
 «Հո՛ո, յեզը ջան...»

«Որհնյալ ե Աստված»,  
 «Բարձրյալ ե Աստված»—  
 Մեռնում եյիւր դու սովից՝  
 Աչքդ մնում եր բաց:—

Յեվ վորդեսզի դագաղում  
 Չմնար աչքդ բաց—  
 Դնում եյին աչքերիդ  
 Մի կտոր հաց:

Չեր կշտանում սակայն քո  
 Աչքը հացով այդ,

Յեզ քեզ թաղում ելին՝ բաց  
Աչքերով անթարթի—

Յեզ շիրիմի վրա քո  
Գրում եր ապա  
Մահը՝ վոսկրոս իր ձեռքով՝  
Մի քանի բառ.

«Աստ հողագործը հանգչի,  
Մաճկալը չարքաշ,  
Վոր մինչև մահ վաստակեց,  
Բայց վնչ մի անգամ  
Կուշտ չկերավ իր որում,  
Աչքը մնաց հացին, —  
Յեզ մեռնելիս՝ դագաղում՝  
Սովից՝ աչքը բաց եր...»

Հետո անձրևն եր թրջում  
Վոսկորներդ վողորկ,  
Յեզ փտած դանդդ ցնում  
Խոնավ հողով.  
Կշտանում եր մշտաբաց  
Այսպես աչքը քո...»

«Որհնյալ ե Աստված...»

«Բարձրյալ ե Աստված...»

«Հորովել, հո...»

Այս ամենը հիմա անցած է:  
 Այս ամենը հիմա հեքիաթի յե նման:  
 Ինչպես արան եր լինում հողմածեծ,  
 Այդպես հորձանքը մեր մի ուր շաչեց  
 Յեզ արմատից պոկեց անիմաստ  
 Այդ հորովելը հին: — Յեզ հիմա  
 Հնչում է յերգը ձեր միասնական ու դաշն  
 Դաշտերում համայնական ու անեզր,—  
 Այլ յերգով եք հիմա յեղում դուք դաշտ,  
 Ո՛վ անեզր հերկերի սերմնացաններ...

Ձեզ համար հնչեց մի ուր  
 Մի այլ հորովել,—  
 Յեկավ սրով, հրով,  
 Կյանքը խռովեց:  
 Յերկաթավոր յեկավ,  
 Դո՛ները թակեց,  
 Կարմիր դգեստ հագավ,  
 Կյանքը կրակեց:

Նա ալ նժույգ նստած  
 Համբավաբեր եր.  
 Յեկավ ինքնավստահ  
 Կարմիր նոյեմբերին.  
 Քաղաքներից յեկավ  
 Հեռու Հյուսիսի,  
 Դեն շպրտեց չարկամ,  
 Հիմար Հիսուսին:

Յե՛վ Հխոււսի հետ այն  
 Մզլած ու դեղին—  
 Նա գաշտերից քշեց  
 Վոսոխներին հողի.  
 Կանգնեց՝ պողպատ հագին,  
 Հզոր ու անահ,—  
 Յե՛վ «Բարձրյալի» տակից  
 Յելավ քահանան...

Ռես Մ'նոյի հետքից  
 Յելավ քահանան,  
 Հողը խաշակնքեց,  
 Վոր անբերրի մնա,—  
 Ուղեց վերջին անգամ  
 Կյանքը խոտիկ—  
 Յերգեց, արյունակամ,  
 Մահվան հորովել...

Այդ վերջին յերգն եր նրա,  
 Վերջին յերգն եր.  
 Բնու՛մ խեղդեց նրան.  
 Մեր ջղուտ ձեռքը.  
 Սրբեց նրանց աշխարհից,  
 Մեր ջղուտ ձեռքը,—  
 Հի՛մա հերկիր ու վարիք  
 Քո անսահման հերկը...

Հի՛մա դաշտ եք յե՛լնում դուք լիտսիրտ,  
 Ո՛վ աննզր հերկերի սերմնացաններ,  
 Հերկում եք ու վարում միտսին

Ձեր դաշտերը անեղբ:  
 Քշել եք դաշտերից արդեն  
 Շահագործող մարդուն,  
 Վոսոխին դժնի ու արնաքամ,  
 Յեզ հերկում եք հիմա զվարթուն  
 Ձեր հերկը համայնական:—

Յեզ դուք գիտեք հիմա՝ այս հերկը,  
 Վոր մշակում եք արդ ու վարում միասին—  
 Ձեր լուսավոր կյանքի, ձեր Գալիքի հերկն է  
 Ինչպես իմ յերգը—յերգ է այդ Գալիքի մասին:  
 Այդ հերկը ձգվում է անծայրածիր  
 Մեր հինավուրց Նորքից մինչև Սաղազական:—  
 Բարձրացել է այսօր մի հոյակապ հնձի  
 Մեր անսահման յերկիրը՝ հազած պողպատ վահան:—  
 Այն մոխիրե, այն նեղ ճամբեքի փոխարեն,  
 Ուր ճռլնչում էր սայլը հնավանդ—  
 Հիմա ձգվում են լայն ճանապարհներ անվերջ  
 Սառուցյալից մինչև Յերեան:  
 Յեզ այդ անվերջ, այդ լայն ճանապարհներով,  
 Վորոնց ծայրը այսօր հասել է Նորք—  
 Ընթանում են հանդուգն քայլերով  
 Սերմնացաններ՝ արե ու խնդուխտուն բերրոյ:—

Ճանապարհով այդ մեծ ու անծայրածիր,  
 Դառն անցյալի հանդեպ անհողդողդ ու աններ՝  
 Այսօր յելել եք դուք աննախընթաց հնձի,  
 Մի գալիքի խիղճի սերմնացաններ...

Այս հերկը — յերդ է կ' ընթացք, է' կամք է ու  
 հաղթանակ,  
 Յեզ տքնաջան ներկա յե բեղմնավոր, է' արևե  
 դալիք, —  
 Այս հերկը հերկում է որնիրուն մի անպարտելի  
 բանակ,  
 Ուր յուրաքանչյուր անդորձ — դասալիք է: —

Քաղաքներում ինչպես մեր վիթխարի,  
 Քաղաքներում մեր նոր  
 Յեխում են որը որին  
 Հսկաներ յերկաթավոր, —  
 Քաղաքներում ինչպես բազմահազար  
 Հարվածայինն է մեր հաղթանակը հարթում —  
 Այդպես հարթում էք դուք  
 Ճանապարհը, ուղին սրբազան  
 Վազվա վսեմ մարդու...

Նույն հերկն ենք մենք հերկում գրիչով ու մուրձով,  
 Յեզ արորով, խոփով յերկաթե. —  
 Հալոցքներում մեր թեժ, մեր դաշտերում տոթ,  
 Յեզ գրքերում մեր արդեն —  
 Նույն բերքն է բարձրանում ու հորդում,  
 Նույն յերգը յեռանդոս, —  
 Յեզ բոլորիս նույն ձեռքն է առաջնորդում,  
 Նույն Ղեկավարն անդող: —

Նա շարժում է քո ձեռքը, յերբ դու  
 Շաղում ես սերմը դաշտում,  
 Նա հանքում քանդում է անդուլ,

Յերբ փորում ե հարվածային վաշաբ,—  
 Նա շարժում ե ահա և՛ իմ ձեռքը,  
 Վոր ձեզ հեա մխասին յերգիս հուշալը ցանեմ,  
 Վոր անշեզ բարձրանա իմ բերքը,  
 Իմ տողերի հերկը անեզր...  
 Վոր յերգերիս կաավը ձեր թելերից հինեմ,  
 Վոր լինեմ հնի դեմ աններ,—  
 Ո՛վ դաշտերի անխոնջ հարվածայիններ,  
 Համայնական հերկի սերմնացաններ...

1933. ՄԼ. 24.

Ն ո ը ք

Գ Ա Լ Ի Ք Ի Վ Ո Ր Մ Ն Ա Գ Ի Ի Ն Ե Բ Ը .

Նրանք գալիս են գյուղերից ու քաղաքներից,  
Գալիս են հանքերից,  
Գործարաններից,  
Գալիս են յերկրի հեռավոր ծայրերից,  
Գալիս են բոլոր վայրերից.—  
Ղեկավարի կանչին, սերունդների կոչին  
Գալիս են նրանք հազարներով,  
Աշխատանքի այս մեծ գորակոչին  
Գալիս են յերկաթյա  
Շարքերով:

Անտառների նման հոծ ու խիտ,  
Ովկիանի հախուռն ալիքների նման,  
Գրոհելով մի նոր, մի կամքավոր ուղի,  
Վոր պայքարի բոցում ամրայնում և հիմա,—  
Ընդդեմ քամուն, հողմին, ընդդեմ հազար տարի  
Այս ափերին խփող մակընթացության—  
Ահա յելած մարտի մի վիթխարի՝  
Ընթանում են հանդուգն մի վեհությամբ:

Այնտեղ, այս ուժերի  
Ջրաբաշխման կետում,

Ակունքներում այս բարձր վոզեորության,  
 Ուր վերջանում է մշուշը տարիների,  
 Վորպես մռայլ մի ամպ,—  
 Այնտեղ, այնտեղ, այնտեղ,  
 Ուր կուտակած յեռանդը կատարող  
 Յեզ մի բուռնցք շինած գալիքների կարտը՝  
 Անշեղդրեն մղվում է դեպի գրոհ  
 Այս մարդկային վորտը,—  
 Այնտեղ, այնտեղ, այնտեղ,  
 Ուր կոփելու համար ապագայի ընթացքը  
 Կարծրանում է կամքը, վորպես գրանիտ,—  
 Այնտեղ, գալիք կյանքի  
 Այգաբացով հղի՝  
 Լեռնացի է ինքը—  
 Ղեկավարը։—

Յեղած համայն կյանքի  
 Ալեկոծվող բովից,  
 Պայքարներից յեղած հաղարամյա,—  
 Յեղած անդուլ յեփվող  
 Սոցիալական ծովից,  
 Վոր, ալեկոծ կրկին,  
 Մոնչում է հիմա,—  
 Իր պողպատյա անթեք մկաններով,  
 Իր ուղեղով, վոր պիրկ է, վորպես մկան,—  
 Տխտանային հայացքն հռոած հեռուն,  
 Դեպի անդասակարգ ապագան,—  
 Դասակարգի բոլոր հերոսական  
 Հանճարների ուղեղը է կամքը ամբարած—  
 Եւ վարում է այս մարտը,

Նա մղում է

Մեր բանակները մեծ գեղի վսեմ մի կյանք:—

Ո, դձև, յերկաթյա զեկավար,

Վոր վարում ես այս մարտը, վորպես տխտան,  
Կամ,

Գոյություն ունի՞ քս ընթացքի համար

Սնհաղթելի մի բան...

Ո, վճր, ո՞ վճր առաջնորդը,

Վճր զեկավարն արդյոք, վոր մղել է մարտեր—  
Յեղել է կարծր այսքան

Յեվ այսքան խո՞ր,

Յեվ իր մարտով այսքան ուղիներ է հարթել...

Նրանք գալիս են գյուղերից ու քաղաքներից—

Գալիս են հանքերից,

Գործարաններից,

Գալիս են յերկրի հեռավոր ծայրերից,

Գալիս են բոլոր վայրերից:

Գալիքների կանչին, Ղեկավարի կոչին

Գալիս են նրանք միլիոններով,—

Աշխատանքի այս մեծ զորակոչին,—

Յեվ մղում է նրանց, զեկավար.

Քո յերկաթյա կամքը—

Դեպի գրո՞ն:

Անծայրածիր յերկրի ստեպներից անծայր.

Ու լեռներից, ու բարձր քաղաքներից,

Ուղիներից, ուր դեռ մշուշը չի հնձած,

Ուր ապրում եր մարդը, վորպես գեղի,—

Ուր տարիներ բազում մահ էր միայն ցանել

Կյանքը — վոսկեհանդերձ արքաների ձեռքով, —  
 Ալփմ չեղնում ե կյանք մի հանձարեղ՝  
 Խորհրդային այս բոլոր արեղակի ներքո:  
 Յեզ թող յերգեմ յես այս իմ շառաչուն յերգով  
 Լեռնացումը այս վեհ, այս չմարող  
 Արեղակը՝ վառված այս յերեկո՝  
 Անեղբահան կամքի անմարելի հրով:

Ո՛ր, արեգակ, յերած այս յերեկո՝  
 Մեր գաշտերում հառնող քաղաքների վրա, —  
 Ո՛ր, Արևմտաք մեռնող, ուր ցերեկով  
 Լուսիններ են չեղնում — մահարեր ու մռայլ...  
 Ո՛ր, Արևմտաք շռայլ, ուր արքաները ծեր,  
 Ուր արքաները կուռ վոստանների,  
 Շռայլության, արյան սերմանողներն անեղբ,  
 Արքաները Վոսկու Տների  
 Կախաղան են չեղնում ու կործանում իրենց,  
 Ինչպես հետին դահիճ, կամ ավազակ, —  
 Ո՛ր, Արևմտաք, այսօր ուռճանում են քո մեջ  
 Փոթորիկներ, հողմեր, ուրախաններ անշեջ, —  
 Յեզ յերգում ե քեզ մահը — ահագանդ...  
 Ո՛ր, Արևմտաք շռայլ, — ցնցոտիներ,  
 Ցնցոտիներ հագած բազմություններ մեռնող...  
 Ո՛ր, հոգեվար, բայց բ՛ոլոր բազմություններ,  
 Վոր կերտելու յեք վաղը — մեզ պես — աշխարհ մի  
հոր...

Ո՛ր, առավոտ, վոր հին Արևմտաքում  
 Ուռճանում են՝ մեր բոլոր արեգակից վառված,  
 Մեր պայքարի, մեր մեծ ընդվզումի հեռքով

Արևմուտքում ծագող, ո՛ր, արեգակ անմար...

Նրանք գալիս են գյուղերից ու քաղաքներից,  
 Գալիս են հանքերից,  
 Գործարաններից,  
 Գալիս են յերկրի հեռավոր ծայրերից,  
 Գալիս են բոլոր վայրերից:—  
 Ղեկավարի կանչին, սերունդների կոչին  
 Գալիս են նրանք միլիոններով,—  
 Աշխատանքի այս մեծ զորակոչին  
 Գալիս են յերկաթյա  
 Շարքերով:—

Անապատ եր այստեղ, անջուր յերկիր:  
 Մահն եր թռչում այստեղ՝ համատարած:  
 Ունկընդրում եր այստեղ քամիների յերգին  
 Մի անոգուտ Չանգու ու մի անբեր Արաքս:  
 Այս խաների յերկրում, այս ցարական  
 Ծալրամասում, ուր կար միայն քամի,  
 Ուր տարիներ, դարեր այս հողերի վրա  
 Շոգն եր միայն չոգում՝ չար հովազի նման  
 Լափլիղելով թե կյանք, թե աշխատանք,—  
 Այս անապատ յերկրում բարձրանում ե հիմա  
 Աշխատանքի, կամքի հերոսական մի կյանք:  
 Այս անջրդի, այս շոգ անապատում  
 Պիտի յեկնեն հզուց ձյունապայծառ վարդեր  
 Ու վողկույզներ պիտի շոգան խայտուն:—  
 Այս գարունքի համար ճանապարհ ե հարթել,  
 Հարվածային ընկեր, քո յեռանդը արդեն,

Քո գոյամարտն անդուել...

Ո՛ր, ջո՛ւր, վոր հորդառատ  
 Այս քարերի միջով այսօր չելար մարտի.—  
 Քո կարկաչում, քո այդ հորձանուտում վարար  
 Յես վողջունում եմ շոխնդը  
 Մեր ընդհանսւր մարտի:—  
 Յես վո՛չ թե ձայնն եմ քո—քո կարկաչում լսում,  
 Այլ վորոտը յերկաթ յերակների,  
 Հարվածային անթիվ բանակների լեզուն,  
 Վտանաձայնը բազում մեր գնդերի...  
 Յես լսում եմ դոփյունը բանակների ըմբոստ,  
 Վոր գնդերով բազում, հազարանուն՝  
 Բարձրացել են կոչին դասակարգի մեր նոր,  
 Բարձրացել են մարտին մեր ընդհանուր...  
 Քո կարկաչում այսօր յես լսում եմ դոփյունը  
 Արեւուտքում չե՛լնող բանակների,  
 Վորոնք փորում են հինը  
 Ու հարթում են հունը—  
 Մեզ հետ մեկտեղ—գալիք գարունների:—  
 Քո կարկաչում լսում եմ Ղեկավարի ձայնը,  
 Վոր բոլորիս մարտի չե այսօր մղում:—  
 Հարվածային ընկեր,—այդ ան է, ան է.—  
 Մեր պալքարի վորոտը՝  
 Անպարտ ու բազմաբեղուն...

ԳՈՎԲ ԽԱՂՈՂԻ, ԳԻՆՈՒ ՅԵՎ ԳԵՆԵՑԻԿ ԴՊՐՈՒԹՅԱՆ

Ա

Որերում այս ջերմ ու հողմածեծ,  
Յերբ շառաչում են բանականեր մեծ,  
Յերբ Արարատից մինչ բարձրաբերձ  
Հիմալայները այն յերկնահեց  
Յելած պայքարի՝ շաչում են, տես,  
Դասակարգերի զորքերն հրկեզ, —  
Վոզևորությամբ պայծառատես  
Յերգում եմ ահա այս գովքը յես:

Բ

Յերգում եմ ահա այս գովքը յես  
Մեր որերում այս բազմաշառաչ,  
Յերբ բազմություններ հողմանալած  
Մղում են պայքար մի լուսազես. —  
Մղում են այնտեղ մի պայքար մեծ  
Ընդդեմ դասերի կործանարար,  
Դասերի այն սե, վոր յերկրում մեր  
Սրբեց մրբիկը այն փրկարար: —

9.

Ո, Հոկտեմբեր դու ազատարար,  
 Վոր ջրերի պես յելած հորդուն՝  
 Կյանքի լորձունքը քշեցիր դուրս  
 Յեզլ բերիլ մեզ կյանք մի անարատ,—  
 Յեզլ բերիլ մեզ կյանք մի լուսառատ,  
 Վորով հրկիզված՝ ահա անդուլ  
 Յեզլ պայքարում ենք, և՛ հար կերտում  
 Որ բեղմնավորող և ուր խնդուն:

7.

Դեռ պայքարներ կան մեր դեմ անդուլ,  
 Դեռ փոթորիկներ մեծադժվար,  
 Մակայն արևը այսորվա վառ  
 Ել չի հանդգնի բերելու վար  
 Յերկնահամարից մեր խնդավառ  
 Յեզլ վնչ մի վոսոխ ձեռքերով չար:—  
 Ո, ընդունակ ենք պահելու հար  
 Մենք մեր արևը արևափայլ:

6.

Այն մենք վառել ենք մեր գլխին հար  
 Ձեռքերով մեր ձիզ ու ջրապինդ,  
 Պայքարներով ենք վառել դժվար  
 Յեզլ գրոհներով մեծաշոխնդ:  
 Այսոր վառում ե նա արդեն խինդ  
 Յեզլ մեր աշխարհում անծայրածիր

Փռում ե հունձքի դանձեր անծիր՝  
Յեզ արվեստ, կ' յերգ, կ' բերք, կ' միրգ...

## 2

Ահա թե ինչու,— թեկուզ այնտեղ,  
Մեր անծայրածիր աշխարհից դուրս,  
Դեռ չի յերևում հորիզոն լուրթ,—  
Այլ ամպեր են բիրտ կուտակվում մութ,—  
Ահա թե ինչու, թեկուզ մենք մեծ  
Պայքարներ ունենք դեռ հեռակա—  
Հավատով անբիծ, անապական  
Յես կյանքի գովքն եմ յերգում պհա:—

## Է

Յերգում եմ ահա այս գովքը յես  
Խաղողի մեր բորբ ու լուսատեսք,  
Մեր գինու՝ պայծառ ու հրակեզ,  
Մեր արվեստների մեծահանդես:  
Յեզ դպրությունն եմ մեր յերգում յես,  
Գեղեցկությունը դպրության վես,  
Վոր որերում այս պարզևե մեզ  
Հույզեր հրահուր և մրգեր կեզ:

## Ը

Անհուն հավատքով դիմում եմ քեզ,  
Հանճար ճորտերի, արև՝ հրկեզ,  
Վոր շառաչելով մղում ես մեզ  
Դեպի ապագա մի այգամեծ:  
Դիմում եմ, վոր ինձ առաջնորդես  
Խոհերում իմ այս այնպեզ, ինչպես

Մեր կյանքի բոլոր հերկերում մեզ  
Առաջնորդում ես քո մաքով թեժ:

Թ

Չի առաջնորդում այլևս մեզ՝  
Յերգասաններիս, այն լուսերես  
Յերգի դիցունհին, վոր անմարմին  
Իջնում եր առաջ, դարերում հին,  
Վոգի յեր տալիս այրերին հին,  
Հանձար եր տալիս աչրերին հին,  
Ու մղում եր այդ այրերին հին  
Դեպի կյանք վսեմ ու յերկնային:

Թ

Ո՛ր, հելլենական դարեր վսեմ,  
Յերբ մարդկությունն իր խանձարուրում  
Դեռ յերգերով եր դիտում, խորհում,  
Յեզ յերգերով եր տնկում բույսեր,  
Յեզ յերգերով եր հերկում լուսե  
Իր արտաները, և իր նսեմ  
Ուղեղով դեռ նոր փորձում եր սև  
Կյանքի ընթացքը նախատեսել:

ԺԱ.

Սակայն քերթողն և դեռ այն ասել,  
Այն վուլիպացին վերջին, թե յերբ  
Կյանքում աճում և ամենուրեք  
Վոգի գործարար, իմաստ գորեղ,—  
Այլևս դու չես առաջնորդում,  
Դիցունհի յերգի, այլ ինքդ՝ դու

Առաջնորդվում ես, գնում արթուն  
Հետքերով Մաքի առաջնորդող:—

ԺԲ

Ո, փառք ուրեմն Առաջնորդին,  
Մեր Աեկավարին հրաքանքար,  
Նրա հանճարին արևափայլ  
Յեվ բանակներին յերկաթաքայլ:—  
Դիմում եմ յես քեզ, ո՛ր, Աեկավար,  
Վոզի հանճարեզ, հանճար անճառ,  
Վոր վառեցիր այս արևն անմար  
Յերկնակամարում մեր հողմահար:—

ԺԳ

Դիմում եմ յես քեզ, ո՛ր, ննջած հար,  
Բայց հար կենդանի հանճար անմար,  
Վոր մղելու յես մեզ անզաղար  
Դեպի բարձրունքներ արեգնափայլ:  
Ոգնի՛ր ինձ, ո՛ւժ տուր, ո՛ր, Աեկավար,  
Հյուսելու գովքս արևավառ,  
Վոր լինի գովքս թե՛ խոր, թե՛ հար  
Քո բաղմարեղուն վոգուն հարմար:—

ԺԴ

Վորքան կանգուն ե աշխարքը քար,  
Վորքան փայլում ե արևը վառ—  
Յեզել ե խաղող, վողկույզ պայծառ,  
Յեվ գինի՛ մաքուր ու կենարար:

Յեզր յերգ և յեղեղ աշխարհում հար,  
 Յեղեղ և արվեստ ստեղծարար,  
 Յեզր դպրութուն և յեղեղ դժվար,  
 Վոգու տքնութուն հանճարափայլ:

ԺԵ

Բայց չեմ գովերգում յերգով իմ այս  
 Յես հին դարերի խաղողն այն սև,  
 Յեզր հին դարերի գինին այն գեղիս,  
 Յեզր հին դպրության հունն այն դժվար:  
 Ո՛ր, տքնություն դու դարերի ծեր,  
 Վոր արքաներին միայն լուսել,  
 Վոր ճորտություն ևս սերմանել սև  
 Յեզր սին դպրությամբ վոսկեզոծել:

ԺԶ

Ո՛ր, միջնադարյան միջին խուցեր  
 Յեզր վարդապետներ դեմքով միջին,  
 Վոր դպրությունն ևք ստեղծել հին,  
 Սևակող գրքեր՝ մտքերով սին,  
 Դիսնաձայն տաղեր, հանգով խրթին,  
 Աղոթքներ՝ ձոնված անեղծ կույսին,  
 Վոր գեղջուկ մարգու գեղջուկ մտքին  
 Քաշեք պատնեղներ խավարածին:

ԺԷ

Ո՛ր, վեղարավոր դպիրներ հին,  
 Վոր ճաշակել ևք վողկույզն անգին,  
 Ճորտերի տնկած վողկույզն անգին,

Ճորտերի քամած արդար գինին—  
 Յեկ ձեր խուցերում՝ հանգով խրթին՝  
 Անեծքներ հղել գինուն, վորթին,  
 Յեկ ոամիկ, արդար ժողովրդին  
 Ժուժկալ ճորտութուն քարոզել սին։—

ժԸ

Ո՛ր, մուսլախոս դպիրներ սև,—  
 Դո՛ւ, Շնորհալի, և դո՛ւ, Նարեկ,  
 Դո՛ւք—մազաղաթյա և հանճարեղ,  
 Դո՛ւք—դարճուրեկի, ինչպես Դարեհ,  
 Դո՛ւք—պատան մտքի, դո՛ւք—անարև,  
 Վոր սրտի համար դարե՛ր, դարե՛ր  
 Կերտել եք դազաղ—պատյան քարե,  
 Յեկ վոգու համար—դժնյա տառեր։—

ժԹ

Ո՛ր, միջնադարյան մուսլ արև՝  
 Կախված կապարե յերկնքից մութ,  
 Միջերկրահանից մինչև Տղմուտ  
 Յերկիր քարաշատ, հերկեր ջերմոտ,—  
 Յեկ հրով կիզված մի ժողովուրդ՝  
 Կուռ դղյակների թե բիրտ, թե բութ  
 Բռնության ներքո՝ կեղեքված սուտ  
 Քարոզչությամբ այդ բազմահմուտ...  
 1

Ի

Գոռ դղյակներում նստած հարուստ  
 Աղատանիներ շվայտ ու ցոփ,

Զրահներ զարհուր ու արնացուք—  
 Յեվ սարուկների վերջին հացով  
 Բարձրացած վանքեր քանդակազոծ...  
 Վանքեր յերկնահեց ու խոյացող՝  
 Մոայլ դպրության հեղձուկ բոցով  
 Ճորտերի հոգին ընդմիշտ խոցող...

ԻԱ.

Յես չեմ գովերգում հանճարը ձեր,  
 Ո, ժանտաբարո դպիրներ ձեր,  
 Վոր մառ բարբառով դպրության մութ  
 Կոփել եք սարուկ մի ժողովուրդ,  
 Կերտել եք ձեռքով բաղձահմուտ  
 Վողու շղթաներ թե բարդ, թե բութ—  
 Յեվ ձեր դպրության դրքերը սուտ  
 Հոչակել թե վեհ, թե լույս, թե սուրբ:—

ԻԲ.

Զեր տքնությունը յեղել ե գուր.  
 Վորքան ել հմուտ ու հանճարեղ—  
 Զեղ չի հաջողվել սակայն մարել  
 Ճորտ ժողովրդի բարբառը սուրբ...  
 Ո՛, ոամիկ մարդու արդար լեզուն  
 Հունով հայրենի, չնայած ձեր  
 Դժնի դպրության—դարեր, դարեր  
 Իր մաքրամաքուր ջուրն ե տարել...

ԻԳ.

Դ՛նւք—պալատական, դ՛նւք—արդարեւ  
 Դ՛ժնի դպրութեան կոթողներ սին,  
 Թ՛շնամի կյանքին, սրտին, լույսին,  
 Հանուն սրբութեան անեղծ կույսի՝  
 Քերթողներ կրքի ու տուփութեան,  
 Դուք Հեք այսորվա մեր դպրութեան  
 Դարերից հորդող գեան այն փարթամ,  
 Վոր դեռ հավիտյան պիտի չերթա...

ԻԴ.

Ո, վնչ.—համընթաց ձեր դպրութեան,  
 Այդ հին դարերից, վորպես Դողթան  
 Վտակներ վճիտ ու վոսկեծայն—  
 Հասել են տաղեր մեզ տխրութեան  
 Յեւ գեղջկաբարբառ ուրախութեան...  
 Հասել են տաղեր գոսանական,  
 Հայրեններ ոամիկ ու ոամկական  
 Յեւ անտունիներ թափառական...

ԻԵ.

Ասում եմ չես գովք գուսանական  
 Քաղցրիկ յերգերին մեր վոսկեծայն,  
 Վոր յերգիչները թափառական  
 Յերգել են մթին դարերում այն:—  
 Մեր հին քերթութեանն այդ աշխարհիկ,  
 Վոր դայլայլներով բիրտ բարբառի,

Ընդդեմ վանքերի մուսյլ քարին—  
Յերգել ե սերը չնաշխարհիկ...

## ԻԶ

Յեզ ասուամ եմ գողք յես հիմա այն  
Մեր հայրեններին գեղջկաբարբառ,  
Վոր գինու գողքն են յերդում անչար,  
Վորթան վողկույզի հմայքն անձառ՝  
Քրթնաթոր մարդու վաստակն արդար:  
Ո՛, ուամիկ մարդու լեզու ճարտար,  
Ձայն աշխատանքի արեւովառ,  
Սիրո, խնդության գեղջուկ քնար...

Ո՛, խնդություն խեղճ՝ առանց առթի,  
Ո՛, ուրախություն ուամիկ մարդի,  
Ո՛, խաղող՝ քաղած վերջին հերթին,  
Ո՛, գինի՝ քամած վերջին վորթից,  
Վոր մութ վանքերի դանդից հեռու  
Հոսել ես խարխուլ այն խուղերում,  
Ճորտերի տրտում տնակներում,  
Նրանց յերգերում ու սրտերում...

## ԻԸ

Ո՛, ճարտար ճորտեր, ապրել եք դուք  
Խարխուլ խուղերում անձածք, անդուռ,  
Կամ քաղաքների պարսպից դուրս  
Խուլ քարայրներում այն ժայռակուռ,  
Արդար վաստակով ձեր ծանր ու սուրբ,

Քրտինքով անդին, տքնությամբ լուս,—  
 Յեզվ յերգել եք ձեր յերգերը հուր  
 Բարբառով վճիտ, հանգով մաքուր։—

ԻԹ

Ասում եմ յես գովք ապա արդար  
 Անտունիներին նխարարբառ,  
 Շրջիկ տաղերին, վոր դարեդար  
 Յերգել են հողե մեր գյուղերում,  
 Կամ քարաքանդակ քաղաքներում—  
 Այդ քաղաքների խուլ տներում,  
 Միրելիների սիրուց յեռուն՝  
 Իրենց հայրենի խուղից հեռու...

Լ

Ո՛ր, ճարտար ճորտեր,—մեր քերթության  
 Աղբյուրներ մաքուր,—դճուք, վոսկեձայն,  
 Վոր կարկաչելով հասած մինչ լայն  
 Մեր հորձանուտը տաղերգական,  
 Զուլվելով յերգին հովնաթանյան  
 Յեզվ սայաթնովյան խաղերին այն—  
 Յեզվ եք ակունքը իսկական  
 Կսր արվեստի քերթողական...

ԼԱ

Ո՛ր, ձեզանից են սկիզբ առել  
 Մեր ժողովրդի յերգերն հրե,  
 Մեր աշուղների այն հանճարեղ  
 Յերգերը վոսկուն, վորպես արե.

Յեւ ձեզանից և ապա սերել  
 Այն քերթութունը, վոր դեռ յերեկ  
 Լոռու տաղերգուն մեր արդարև  
 Դարձրեց պալծառ, ինչպես բյուրեղ:—

## 18

Ապա տխրադեմ յեկան հանդես  
 Յերգիչներ տխուր ու մոխրազես,  
 Յերգեցին տաղեր տխրահանդես,  
 Այնպես մեղմաձայն, տխուր աչնպես,—  
 Մինչ հանդես չեկա նվաստս— յես՝  
 Յեւ՝ վառված հրով աշխարհի կեղ՝  
 Յերգեցի յերգեր և՛ բորբ, և՛ թեթ,  
 Տաղեր հողմաձայն ու փրփրաղեղ:

## 19

Ինձանից հետո չեկան հանդես  
 Յերգիչներ չերկրի՛, հողի՛, հանքի՛,  
 Յերգիչներ՝ յելած նորոգ կյանքից,  
 Յերգիչներ խնդրուն աշխատանքի,—  
 Յեկան խուղերից այն անարև,  
 Հանքերից չեկան, յեկան քարե  
 Այն զնդաններից, ուր վոր դարեր  
 Միայն ճորտութունն էր բարբառել:—

## 17

Այրում էր մի սև, դժնի արև  
 Դարեր շարունակ, մինչև չերեկ  
 Քարե յերկիրը ձեր անտերև,  
 Մեր խրճիթները հողմայերեր:—

Մեր գլխին—բազում դաժան տերեր՝  
 Հայրենի, ոտար և զանազան,—  
 Արքաներ, վորպես վայրի գազան—  
 Յեկ խռովք, և՛ խաչ, և՛ խարազան...

## 16

Շահատակողներ ժանտաղածան.—  
 Թեյմուրլենկ՝ չարաչք ու չարածանա,  
 Զինգիզխան՝ զորքով բազմահազար,  
 Աբբասներ՝ զարհուր ու զանազան,  
 Յեկ ոուս արքաներ արնաբածան...  
 Ո՛ր, ժանտ արքաներ, ձեր սրբազան  
 Արշավանքներում վորքան տեսանք  
 Փորձանքներ դժնի ու տարածամ...

## 17

Սակայն ձեզանից հար անբաժան,  
 Հովանու ներքո ձեր սրբազան—  
 Ահա հայրենի տերեր դաժան՝  
 Ավելի զարհուր ու ժանտածանտ...  
 Ո՛ր, դշյակներում նստած՝ գազան  
 Ազատանիներ ժանտաբարո,  
 Իշխաններ՝ շվայտ ու անկարող,  
 Յեկ մութ մեկիքներ արնակարոտ...

## 18

Անլուր գերության ճանապարհով  
 Անցած դարություն գեղջկաբարբառ,  
 Վար հասած մինչև արևն այս վառ,

Այսորվա մեր բորբ արևն անմար—  
 Հորդում ես ահա, վորպես վարար  
 Գետ մաքրամաքուր ու կենարար,—  
 Յես քեզ եմ յերգում հանգով ճարտար  
 Ներբող նրբակերտ ու գովք արդար:

ԼԸ

Փանք մաքառումին քո անդադար,  
 Քո ուամիկ հանգին, վոր դարեդար,  
 Ճորտության միջից հունով դժվար,  
 Կտրելով մթին մի ճանապարհ—  
 Հասել ե ահա մինչև մեր վառ,  
 Այս արեգակը ստեղծարար,  
 Վոր վառվել ե հար, վառվել ե հար,  
 Բողբը ճորտերի փառքի համար:—

ԼԹ

Փանք արևին մեր, վոր հիմա վառ  
 Լուսավորում ե հրով բերբի  
 Անցնող խավարը մեր խուղերի,  
 Խուլ նկուղները քաղաքների,  
 Յեվ լեռնաշխարհում ահա մեր հին  
 Շաղում ե շողեր անմարելի,  
 Վոր ճորտության մեջ հեծող գերին  
 Դառնա իր բախտի տերը վերին:—

Խ

Ո, դուք, հեռավոր յեղբայրներ իմ,  
 Քերթողներ գեղջուկ հաչրենների,  
 Յերգասան ճորտեր՝ մաքով գերի

Ձեր ժամանակվա որենքների,—  
 Ահա բարբառը ձեր յերգերի,  
 Հասած մինչև ինձ՝ իմ ձեռքերից  
 Անցած նորանոր յերգիչների—  
 Հորդճւմ և արդեն իր ասիերից...

ԽԱ.

Ո՛ր, ճարտար ճորտեր, յեթե դարեր  
 Ճորտությունն անգամ այն անարև  
 Չիեղդեց բարբառն այս հանձարեզ,  
 Վոր վտակներով բազմարարև  
 Հասավ մինչև մեր որն այս հրե—  
 Ապա արևի ներքո այս մեր,  
 Ուր չկան տերեր, չկան ճորտեր—  
 Վորքան հորդառաստ պիտի հորդե...

ԽԲ:

Ու պիտի գնա հիմա այն դեռ  
 Մինչև ովկիանը գալիք կյանքի,  
 Ուր մարդկությունը վողջ աշխարհքի,  
 Առանց դասի ու դասակարգի,  
 Լծված խնդագին աշխատանքի  
 Պիտի իր անհուն յերկիրն հերկի,—  
 Յերկիր արևի, գինձու, յերգի—  
 Յեղ մտքի, վողճու բեղուն բերքի...

1932. VII. 12—16.

ԲՈՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ

52

Ամբոխները խելագարված	5
Ինչի ապագան	20
Բրոնզե թևերը կարճից դալիքի	23
Յերդ ժողովրդի մասին	27
Ամենապոեմ	40
Մանկալ Սաքոյի պատմութիւնը	68
Կամուսարների պատը Փարիզում	83
Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի դույզ կտշիկի մասին	102
Լենին քերթն	108
Լենինն ու Ալլան	117
Ելեգիա, գրված Վենետիկում	125
Իմ ընկեր Լիպան	141
Բալլադ զեղջիական	146
Բալլադ դնդապեա Տոմսոնի, կոմյերիտ աղի և դործադուլի մասին	150
Բալլադ քանդակի մասին	154
Մմբապեա Շախարը	162
Սասունցի Դավիթը	178
Համայնական դաշտերի սերմնացաններ	209
Դալիքի վորմնադիրները	221
Իոյք Խաղողի, Գինու և Գեղեցիկ Դպրութեան	227






ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0041666

239

ԳԻՆԸ 1 Դ. 50 Կ.  
ԿԱԶՄԸ 50 Կ



Եղիշե Չարեն

**ՊՕԶՄԻ**

Երևան, Հայաստան